





ԼԵՒՈՆ ՀԱՆԹ

125

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ

ԶՈՐՐՈՐԴ ՊՐԱԿ

491.99 - 5 283 ...

t-30 Conto p, f

Eligible for purchase in place of goods

Expenditure: 7p 4. 100.

125

131995

6-30

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ

ԶՈՐՐՈՐԴ ՊՐԱԿ

Դպրոցական ուղեւորի տարուան համար

Կազմեց

ԼԵՒՈՆ ՀԱՆԹ



ՏՊԱՐԱՆ

ՀԱՄԱԶԳՈՅԻՆ ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՊԷՅՐՈՒԹ

1950

ՉՈՐՐՈՐԴ ՊՐԱԿ

ԼՐԱՅՈՒՄԸ ԲԱՌԱՅԻՒՍՈՒԹԵԱՆ

Առաջին հատուած

ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՆԵՐՔԻՆ ՔԱԺ-ԱՆՈՒՄՆԵՐԸ

Ա. ՆԻԹԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

Ա. Բերականութիւնը կ'ուսումնասիրէ լեզուի մը յօրինուածքը: Լեզուն կազմող տարրերն են բառերը. որով լեզուի մը յօրինուածքին ուսումնասիրութիւնը կը դառնայ այդ լեզուի բառերու կազմին ու անոնց կապակցութիւններուն ուսումը:

Լեզուի մը բառերը ըստ իրենց արտաքին ու ներքին կազմին կը բաժնուին երեք տեսակի՝ հղովուող բառեր, խոնարհըող բառեր և անփոփոխ բառեր. այսինքն՝ անուններ, բայեր ու անթեք բառեր:

Անթեք բառերը ընդամենը քանի մը տասնեակ են և երկրորդական դերեր միայն ունին նախադասութիւններու մէջ: Տասնեակ մը իբրև կցորդ կը գործածուին, մէկ-երկու տասնեակ իբրև շաղկապ, մէկ-երկու տասնեակ ալ իբրև մակբայ: Անոնց թէ՛ արտաքին և թէ՛ ներքին կազմի ու դերի մասին հարկ եղածը արդէն ծանօթ է մեզի:

Բայերը ըստ իրենց արտաքին կազմի, տեսանք, որ կը բաժնուին հինգ խումբի՝ պարզ բայեր, միջնադիր բայեր, ասոյթային բայեր, բաղադիր բայեր ու բացասական բայեր: Իսկ ըստ իրենց սեռի, այսինքն անուններուն վրայ ունեցած իրենց ներքին ազդեցութեան՝ կը բաժնուին նորէն հինգ տեսակի՝ չեզոք, ներգործական, կրաւորական, անցողական ու փոխադարձ, որ նմանապէս բաժնուած ենք արդէն:

Գալով անուն եզոզ բառերուն անոնց կրած արտաքին փոփոխութիւնները, յայտնիքն հոյովումը միայն դարձած է լուրջ աշխատութեան նիւթ . իսկ անուններու ներքին . ըստ իմաստի խմբումներուն և զանազանութիւններուն մինչև հիմա մտակցած ենք շատ թեթեւակիւ :

Տեսանք . որ անունները ըստ իրենց էութեան կ'որոշենք երեք տեսակի՝ բուն անուններ , դերանուններ և յատուկ-անուններ :

Անոնցմէ դերանունները իրենց յատուկ ներքին իմաստը չունին . պարապ ամաններ են , անբովանդակ , որ ինչքան քիչ գործածենք՝ այնքան կը կենդանանայ լեզուն : իսկ յատուկ-անունները՝ իմաստ մը ունենան թէ ոչ՝ միեւնոյն է . այդ իմաստի արտայայտութեան համար չէ , որ կը գործածենք :

Այնպէս որ միայն բուն անուններն են , որոնք ունին իրենց ներքին բովանդակութիւնը և ըստ իմաստի գործածութիւնը :

Անունները ըստ իրենց ներքին էութեան և ըստ իմաստի գործածութեան բաժնուլուծած են երկու մեծ ճիւղերու՝ գոյական անուն և ածական անուն :

Հիմա կ'անցնինք ահա՝ գոյական անուններու և ածական անուններու ներքին բաժանումներուն՝ անուններու ներքին կազմի ուսումնասիրութիւնն ալ աւելի խոր ու աւելի լրիւ դարձնելու համար :

Բ. Այն ամեն իրերը , երեւոյթները և զգայութիւնները , որոնք մեր մտքի ու դիտողութեան կողմէն իբրեւ զատ գոյութիւն մը կը նկատուին և մեր լեզուին մէջ իրենց առանձին անունը ունին , կ'անուանենք գոյական անուն :

1. Գոյականները կ'ըլլան նիւթական կամ վերացական :

Նիւթական են այն գոյական անունները , որոնք մէկէ աւելի յատկութիւններու գումար մը կը ներկայացընեն և ո՛չ թէ միայն մէկ յատկութեան մը անունը :

Նարինջ մը ունի ձև , գոյն , որոշ խորդւթութիւն , ամրութիւն , մեծութիւն , ներքին պատուարներ , կուտ , հեղուկ , համ , հոտ : Այդ բոլոր յատկութիւններու և ստոնց նմաններուն գումարն է , որ կ'արտայայտենք «նարինջ» բառով : Եւ ստոր համար ալ «նարինջ» բառը նիւթական գոյական է :

Այդ տեսակի շատ մը յատկութիւններու գումարը եզոզ անունը կ'անուանենք նիւթական , որովհետեւ ինչ որ նիւթ է և նիւթեզէն անպայման շատ մը յատկութիւններ ունի իր վրայ :

Կեանքի ու բնութեան մէջ զատ ու առանձին յատկութիւններ գոյութիւն չունին : Չկայ բան մը , որ միայն կ'որ ըլլայ , միայն ազի ըլլայ , միայն եփելու համար ըլլայ , այլ միշտ այս ու նման յատկութիւններու որոշ փուխ մըն է :

2. Նիւթական գոյականները երկու ուղղութեամբ կ'ենթարկուին ստորաբաժանման :

Առաջին տեսակի բաժանումով կ'ըլլան իջական կամ երեւակոյական:

Գոյական մը իրական է, երբ դուրսի աշխարհին մէջ իրաւ որպէս գոյութիւն ունի, այսինքն երբ մենք մեր զգայարանքներով կրնանք տեսնել, լսել, շօշափել իրենց գոյութիւնը:

Գոյական մը կը դառնայ երեւակայական, երբ անոր իրապէս գոյութիւն ունենալն ու չունենալը մեր զգայարանքներով ստուգել չենք կրնար: Բայց կը կարծենք, կ'ենթադրենք, կը հաւատանք, որ անոնք կան իրականութեան մէջ: Եւ կամ խաղի համար այնպէս կը ձեացնենք, որ անոնք իբրեւ թէ գոյութիւն ունին, կան, կ'ապրին աշխարհիս երեսին:

Այս տեսակ երեւակայական գոյականներ են հրէշ, փերի, վիշապ, դէ, աստուայ, հրեշտակ, դժոխք, արքայութիւն, մութ աշխարհ, մազէ կամուրջ, ձիամարդ, երեք-գլխանի արծիւ, հրեղէն ձի, թռչող գորգ, ամեն ինչ տեսող հայելի, աներևոյթ դարձնող գլուխ:

Եւ ընաւ կարեւորութիւն չունի քերականական ու տրամաբանական տեսակէտէն, թէ մեր նիւթական գոյականը իրական գոյութիւն մըն է, թէ՞ միայն մեր երեւակայութեան ստեղծածը՝ ըլլալ սխալանքով. ըլլալ խաղով: Մեր մտքին մէջ ասոնք բոլորն ալ շատ մը յատկութիւններու գումարով կազմուած ուրոյն ամբողջութիւններ են, ասոնք բոլորն ալ նիւթական գոյականներ են, իբրեւ նիւթական ըմբռնուած գոյութիւններ են:

3. Նիւթական գոյականներու այս առաջին տեսակի ենթաբաժանումը, եթէ աւելի կրօններն ու գեղարուեստները կը հետաքրքրէ, նիւթական գոյականներու երկրորդ տեսակի ստորաբաժանումը աւելի քիտական մտածումին բաւարարել կը ձգտի:

Իրարմէ կը զատենք անշունչ իրերը շնչաւոր իրերէն. այսինքն ապրող, աճող ու կեանք ունեցող արարածներ են, թէ՞ աճումէ ու կեանքէ զուրկ գոյութիւններ, միեւնոյն է, ըլլան իրական կամ երեւակայական:

Անշունչ նիւթականները կրնան անգամ մըն ալ ստորաբաժնուիլ նոյնելով թէ քնութիւնն է ստեղծած թէ՞ մարդկային միտքն ու ձեռքերը. այսինքն կ'ըլլան քնական իրեր կամ արուեստական:

Բնութեան ստեղծածները զանազան նիւթեր են, տարբեր, հիւթեր, հանքեր, վայրեր, դիրքեր ու կլիմայական ու երկնային երեւոյթներ. ինչպէս և բոյսերու ու կենդանիներու ամեն տեսակի կառուցումներն ու արտադրութիւնները:

Արուեստական են մարդկային ստեղծագործութեան ուրաւագրած նիւթերը, իրերը, դէնք, գործիք, ուտելիք, հագնելիք և ամեն տեսակի կերպում ու կառուցումներ:

Իսկ ընչաւոր նիւթականները բնական կերպով կը բաժնուին բոյս ու կենդանի իրենց բոլոր տեսակներով և ասոնց հաւաքականութիւնները արտայայտող բառերով, մարդն ու մարդկային ցեղերն ալ մէջը հաշուած:

1. Դի՛ր հետեւեալ բառերուն դեմ իրենց յակամիւ յակուրիւններէն ամենէն կարեւորները:

Հաւ. ջուր. գրիչ. շրթունք. արև. պարտէզ. դէմք. սեղան. արջ. կօշիկ. եկեղեցի. դգալ. ժայռ. գետ:

2. Դի՛ր հետեւեալ յակամիւ յակուրիւններուն դեմը իրենց արտայայնել ուզած գոյական սնունդը:

Կլոր, կաթնագոյն, դէմքի նմանող, երկնային, գիշերները երևցող, լուսատու:

Երկաթէ շինած, կողպէքին լեզուակը դարձնող, դռներ բացող: Անգոյն, անհամ, թափանցիկ, հեղուկ, սննդարար:

Ծալլած թուղթեր, վրան մուրով գիրեր տպած, մարդկային մշտածումներ պարունակող:

Երկաթէ, ծալլուող բերաններով, գրպանի մէջ պահելու համար իրեր կտրելու յատկացուած:

Մուտքերը գոցելու համար, շարժական, բռնելու կանթով ու կողպէքով:

Հովէն ու թացէն պաշտպանող, լոյսի համար թափանցիկ, բարակ շերտերով, ողորկ:

3. Խնչ բան է հանելուկը: Ինչո՞վ կը թարբերի նախորդ հրահանգէն:

4. Քու գիտցած հանելուկներէդ գրե՛ք երեք հոս:

5. Դե՛հ՝ էանի մը տուով կարն բացատրուրիւն մը, թէ վարի օրինակներուն մէջ քնդգծուած բառերը որո՞նց համար իրական գոյականներ են, որո՞նց համար՝ երեւակայական:

Սպանացիք առաջին անգամ ոտք դրին Հարաւային Ամերիկա. և իրենց հետ բերած ձիերը հեծած առաջացան ցամաքին ներքերը: Տեղադրի բնիկ ժողովուրդը կը հարծէր թէ մաքուր ու ձի միասին մէկ աւարած մըն է, ձովէն ծնող նոր տեսակի աստուածային ոգիներ:

Արդէն հին յոյներն ալ համոզուած էին. որ իրենց լեռնային անտառներուն մէջ ձիամարդիւր կ'ապրէին, որոնք մէջքէն վար ձի էին և մէջքէն վեր՝ կուրծքը, գլուխն ու թևերը՝ բոլորովին մարդկային: Յոյները գիտէին, որ ձիամարդերը աստուածներէ սերած առանձին սերունդ մըն էին. և մարդոց համար մեծ վնաս մը չունէին, եթէ բարկացած չըլլային:

Իսկ խաղողական ովկիանոսի կղզիներուն վրայ ապրող թխպէմ

վայրենի մարդիկը, երբ առաջին անգամ կը տեսնէին ճերմակամորթ մարդիկ, որ նստերէն նաւակներով ցամաք կ'ելլէին, և երբ մանաւանդ կը տեսնէին ու կը լսէին անոնց ձեռքի սարսափելի փայտեղանց պայթիլն ու ծուխ ու կրակ արձակելը՝ սարսափահար կը նետուէին գետին ու կ'երկրպագէին: Երբ ու ամենակարող աստուածներ էին երկընքի ու ծովու ջրերէն իջած, որ պաշտել պէտք էր ու հաշտ պահել:

Արդէն հին յոյներն ալ իրենց աստուածներէն ամենէն մեծը՝ Զեւսը՝ կը պատկերացընէին կեցած շիտակ ու սպառնալից՝ երկինքի կայծակները իր ձեռքը բռնած: Երբ բարկանար կամ կռուի բռնուէր կը նետէր այդ շանթերը իր հակառակորդներու գլխուն:

Յ. Դրե՛ կ'եց նախադասութիւն, ուր իրական նիւթական գոյականներ գտնուին: Իրե՛ կ'եց նախադասութիւն, ուր երեւակայական նիւթական գոյականներ խօսքի գան:

Չ. Դրե՛, այդ ինչպէ՞ս է, որ մարդոց երեւակայութեան հնարած եւ իրականութեան մէջ գոյութիւն չունեցող բաները նիւթական գոյականներու շարքը կը մտնեն:

Յ. Բացառե՛ գրաւոր. հետեւեալ պատմութեան մէջ «վարդեր» իրական են քե՞ երեւակայական, «նշաւո՞ր» են քե՞ անցունչ, բնական են քե՞ արուեստական. ե՞րբ եւ որո՞ւ համար:

* * *

Նիւ-եորքի մեծ ու շքեղ ճաշարաններէն մէկուն մէջն էինք: Ելեքորական առատ լոյսերուն և հարուստ կահերուն մէջէն իմ ուշադրութիւնս զբաւեցին բոլոր պատերուն վրայ փոքրիկ ջրամաններու մէջ դրուած հրաշալի վարդի փունջերը:

Ի՞նչ սքանչելի գոյներ, ի՞նչ թարմութիւն և ի՞նչ նուրբ ճաշակով կապուած փունջեր:

Հիացումս յայտնեցի ընկերոջս:

— Այո՛, — ըսաւ ընկերս շատ անտարբեր և գործի մարդու ձևով մը: Այո՛, հիմա Ամերիկայի մէջ այդ արուեստը շատ է զարգացած. սքանչելի կը շինեն:

— Ինչպէ՞ս, արուեստական են. — բացականչեցի ես՝ աւելի ուշադիր դիտելով պատերուն փունջերը:

Եւ երեւի դէմքիս վրայ մեծ հիասթափում էր նկարուած, քանի որ ընկերս ըսաւ թեթեւ ժպտով մը.

— Ինչո՞ւ այդպէս զարմացար. ի՞նչ կարեւորութիւն ունի նա. յողին համար՝ իրական են եղեր, թէ արուեստական. բնական է, որ զեղեցիկ են ու աչքերդ կը շոյեն:

— Ա՛, ո՛չ այլևս. — պատասխանեցի ես կտրուկ:

— Լա՛ւ չեմ ըմբռներ: Երեւակայէ՛, որ քեզի չըսէի արուեստական ըլլալը: Ի՞նչը փոխուեցաւ:

Ծառայող ազնիվը այդ վայրկեանին բերաւ մեր պատուիրած ուս-
տելիքները ու շարեց սեղանին վրայ:

— Նայէ՛ հոս. — ըսի մատնանիչ ընկելով սեղանը: — Նրեւակա-
յէ՛, որ այս ուստելիքները իրական չըլլային, այլ բոլորն ալ մոմէ ու
կաճէ շինած. ի՞նչ պիտի զգայիր. տարբերութիւնը նորէ և չես
ըմբռներ:

— Ատիկա տարբեր է. — ըսաւ ընկերս խնդալով — տսիկա ու-
տելու համար է. վրան նայելու համար չէ. ասոր տարբերութիւնը
չատ լաւ կ'ըմբռնեմ:

Բ. ՎԵՐԱՑԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

Ա. Բնութեան ու կեանքի մէջ զոտ ու մեկուսի յատկութիւններ
գոյութիւն չունին, այլ միշտ իրերը կը ներկայանան մեզի իրրեւ ա-
ւելի կամ նըւազ բարդութեամբ յատկութիւններու փունջ մը:

Բայց իմացական արարածներս այդ փունջերը հետզհետէ կը քա-
կենք և անոնց ունեցած տմեն մէկ յատկութիւնը կ'առանձնացընենք
իրրեւ ուրոյն գոյութիւն մը:

Այդ առանձնացումը կը կատարուի երկու անհրաժեշտութեամբ:

Նախ՝ կենդանական միաքը թէն միաժամանակ և իրարու կապ-
ուած, բայց իրարմէ անջատ ճամբաներով կ'ըստանայ շատ մը տպա-
ւորութիւններ, քանի որ մեր զգայարանքներէն տմեն մէկը իրեն
յատակ գրգիռները միայն կը բռնէ ու կը հասցընէ ուղեղին: Այնպէս
որ մեր հոգիին մէջ զգայութիւններու առանձնացումը բնական վի-
ճակ մըն է:

Երկրորդ՝ մեր միաքը շրջապատող մարմիններն ու երեւոյթները
գիտելու տա են հարկադրեալ է մարմնի մը երբեմն մէկ, երբեմն
միւս կողմը, երբեմն այս, երբեմն այն երեսը աչքի առաջ ունենալ:
այդպէս ալ երբեմն մէկ, երբեմն միւս յատկութիւնը իր ուշադրու-
թեան տակ պահել. կա՛մ անոնց վիտակէն ու վտանգէն խռուափիլ կա-
րողանալու համար, կա՛մ այդ կողմն ու յատկութիւնը օգտագործել
կարողանալու համար, կա՛մ վերջապէս դէմի իրն ու երեւոյթը լաւ
ըմբռնել և յստակ արտայայտել կարողանալու համար:

Սկիզբները բնականօրէն շատ աղօտ ու խախտու կերպով կատար-
ուած այդ առանձնացումներուն վրայ, երբ օր մըն ալ մարդը յատուկ
բառ մը կը փակցընէ՝ կ'ըստացուի անա՞ նոր տեսակի անուն մը:

Նոր տեսակի անուն մը, որ մեր մտքին մէջ իրրեւ առանձին բառ

մը զառ զոյութիւն ունի, իսկ դուրսը իրականութեան մէջ կայ միայն իբրեւ մարմնի մը կամ երեւոյթի մը մէկ անբաժան մասը, կողմը, երեսը:

Դուրսի իրականութեան տեսակէտէն մեր նոր բառը ածական անուն մըն է, քանի որ նիւթական գոյականի մը աւելցած մէկ յատկութիւնը կ'անուանէ. իսկ մեր հոգիին մէջ այդ առանձնացած ու իր սեփական բառը ունեցող յատկութիւնը արդէն ինքն իր համար սուրոյնութիւն մըն է, ինքնուրոյն գոյութիւն մը:

Գոյական մըն է նոր, բայց ո'չ նիւթական, իրական գոյական մը, այլ իրական գոյականի մը վրայէն հանուած ու գատուած վեճացական գոյակաւ մը:

Բ. Եւ վերացական գոյականները իրենց վրայ կը պահեն իրենց ծագման ու էութեան այդ երկուութիւնը ընդմիշտ: Ատոնք բոլորն ալ մէկ կողմէն ածական են և իբրեւ ածական կը գործածուին, միւս կողմէն ալ վերացական ուրոյն գոյութիւններ են ինքնին և իբրեւ վերացական գոյական կը գործածուին:

Առաջի ընթացքին նախադասութեան մէջ այդ երկու դերերէն ո՞րը խաղալը ամեն անգամ միայն իմաստով որոշելու ուղեւը յաճախ կը դժուարանայ, բարեբաղդութեամբ օգնութեան կուգայ քերականութիւնը:

Եթէ վերացական բառը հոլովուած է կամ յօդ ու կցորդ ունի իր վրայ, ըսել է իբրեւ գոյական է ըմբռնուած. օրինակ՝ «Ամեն մարդ ալ կը սիրէ ճոր, կը գրաւուի քարմէն և կ'ոգեւորուի կսրմիրով». «Թարգէլ՝ մեծերդ, որ յարգելիս փոքրիկներէդ». «Ճամբան վերջապէս ցնիւրէն ելաւ չորք»:

Եթէ վերացական բառը գործածուած է անյօդ, անկցորդ ու անհոլով՝ պէտք է նայինք իրեն յաջորդող գոյականին: Կամ վերացական բառը դրուած է գոյականի մը վրայ՝ կը նշանակէ ինքը ածականութեամբ է առնուած: Կամ դրուած չէ ուրիշ գոյականի մը վրայ, ինքը առանձին է՝ կը նշանակէ առնուած է իբրեւ գոյական: Այսպէս, օրինակ, գոյականութեամբ են գործածուած՝ «Մանր ու մանր երբ կու գան իրարու, կը դառնան խոտոք», «Խեղճ կնոջ կեանքը դարձաւ սեւ», «Կաւսիլի, կաւոյոյ ու ցարնջագոյն մեր ազգային գոյներն են», «Ընդունակ տղայ է, բայց ճգես մնաց դժբաղդութեամբ», «Ձեր դրացին քաջ է ու համարձակ», «Ամեն ինչ որ պզտիկ է կը սիրուի»:

Գ. Ինչպէս որ վերացական բառերը երբեմն իբրեւ գոյական, երբեմն իբրեւ ածական կ'ըմբռնուին և իրենց էութեան մէջ բնածին երկուութիւն մը աւելին մշակուան, այդպէս ալ վերացական բառերը ունին նաև երկրորդ տեսակի բնական երկուութիւն մը իրենց իմաստի ըմբռնումին մէջ. մէկ կողմէն իբրեւ վերացականութիւն կ'ընդունուին միւս կողմէն իբրեւ նիւթական գոյութիւն:

Այս տեսակէտէն մասնաւոր ուղղութեան պէտք է առնուի երեք պարագայ:

ա. Որոշ զգայարանքէ մը իբրեւ զատ յատկութիւն մը մեր մեծ ուղեղին ներկայացող զգայութիւնները՝ մէկ կողմէն դիտուած վերացական գոյականներ են անշուշտ, քանի որ մէկ յատկութեան մը առանձնացումն են: Բայց միւս կողմէն ալ դուրսէն պատրաստ եկած և մեր մտքի ներքին վերլուծական աշխատանքին արդիւնքը չըլլալով շատ աւելի առարկայական, շատ աւելի իրական ու նիւթական բանի մը տպաւորութիւնը կ'ընեն, տեսակ մը կը նմանին նիւթական գոյականներուն, բնականէն նիւթականութիւն մը ունին իրենց վրայ: Օրինակներ՝ «Բարկութենէս շուրջ» կարմիր կը տեսնէի», «Մանիւշակագոյնը կարծես կապուած ըլլայ համեստութեան»։ «Այս ամսուան թափը անտանելի էր», «Իսկ ամիս մը առաջ պտուղները ցուրտ տարաւ», «Երբ մուրը կոխեց, լեռներէն մութին հետ իջանք հաւրերը», «Ըրած յանդիմանութիւնը շատ էր կծու», «Ամէն բանի մէջ ալ քու վարժունքդ միշտ գաղջ է եղած», պէտք է քիչ մը աւելի թափ վերաբերուիս», «Այո՛, սրտին, խօսքին ու մաղբրուն վրայ նստեր է արդէն գործը», «Ճշմարիտ և շատ սուր էր ըրած նկատողութիւնդ», «Ուսումն ի՞նչ ընէ՝ իր զգացումներն են օտարալի»:

բ. Որոշ վիճակի տէր եղող շատ մը անձերու և իրերու անուններ առնելած են իրենց գլխաւոր մէկ յատկութենէն: Խուլ, կաղ, աղքատ (աղքատ), նստարան, սերմ, կանաչի, խոհանոց, սուրբ, գող, փոս, սուր, ծառաստան, մատնոց, գոգնոց:

Արդ՝ այս բոլոր անունները իրենց ծագումով ու խորքի իմաստով վերացական գոյականներ են: Բայց անգամ մը կազմուելէն ետքը՝ հիմա արդէն ամեն մէկը մարմին ունեցող, այսինքն բազմաթիւ յատկութիւններու փունջ մը ներկայացընող կենդանի նիւթական գոյականներու համար կը գործածուին:

գ. Կայ և հակառակ ճամբան. որոշ նիւթական գոյականներ փոխաբերաբար կը դառնան իրենց մէկ գլխաւոր յատկութեան արտայայտիչը և կը գործածուին իբրեւ վերացական գոյական:

«Յերսան» բառը նիւթական գոյական մըն է. բայց երբ կ'ըսեմ՝ «Այս ինչ թերթը այս ինչ կուսակցութեան բերանն է»՝ «բերան» բառը կը դառնայ վերացական գոյական մը. այսինքն մէկ յատկութեան մը արտայայտիչը, որ այս պարագային է կուսակցութեան մը կործինները, դաւանանքը, կամքը արտայայտելու առանձնայատկութիւնը:

Այդպէս ալ հետեւեալ օրինակները. «Գրքերուս դարակը եօթը ալի ունի», այսինքն եօթը յարկ. «Ո՞վ էր այս խումբին գլուխը», այսինքն ղեկավարը. «Մատիտին ֆիթը կտորըւեր է», այսինքն ծայրը:

«Փոքրիկդ շատ անուշ լիկու ունի», այսինքն խօսուածք. «Ոտանաւորին երրորդ տուրք», այսինքն հատուածք. «Մեր բանաստեղծի մուսան (գեղարուեստի աստուածուհին) եկեր է», այսինքն ոգեւորութիւնը «Շատ բեղուն գրիչ ունի», բարեկամ, այսինքն գրական արտադրութիւն. «Լեկուար մրցումի էր ելած Ֆետին հետ», այսինքն հոգեւորականութիւնն ու աշխարհական գասակարգը. «Մարդուն տեսելը խաւարեցաւ», այսինքն կեանքը. ապրիլը:

Դ. Այս ամեն տեսակի նիւթականէ-վերացական և վերացականէ նիւթական, երբեմն նիւթական, երբեմն վերացական առումով գործածուող անուններուն դէմ՝ լեզուն ունի նաև իր զուտ վերացական գոյականները:

1. Ամեն ածական և ածականաբար առնուած ամեն գոյական իր վրան առնելով ուրիշ մասնիկը կը դառնայ զուտ վերացական գոյական մը. Տաք-ութիւն, դեղն-ութիւն, սր-ութիւն, մեծ-ութիւն, աղ-քատ-ութիւն, գող-ութիւն, սրբ-ութիւն, սա-ութիւն:

2. Ձուտ վերացական գոյականներ են նաև, երբ առաջին աստիճանի վերացականութիւններուն վրայէն երկրորդ ու երրորդ աստիճանի վերացական ըմբռնումներու կը հասնինք:

«Դեղին», «սև», «կարմիր» առաջին աստիճանի վերացականութիւններ են. իսկ ատոնք բոլորը ընդգրկող զայն բառը արդէն աւելի բարձր աստիճանի վերացականութեամբ զուտ վերացական գոյական մըն է:

Այդպէս ալ «կտր», «քառակուսի», «եռանկիւնի» և նման առաջին աստիճանի վերացականութիւններուն վրայէն հանուած ձեւ բառը Այդպէս ալ՝ «մէկ», «երկու», «երեք» ու նման առաջին աստիճանի վերացականութիւններուն վրայէն հանուած թիւ բառը:

Եւ ասոնց նման են՝ քանակ, չափ, կարգ, նիւթ, հիւթ, եակ, քաւած, վիակ, մաս, զգեստ, կարասի, ծաւալ, տարածութիւն, ժամանակ և շատ մը ուրիշ երկրորդ ու երրորդ աստիճանի վերացականացումով աստացում զուտ վերացական գոյականները:

3. Ձուտ վերացականութիւններ են նոյնպէս բոլոր այն գոյականները, որ կ'ըստանանք բայերէն, այսինքն ամեն տեսակի գործողութիւններու գոյականացումը, որոնց ուսումնասիրութեան նըւիրուած է ամբողջ յաջորդ գլուխը:

Պ. Արագրեհ՝ միայն այն գոյականներ, որոնք մէկ յակուեցան մը անունն են եւ գրե՛ղ իր այդ յակուեցանք:

Ողի, արեւելք, մուրհակ, ցաւ, մակերես, տուն, խորութիւն. մող. լայնք, աստղ, կանաչութիւն, գրասեղան, փեղկ հատակ, հասկ, անտառ, քայլ, կաղամբ, բնակիչ, ծոցասեպ, ուրախութիւն, դիմակ.

կամք, այգի, պարոն, պարան, պարգև, անձրև, այցելութիւն. ասեղ, խնամք, արտ:

10 Դի՛ր հետեւեալ նիւթական անուններուն դիմը այն միակ զըլ-խաւոր յանկութիւնը, որու անունով որ կոչուեալ են այդ անձերն ու առարկաները:

Թագաւոր, ուսուցիչ, սրբիչ, ճամբորդ, մայր, կապոց, միջատ, թռչուն, կովկրիթ, ունեւիլ, տապակ, բերան, կռան, ստնտու, դերանուն, գլխարկ, հայեւի, կապիչ, դատաւոր, թագուհի, կարուհի, պահակ, զինակիր:

11 Ինչո՞ւ համար նախորդ հրահանգին բոլոր բառերն ալ նիւթա-կան գոյականներ են:

12 Նախ գտե՛ք այն խօսքերը, ուր կրկնուող անունը նիւթական գոյական մըն է: Առանձին արեւագրե՛ք այն խօսքերը, ուր վերացական է կրկնուող անունը:

«Սուր մատիտ մը», «Սուրը քաշեց», «Սուրբ գիրք», «Սուրբը կ'աղօթէր», «Փոս ակռայ», «Փոս մը փօրեցին», «Անուշ լեզու երե-խայ մը», «Պարտէզը անուշ կ'եփէին», «Լեզի վարունգներ», «Խեղճ մարդուն լեզին փրթաւ», «Ան գող տղան նորէն հկաւ», «Գողը բռներ են գողնալու ատեն», «Սուտ վկայութիւնը օրէնքով կը պատժուի», «Սուտ մի՛ խօսիր»:

13 Այլաբանօրէն առնելած նիւթական գոյականները փոխարինե՛ սովորական վերացական գոյականով մը, առանց խօսքին իմաստը փո-խելու:

Նեղ կածանը լեռան զլխէն ուր-մուր կ'իջնէր մինչև լեռան վարի փեղերը: Մենք սկսանք ծանր-ծանր իջնել: Ընկերս կ'երդէր. մենք ալ խուճապով տուն-տուն իր երգածը կը կրկնէինք:

Այս՛, մեծ աղջիկս իմ աջ ձեռքս է. ըսաւ կինը. առանց անոր օգնութեան ես այս տունը դարձնեմ չէի կրնար:

Ինչ կ'ուզես իրմէն. խեղճ մարդը իր գրչովը կ'ապրի. ուրիշ ե-կամուտ չունի. իր մասին տարածուած լուրերը հեքիաթային զըղ-եակներ են:

Նաւը բիթը ուղղեց դէպի դիմացի կղզին: Հովերը հետզհետէ կ'ու-ժեղնային. եւսլոս լայն բացել էր իր տոպրակին բերանը. իսկ լու-սինն ալ վերէն, ամպերուն մէջէն կը խնդար մեր ընկոյղի կեղեւին վրայ:

Յաւիտենական վէճ մը կայ միշտ մուրնին ու մանգաղին միջև: Որթատունկին մասները ծառին իրանը զրկելով-զրկելով մագլցե-ր էին մինչև անոր ճոխ ու դուռը մագլցելը:

Բռնակալներուն համար իրենց սուրն է երկրին օրէնքը. իր ժո-ղովուրդը սիրող ղեկավարներուն համար երկրի օրէնքն է իրենց գործածած սուրը:

Ձեր նկարիչը շատ նրբազգաց վրձին մը ունի. և իր երանգազնա-
գը շատ է հարուստ:

Պաշտօնիս դեռ սեմին՝ կ'ըզգամ գալիք բոլոր դժուարութիւնները:
14. Հեծելիքով ընդգծուած վերացական գոյականները փոխարինե՛
ցիւքական գոյականով մը:

Մարգը վերջապէս տէր դարձաւ սեփական բնակարանի:

Նախ երթանք մեղի ու պատահ մը բան ուտենք:

Լոյսը մարեց ու պառկեցաւ:

Ամեն շունչ-փառող ապրիլ ու տեւել կը տենչայ:

Այս մեղաւոր աշխարհին մէջ ամեն ինչ կարելի է գնել դրամով:

Մեր տան մուտքը քովի փողոցին մէջէն է:

Բոյսերը աճեն կողմ խոնաւ կը փնտռեն:

Գիտեմ, որ շատ կը սիրես ծաղիկներու քաղուհին. խնդրե՛մ,
շնորհակալ:

Ի՞նչ սուր խողովին ունի այս փոքրիկ աղջիկը:

Հաջանց ու մլաւանը կռուի էին բռնուներ:

Ներկայ էին ընդամենը հինգ հոգի:

15. Ինչո՞ւ համար ետք յանախ, մանաւանդ փոքր քաղաքներու մէջ
մարդոց մականուներ իրենց արհեստն ու գործը կ'ըլլայ:

16. Ինչո՞ւ համար ետք յանախ նիւթական գոյականներուն ածուներ
իւր մէկ կարեւոր յատկութիւնը կ'ըլլայ:



Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

Ա. Գործողութիւն ըսել է բան մը ընել կամ բան մը ըլլալ: Ա-
մեն գործողութեան մէջ կայ միշտ բան մը. որուն կը ձգտինք, ո-
րու իրականացման համար ճիգ կը թափենք մեր կողմէ կամ որուն
կը հասնինք անկախ մեր ուզելէն կամ չուզելէն:

Գործողութիւն արտայայտող ամեն բառ մէկ կողմէն միշտ ընել
մըն է կամ ըլլալ մը. միւս կողմէն ալ իր արտայայտութեան մէջ
ունի այն վիճակը, որուն կը ձգտի կամ կը հասնի: Ատոր համար է,
որ ամեն բայ, ինչ տեսակի ալ որ պատկանի, իր կազմին մէջ ունի
միշտ երկու մաս՝ բունը և վերջաւորութիւնը:

Վերջաւորութիւնն է միայն, որ կը ներկայացընէ այդ ընելն ու
ըլլալը նեղ իմաստով. բայի մը գործօն ու իրապէս բայական մասը
իր վերջաւորութիւնն է:

վերջաւորութեան առջեւի բայաբունը կազմող մասը կամ մասերը, երբ իրենց վերջաւորութենէն զատենք, այլ ևս բայ չեն, առնուն են:

Իսն մը ըլլալը, բան մը դառնալը արտայայտող բայերը իսկական իմաստով գործողութիւն չեն, այլ կը յատենեն միայն որոշ վիճակի մը, որոշ յատկութեան մը տէր դառնալը: Այդ լինելական բայերուն մէջ բայաբունի առնուն մը ըլլալը շատ աւելի բացայայտ է, քանի որ ներքին կամ արտաքին մեղի ծանօթ յատկութիւն մը կ'անշուանէ, որուն տէր կը դառնայ ենթական: Եւ արդէն յաճախ երկու բառով ալ զատ կ'արտայայտենք, մեծնալ = մեծ դառնալ, փայտանալ = փայտ դառնալ, մտերմանալ = մտերիմ դառնալ, հիւանդանալ = հիւանդ դառնալ, կարողանալ = կարող դառնալ:

Այս բայաբուն դարձած անունները բոլորն ալ վերացական գոյականներ են, նոյնիսկ խիստ նիւթական բառեր գործածելու առին ալ որովհետեւ այդ նիւթական բառերուն իսկապէս մէկ հիմնական յատկութիւնն է, որ աչքի առաջ ունի բայը:

Այս բան մը ըլլալը, բան մը դառնալը ցոյց տրուող լինելական բայերը կը պատկանին ընդհանրապէս չորրորդ լծորդութեան, երբեմն միայն երրորդ լծորդութեան. այսինքն իրենց վերջաւորութիւններն են՝ ն-ալ, ա.ն-ալ, ե.ն-ալ կամ իլ:

Միայն հոս ալ պէտք է գգուշ ըլլալ, որ արտաքին դատումով բոլոր այդ կազմը ունեցող բայերը մեքենապէս լինելական չհամարուին: Պէտք է հետեւիլ միշտ իրենց ներքին իմաստին, որ իրապէս բայաբունին մէջ յիշուած յատկութեան տէր դառնալը նշանակեն: Օրինակ, անիմաստ է՝ մոռանալ = մոռ դառնալ, իմանալ = իմ դառնալ, նոյնիսկ խոյանալ բառը, որ «խոյ» անունէն կ'առնէ իր ծագումը, բայց իր իմաստն է ո՛չ թէ խոյ դառնալ, այլ խոյի նման յախուռն յարձակուիլ. լինելական բայ չէ. այլ ընկական: Ճերմակի կը նշանակէ ճերմակ դառնալ. բայց «հալիլը» անիմաստ է. երբ ըսեմ հալ դառնալ, յազնալը՝ յադ դառնալ կամ կշտնալը՝ կուշտ (կողք, ստամոքս) դառնալ:

Բ. Գալով բուն գործողութիւն մը արտայայտող բայերուն, ըլլան առտնք չեզոք գործողութիւն մը, թէ ըլլան անցական գործողութիւն, այսինքն մէկէն միւսին անցնող, նորէն բոլորի ալ իսկական բայը կերտող մասը և գործողութիւնը ներկայացնող իրենց վերջաւորութիւնն է:

Իսկ այդ վերջաւորութեան առջեւի բայաբունը նորէն անուն մըն է, նորէն վերացական գոյական մը. բայց նոր գոյացութիւն մը, որ ծնունդ է առած ու ծնունդ կ'առնէ իր իսկ բայէն:

Գործողութիւն արտայայտող բայերուն բայաբունը կ'անուանէ

միշտ այն արդիւնք երևւոյթը, որ ստացուած է ու կ'ըստացուի, երբ գործողութիւնը կատարուի:

Դրել բային բունն է գիր, որ գրելու ստեղծած արդիւնքն է: Սիրել բայի բունն է սէր, որ սիրելու բերած արդիւնքն է: Շինելուն արդիւնքն է շէն-ք՝ քաղիւրն արդիւնքը քայլ, քայլք, քալ. ուսածք. հազալուն արդիւնքը հազ. դողալուն արդիւնքը դող. գողնալուն արդիւնքը գող-ութիւն. ծախսելուն արդիւնքը ծախս. կսմտելուն արդիւնքը կսմիտ, փորելուն արդիւնքը փոր, փոր-ուածք:

Այսինքն բան մը ըլլալը ցոյց տըւող բայերուն բայարունը առնւած է ուրիշ ճամբաներով ձեռք բերուած վերացական անուններէ. իսկ գործողութիւն յայտնող բայերու բունը այդ գործողութեան արդիւնքը եղող նոր վերացական գոյութիւն մըն է, որ իրմէն կը ծնի, բային սեփական ծնունդն է:

Բան մը ըլլալը արտայայտող բայերը տեսակ մը ետ կը նային, ուրիշներէն պատրաստ կ'առնեն այն վերացական գոյականը, որ կը իւրացընեն: Բան մը ընելը ցոյց տըւող բայերը տեսակ մը դէպի առաջ կը նային, դէպի նորը, դէպի իրենց իսկ ծնունդը:

Ամեն գործողութիւն արտայայտող բառ իր մէջն ունի այդ հնարաւորութիւնը իրմէն առաջացընելու իր ըրածին արդիւնքը անուանող վերացական գոյականներ: Եւ մեծ մասով կան, ստեղծուած են արդէն այդ գոյականները: Երբեմն ալ կը մնան գոյութիւն չառած, տեսակ մը սպասողական վիճակի մէջ, իրեւ նոր ստեղծումներու կարելիութիւն: Այսպէս օրինակ՝ չեն գոյականացած հետեւեալ բայերուն բունները. կարգ-ալ. խմ-ել (թէն ունինք գլեր ու խումք), կառչ-իլ, խլ-ել, խամր-իլ, ծամ-ել:

Ի. Գործողութեան արդիւնք գոյականները կ'առաջանան իրենց բայերէն երկու ճամբով:

Առաջին պարզ ու անմիջական ճամբան վերջաւորութիւնը վրայէն նետելն է, որով կը մնայ մերկ բունը իբրեւ վերացական գոյական:

Բարկանալ՝ բարկ. կարօտիլ՝ կարօտ, կասկածիլ՝ կասկած, յուզուիլ՝ յոյզ, կանչել՝ կանչ, բռնցրնիլ՝ բռն, երթալ՝ երթ, դառնալ՝ դարձ. փորձել՝ փորձ, հարցընել՝ հարց, կիսել՝ կէս, սերմել՝ սերմ, խայթել՝ խայթ, գնել՝ գին, ուռչիլ՝ ուռ, սրբել՝ սուրբ, խնդրել՝ խնդիր:

Երկրորդ ո՛չ նըւազ բանուկ ճամբան որոշ մասնիկներու կցումն է մերկ մնացած բունին:

1) Ամենէն առաջ ուն մասնիկը. ներել՝ ներում, ուսանիլ՝ ուսում, խմորել՝ խմորում, դատել՝ դատում, կառուցել՝ կառուցում, հաստացել՝ հաստացում:

Զորքորդ լծորդութեան բայերը ուն մասնիկին առջև կը պահեն

իրենց կատարեալի բնորոշ ց ն և յօդակապը, որով րաշարունին վը-
րայ աւելցած կ'ըլլայ աց-ում, եց-ում: Մոռնալ՝ մոռացում, հեռա-
նալ՝ հեռացում, մատենալ՝ մօտեցում, ուրախանալ՝ ուրախացում,
վշտանալ՝ վշտացում, խենթենալ՝ խենթեցում, գողնալ՝ գողացում:

Այդում կ'ըստանան բայաբունին վրայ նաև մէկ-երկու առաջին
լծորդութեան բայեր. զգալ՝ զգացում, լըւալ՝ լըւագում:

2) Երկրորդ՝ շատ սովորական է և ամբողջացնող, ձուլող մաս-
նիկի յաւելումը բայաբունին, կամենալ՝ կամք, կենալ՝ կեանք, ելլել՝
ելք, շինել՝ շէնք, իջնել՝ էջք, կրել՝ կիրք, բերել՝ բերք, հնձել՝
հունձք, խօսիլ՝ խօսք, վարել՝ վարք, գովել՝ գովք, տեսնել՝ տեսք,
վազել՝ վազք, խնդրել՝ խնդիրք:

Հոս ալ քանի մը բացառիկ բայեր կը պահեն իրենց կատարեալի
ց-ն. սլանալ՝ սլացք, լըւանալ՝ լըւացք, ընթանալ՝ ընթացք. գրաբա-
րէն կալ գայ նոյն ճամբով՝ հայիլ՝ հայեացք:

3) Երրորդ՝ քաւոր անք, մոռնալ ու ուռնալ, մասնիկները:
Մաղթել՝ մաղթանք, հեկեկալ՝ հեկեկանք, տանջել՝ տանջանք,
փորձել՝ փորձանք, խոյանալ՝ խոյանք, հոսիլ՝ հոսանք:

Ուս-մոռնք (= ում-ոռնք), հոս-մոռնք, խոկ-մոռնք, բուր-մոռնք,
հարց-մոռնք, դատ-մոռնք:

Կեց-ուածք, հիւս-ուածք, խօս-ուածք, գր-ուածք, դարձըւածք,
կազմըւածք (կազ-մը-ւածք):

Սկրտ-ութ, քերտ-ութ, մաշ-ութ, կովըգտ-ութ, թափ-ութ:

4) Զորրորդ. ոյթ, ութիւն, իւն, ուրդ, ոց և ակ մասնիկները:

Հաւաք-ոյթ, ձանձր-ոյթ, կշռ-ոյթ, մշակ-ոյթ, զայր-ոյթ, քամ-
ոյթ, սովոր-ոյթ:

Բարկ-ութիւն (= ոյթ + իւն), թող-ութիւն, խենթ-ութիւն, մօտ-
ութիւն, գող-ութիւն, զգայութիւն, նախադասել՝ նախադասութիւն:
Հնչել՝ հնչիւն, պայթիլ՝ պայթիւն, շրշել՝ շրշ-իւն, հեծել՝ հեծ-
իւն:

Ժողովել՝ ժողովուրդ, խորհիլ՝ խորհուրդ, աճիլ՝ աճուրդ, նըւա-
զիլ՝ նըւազուրդ:

Տփել՝ տփոց, հաջել՝ հաջոց, փչել՝ փչոց, փողել՝ փողոց, թրջել՝
թրջոց:

Աւերել՝ աւերակ, տեսնել՝ տեսակ, հասնիլ՝ հասակ, յենիլ՝ յենակ:

Գ. Դործողութիւն ցոյց տըւող բայերէն կ'առաջանան բազմաթիւ
ուրիշ անուաններ ալ, որոնք իրենց կազմով ու ծագումով նորէն վե-
րացական գոյականներ են, քանի որ մէկ յատկութեան մը անուան
են, բայց այդ իրենց հիմնական յատկութիւնը դարձած է արդէն
բազմաթիւ յատկութիւններու տէր եղող անձերու կամ իրերու կոչու-
մը, դարձեր է նիւթական գոյական:

Բայերէ առաջացած այս վերացականէ-նիւթական գոյականները կ'անուանեն միշտ զործողութիւնը կատարողը, և իրենց իմաստով հաւասար արժէք ունին անաւարտ դերային:

Վերացականէ նիւթական գոյականներու առաջացումը կը կատարուի նոյնպէս երկու ձեւով:

1. Առաջին ձեւը որոշ մասնիկներու յաւելումն է բայաբունին վերջաւորութիւնը նետելէն ետքը:

Եւ գլխաւորապէս երեք մասնիկ: Այդ երեք մասնիկներն են ան, իչ և ուրդ:

Իչիւն՝ իչխան, բերել՝ բերան, խորել՝ խորան, պարել՝ պարան (ինքն իր վրայ ոլորեալ), կռել՝ կռան, սիրել՝ Սիրան, մերել՝ մերան, օրրել՝ օրրան: Նկատելի է, որ ընդհանրապէս եւ լծորդով բայեր են, իսկ եւ լծորդը ամենէն գործուն, ներգործական շինող լծորդն է:

Գրել՝ գրիչ, բրել՝ բրիչ, քերել՝ քերիչ, ուսուցանել՝ ուսուցիչ, մկրտել՝ Մկրտիչ, ուտել՝ ուտիճ (ցեց), քարոզել՝ քարոզիչ, նմանապէս եւ լծորդն է:

Որսալ՝ որսորդ, կցել՝ կցորդ, անցնիլ՝ անցորդ, հետեիլ՝ հետեւորդ, հակառակիլ՝ հակառակորդ:

2. Այս երեք մասնիկներէն զատ կան նաեւ քանի մը ուրիշ մասնիկներ ալ, որոնք սովորաբար ածական անուն կը շինեն բայերէն, բայց երբեմն կ'ըստանան նաեւ վերացականէ-նիւթական գոյականի մը արժէքն ու նշանակութիւնը: Թռչիլ՝ թռչ-ումն, սողալ՝ սող-ումն, այցելել՝ այցել-ում, քչիլ՝ քչոց, քորել՝ քորոց, հայիլ՝ հայելի, բանալ՝ բանալի, ունել (բունել)՝ ունելի. վերջին երկուքը գրաբարէն, նոյն առումով:

3. Բայաբունէն՝ վերացականէ-նիւթական գոյականներ ստանալու երրորդ միջոցը բայաբունին և իր ունեցած խնդրին ձուլումն է. խնդիրը կրնայ ըլլալ սեռի և քնութեան. կ'ըստացուի մէկ բարդ բառ մը, որ նորէն զործողութեան կատարողը կը նշանակէ և սովորաբար կ'ըլլայ ածական անուն մը. բայց երբեմն կ'ունենայ նաեւ վերացականէ-նիւթական գոյականի մը դերն ու արժէքը:

Ձուկ որսալ՝ ձկնորս, բարիք գործել՝ բարեգործ, բարի կամենալ՝ բարեկամ, բեռ կրել՝ բեռնակիր, հեռուն գրել՝ հեռագիր, բարձր խօսիլ՝ բարձրախօս, մանրերը դիտել՝ մանրադէտ:

Այս բոլոր տեսակի ածանցումով թէ բարդումով առաջացած վերացական-նիւթական գոյականներուն վրայ, երբ ութիւն մասնիկը կ'աւելցրնենք, կ'ըստացունան անոնց արդէն զուտ վերացական գոյականները:

Իշխան-ութիւն, քարոզ-ութիւն, ուսուցչ-ութիւն, այցել-ութիւն, սողուն ութիւն, որսորդ. ութիւն, ձկնորս. ութիւն, հողագործ. ութիւն:



17. Ընդգծե՛ք բան մը քլլալը, բան մը դառնալը յայտնող ստորոգիչները:

— Այս սենեակդ պզտիկցուցե՞ր ես, ցածցուցե՞ր ես, թէ ի՞նչ ես ըրեր. աչքիս ուրիշ տեսակ կ'երեւայ: Իմ սենեակս ո՛չ պզտիկցեր է. ո՛չ ցածցեր է, ո՛չ ալ որեւէ ուրիշ փոփոխութեան է ենթարկուեր. բայց դո՛ւն ես մեծցեր. դո՛ւն. բարձրացեր ես, խոշորցեր ես ու հասակ նետեր:

Մարդուն սիրտը կարծրացեր էր. ո՛չ մէկ զիջում չըրաւ. ինչի վրայ էր աշխատէս դառնացեր. սովորաբար քիչ մը աղմկելէն ետքը կը մեղմանար ու տեղի կու տար:

Երկինքը յանկարծ մռայլեցաւ. արեւմուտքը քիչ-քիչ դեղնեցաւ, աղտոտ դեղին մը. ետքն ալ գորշացաւ, անագի գոյն առաւ, մինչև որ բոլորովին սեցաւ: Օդն ալ ծանրացաւ, կարծես խոտացաւ ու շնչելը դժուարացաւ: Ուժեղ կ'որոտար վերը գլխունուս վրայ, որ հետզհետէ կը հեռանար, կը թռչնար, կը խռչնար ու կը մարէր:

18. Արագգրե՛ք միայն այն բայերը, որոնք յիշեց բունի անուանած յատկութեանը հէր կը դառնան:

Նիւընդնալ, պառկիլ, ճիւժկիլ, բարակիլ, ճզմըլիլ, ուշանալ, մօտենալ, մտերմանալ, թուլանալ, պնդանալ, կարմրիլ, կարմրցըլիլ, գիրնալ, պապանծիլ, իշանալ, խոտտանալ, կուրանալ, զայրանալ, ալքայանալ, ամբողջանալ, թիրանալ, յագեհնալ:

19. Ո՞ր բային են առաջացած հետեւեալ անունները. ուրեմն ի՞նչ է այդ բային հին ու նոր նշանակութիւնը:

Շնորհ ընել, շնորհք: կուրծք, կրծօն (կաշառք):

Կարիճ, կտոր. կտրուկ: կայք, կայմ, կայուն:

Ապրանք. ապուր: Պարիկ, պարան, պար, պար-փակ-ել:

Սերունդ, սերուցք, սերում, սերմ: սեր (կաթի):

Փորձիչ, փորձանք, փորձ: Բերք, բերան:

Հասակ, հասուկ. հասկ, տհաս, չհաս:

Խորք, խորան, խորունկ: Սուրբ, սրբիչ:

Բռնի, բռն (յարձակում), բռնութիւն:

Հատիկ, հատոր, հատու, հատ, անհատ:

Կապիչ, կապար, կապանք: Հոսանք, հոսուն, հոսում:

Սպաս (ապուր. ուտելիք), սպասուոր, սպասում:

20. Վերացական գոյականը դարձու՛ր բայաբուն եւ դի՛ր իղածին քոլը:

Կարօտ դգալ: Նեղութիւն տալ: Յու պատճառել: Խոտտում տալ: Երգում ուտել: Կասկած տանիլ: Զարմանք տածել: Զըւարճութիւն

չդալ, Ողեւորութիւն ընել, Մուտք գործել, Ծագում առնել, Կապ ընել, Պար բռնել, Պատյտ ընել, Կարողութիւն ունենալ, Պատմութիւն ըսել, Զուրկ պահել, Հեռու տանիլ, Մօտիկ բերել, Մօտ գալ, Մօտ քրթալ, Երգ ըսել, Ծանօթ դառնալ, Բուն մտնել, Սէր տալ:

ՁԷ. Հետեւեալ բայերը գործածե՛ք այն ձեւով, որ բայաբունները դառնան վերացական գոյական:

Այդքան մի՛ աշխատիր առողջութիւնդ կը վտանգես:

Այդպէս անհաշիւ ծախսողը անշուշտ պէտք է փնտսուի:

Մեղադրելը կարծես հերիք չէր, հիմա ալ սկսեր է զրպարտել: Երբ կը կասկածէի՝ ինծի վստահացուցիր. հիմա որ հաւտացներ ամ՝ կարծես գիտմամբ բաներ կ'ըսես, որ երկմտիմ:

Շիտակ մարդուն գործը վերջը-վերջը կը յաջողի: Իսկ սուտն ու կեղծիքը՝ յաջողին թէ ձախողին՝ անիծուած են ի ծնէ:

Դիմեցի պաշտօնապէս, տեսչէն ալ յատուկ խնդրեցի, որ այս անգամ ներեն:

Անտառապահը ցախերը մանր կտրտեց, կիտեց իրաբու վրայ ու կրակեց:

ՁԸ. Դի՛ր բային բովր իր ում մասնիկով վերացական գոյականը:

Ա. Լծորդ — իյնդալ, գոռալ:

Բ. Լծորդ — Ներել, դատել, մտածել, խոցել, կոցել, սակարկել, բերել, լուծել, բուրել: (Բեկել), (խոստել), (ուսել), (երգել), կոչել:

Գ. Լծորդ — Հոսիլ, կանաչիլ, աճիլ, դեղնիլ, նեխիլ, փթթիլ, ժպտիլ:

Դ. Լծորդ — Թերանալ, մոռ(ա)նալ, հեռանալ, գողնալ, զլանալ, իմանալ, լըւանալ, լաւանալ, գօրանալ, գոհանալ, խոստանալ:

Խենթենալ, մերձենալ, մօտենալ:

Զգալ:

Ե. Լծորդ — Դրաբարէն՝ ուս-ան-իլ. բեկ-ան-ել:

ՁԹ. Հետեւեալ բայերէն ք մասնիկով կազմե՛ք վերացական գոյականներ:

Ա. Լծորդ — իյադալ:

Բ. Լծորդ — Հիւսել, բերել, դնել, վաղել, (պիտել):

Գ. Լծորդ — Խօսիլ:

Դ. Լծորդ — Հիանալ, լըւանալ, ընթանալ:

Գնալ:

Ե. Լծորդ — Ելնել, իջնել, անցնիլ:



Գ. ԱՄԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Ածական անուն կ'անուանենք իրերու ու երեւոյթներու վերայն առանձնացուած որեւէ մէկ յատկութիւն, որ չենք նկատեր իբրեւ ինքն իրմով աւարդացած անկախ գոյութիւն մը. այլ կը դնենք ուրիշ գոյական անունի մը վրայ անոր այդ յատկութիւնը ունենալը կամ չունենալը յայտնելու համար:

Իրր կ'ըսեմ «լայն սենեակ», «երկար հասակ», «դեղին թուղթ», «քաջ որսորդ» «գեղեցիկ պատկեր», «ցանուած արտ», «գրտի մեքենայ», «սիրելի բարեկամ», այս բոլոր ընդգծուած բառերը մէյ-մէկ յատկութիւններու անուններ են, բայց ո՛չ իբրեւ անկախ, ինքնուրոյն գոյութիւն մը ներկայացընող բաներ:

Իրր այդ բոլոր ածական անունները իբրեւ անկախ գոյութիւններ ըմբռնելու ըլլանք՝ կը դառնան վերացական գոյականներ, ինչպէս տեսանք նախորդ գլուխներուն մէջ:

Ամեն առանձնացուած յատկութիւն մէկ կողմէն կու տայ ածական անուն մը, իբրեւ որոշիչ մը ուրիշ գոյական անուններու վրայ դրուելու համար. և միւս կողմէն ալ կը ներկայանայ իբրեւ վերացական գոյական անուն մը, իբրեւ այդ յատկութեան գատ ու անկախ բնութեամբ, իբրեւ ուրոյն վերացական պատկերացում մը:

Վերացական գոյականներն ու ածական անունները հարադասորոյր եղբայր են իրարու: Ունենալով նոյն ծնողներն ու նոյն էութիւնը իրենց տրամաբանական բաժանումներն ալ բնական կերպով չատ գիծեր ունին իրարու նման:

Ածական անունները կը բաժնենք երկու գլխաւոր ճիւղերու՝ իրավութեան ածականներ և գոյութեան ածականներ:

Բ. Իրողութեան ածականները կրնանք բաժնել չորս խումբի:
1) Վիճակային կամ որակական ածականներ, 2) Հոշուական ածականներ,
3) Դերանունական ածականներ և 4) Վերաբերական ածականներ:

1) Վիճակային կամ որակական կ'անուանենք նիւթական գոյականներուն վրայն ուղղակի առանձնացուած շօշափելի կամ տեսանելի յատկութիւնները: Ատոնց մէկ կէսը բնութեան տրուած յատկութիւններ են՝ քրական յատկութիւններ են, մինչ միւս կէսը մարդկային կենսակցութեան, մարդկային յարաբերութիւններէն սուսջողած երեւոյթներ են, պտուղ են մարդկային քաղաքակրթական կեանքին, ընկերական յատկութիւններ են:

Այսպէս բոլոր գոյները, բոլոր ձեւերը, բոլոր դիրքերը ինչպէս և մարդկային բոլոր մարմնական ու հոգեկան յատկութիւնները՝ ուշիմ, տխուր, խելացի, կոշտ, նուրբ, ծոյլ, աշխուժ, կայստաւ, բնական

վիճակային ածականներ են: Մինչ հարուստ, անկիրթ, ազնիւ, ժլատ, վեղձաւոր, արդար, ժռժկալ, առաքինի, զեղխ, շըւայտ, բարի ու չար, ստախոս կամ կեղծ, խաբարայ կամ նման յատկութիւնները ընկերական վիճակային ածականներ են:

2) Իրերու թրւական կազմն ու թրւական յարաբերութիւնները կը ներկայացընեն իրողութեան ածականներուն երկրորդ խումբը: Իրերու քանի՞ հատ ըլլալը. քանի՞-երորդը ըլլալը. քանի-երո՞րդ մասը ըլլալը, քանիակա՞ն հատ ըլլալը, ինչպէս և իրերու ի՞նչ չափ, ի՞նչ կշիռ և ի՞նչ արժէք ունենալը ըսող բառերը կը ներկայանան իբրեւ առանձնացուած քանակական որակումներ, իբրեւ առարկաներու մէկ մասնաւոր յատկութիւնը:

3) Իրողութեան ածականներուն երրորդ խումբը այն դերանուններն են, որոնք իբրեւ ածական կը գործածուին:

Այսինքն բոլոր ցուցական դերանունները:

Հաւաքական դերանուններէն բոլոր ու ամեն բառերը:

Անջատող դերանուններէն քանի, քանի մը, մէկ քանի, քանի-քանի, ամեն մէկ, ոչ-մէկ, միւս, մեկալ, իւրաքանչիւր բառերը:

Յարաբերական դերանուններէն ինչ և որ բառերը, երբ գոյականի վրայ են դրուած:

Այլ և այդ երկուքով կազմուած անորոշ դերանունները* այսինչ, այնինչ, ինչինչ, ինչոր, որեւէ:

4) Իրողութեան ածականներու վերջին խումբը կը կազմեն վերաբերական ածականները, որոնք իրենց յաջորդող գոյականին ո՞ր տեւակի երեւոյթներու կամ իրերու դասին պատկանիլն ու վերաբերիլը կը յայտնեն:

Վերաբերական ածականները կը կազմուին գլխաւորապէս հետևեալ մասնիկներու յաւելումովը գոյականին կամ բայաբունին վրայ:

Ական բաղադիր մասնիկը (ակ-ան): Տեղական. գիւղական, պետական, աշակերտական, դպրոցական. տիեզերական, նըւիրական, քարոյական, դատական, ձայնական, տեական, մանկական, լեռնական, մշտական, մտածական, զգացական:

Ային բաղադիր մասնիկը (այ-ին): Յեղային, սեղային, մարդկային, ագգային, ցամաքային, կրային, քարային, կալուածային, տընային, մտային, ստուածային:

Ին մասնիկը դիրքը, շարքը ցոյց տըւող բառերու վրայ: Միջին, վերին, ստորին, ներքին. արտաին, առաջին, վերջին:

Յի, ագի կամ եցի մասնիկներու յաւելումովը ծագման տեղը ցոյց տըւող բառերու վրայ: Պոլսեցի, Թիֆլիսեցի, Երևանցի, դաշտեցի, լեռնցի, քաղաքացի, գիւղացի, վանեցի, անգլիացի, ֆրանսացի, իտալացի:

Երեւն կամ արեւն մասնիկը ազգն ու ցեղը ցոյց տըւող բառերու վրայ, անոնց խօսած լեզուէն ստանալու համար. հայերէն, քիւրտերէն, թուրքերէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն, յունարէն, չինարէն:

Գ. Գործողութեան ածականները ցոյց կու տան, թէ իրենց կապուած գոյականը ի՞նչ գործողութեան է ենթարկուած, ի՞նչ գործողութեան համար է յատկացուած կամ ի՞նչ տեսակ գործողութեան է արժանի:

Գործողութեան ածականները սերտորէն կապուած են երեք դերբայներուն. կա՛մ այդ դերբայներէն կ'առաջանան, կա՛մ այդ դերբայներու հետ նոյն իմաստը կ'արտայայտեն: Ուրեմն բնական կերպով կը բաժնըւին երեք խումբի:

ա) Անորոշ դերբային կապուած.

Անորոշ դերբայի արական հոլովէ է, որ ինքը ածական կը դառնայ՝ ինչի համար յատկացուած ըլլալը կամ ինչ գործողութեան ենթարկուելիքը ցոյց աւելով: Ուտելու հաց, կարգաւու գիրք, վաղելու դաշտ, գրելու թուղթ, ծախսելու դրամ:

Շատ աւելի գործածական է ի հոլովակերտով, գրաբարէ փոխ առնուած անցիտ դերբայի դրական հոլովը նոյն իմաստով. ստելի վարժունք, մանելի բուրդ, սիրելի րարեկամ, հասկընալի բացատրութիւն, գնահատելի աշխատանք, պաշտելի անձ, խնկելի յիշատակ:

Նոյնը կը գործածենք է մասնիկի յաւելումով. ծախելիք ապրանքս, ստանալիք դրամս, հագնելիք հագուստներ, պատկելիք տեղ, խնդրելիք գործս, ուտելիք ապուրդ, խմելիք գինին, տանելիք ծանրութիւնը, կոտորելիք գրիչ, կաղմընելիք գիրք:

բ) Ընդարձակ գործածութիւն ունի աւարտ դերբայը իբրեւ ածական. կը ցուցնէ իրեն կապուած գոյականին ինչ տեսակ գործողութիւն կատարած կամ ինչ տեսակի գործողութեան ենթարկուած ըլլալը: Գրած նամակդ, եկած ատենս, սիրուած հեղինակ, չլսուած պատմութիւն, գնահատուած աշխատանք, աւարտած գործ:

Քանի մը բառեր կը պահեն իրենց գրաբարէն եկող աւարտ դերբայը՝ եալ. կատարեալ յաղթանակ, անցեալ շարթու, մեռեալ ծով:

Նոյն աւարտ դերբայի իմաստը կու տան ուկ, ուն մասնիկները որոշ բայաբառներու վրայ: Քնուել, հասուել, խմուել, թափուել, քամուել, պառկուել, աւելուել, Հասուեն, կայուն, փքուն, արթուն, լեցուն, սիրուն, թաքուն, բեղուն:

Աւարտ դերբայի իմաստը կու տան շատ մը բայարմատներ, երբ մերկ կը մնան. բաց, գոց. կիրթ, սթափ, զատ, կիպ, կարօտ:

գ) Նմանապէս ընդարձակ գործածութիւն ունի իբրեւ ածական անաւարտ դերբայը, որ իր յաջորդ մակդիրուած գոյականի ինչ գործողութիւն կատարող ըլլալը կամ կատարելու կարող ըլլալը ցոյց

կու տայ. անցնող տղան, խօսող մարդը, խաղացող կատուն, ոգեւորող խօսքեր, հեռուէն լսուող ձայն մը. տաշող գործիք, քեղեցկացընող հագուստ մը, համակերպող քնաւորութիւն:

Անաւարտ դերբայի իմաստը կուտան քանի մը մասնիկներ՝ ու. ան, իկ, ական. ոս. կոս. երբ կ'աւելնան որոշ բայաբուններուն վրայ. Այսպէս՝ ազդու, հառու, ծախու: Հաջան, վազան, ճշան, խածան: Մարտիկ, թափառիկ, մաւրացիկ, քնկեցիկ, ընթացիկ: Թափառական, մնացական, առւտրական: Տեսքոտ, ցելոտ, սրտոտ, կասկածոտ, կարեկցոտ: Մտածկոտ, դանդաղկոտ, ծիծաղկոտ, պահանջկոտ:

Անաւարտ դերբայի իմաստ ունին նաեւ այն բարդ բառերը, որոնց առաջին արմատը երկրորդ արմատի խնդիրն է կամ մակբայը. ռազմավար, թատերադիր, ազգասէր, գինեմոլ, հեռատես, այլամբոժ, ականասես, դիւրուսոյց, հանրածանոթ, արկածախնդիր, թղթավաճառ:

Այլ և այն բարդ բառերը, որոնց առաջին արմատը երկրորդի մակդիրն է. այդ տեսակի բարդ բառերը կ'աւելնան իրենց երկու արմատներով արտայայտուած յատկութիւնը ճշնեցողքի իմաստը. քարեաիրտ, լաթակազմ, բազմավաստակ, երկճիւղ, համեստափայլ, քաղցիրտ, թերուս, կորաքամակ, երկայնարազուկ:

24. Ընդգծե՛ բոլոր ածականները:

Դուռն կարգա՛ իմ ըսած գիրքս. աղուոր պատմութիւն է: Մէկ-երկու տեղ գուցէ լեզուն դժուար ըլլայ քեզի, բայց ընդհանրապէս խրթին լեզու չէ: Ամեն պարագայի՝ չհասկըցած բառերդ նայէ՛ նոր գնած բառարանիդ մէջ, քու նոր բառարանիդ մէջ:

Սիրելի՛ բարեկամ, ես այդ տեսակ մարդոց համար ծախու ապրանք չունիմ: Ոչ-մէկ կերպասի չի հաւնիր. կանաչ կտոր մը կը զրկեմ՝ կարմիր զոյնի կը պահանջէ. կլոր նախշերով կը զրկեմ՝ չիտակ գծերով կը պահանջէ. երկար գծերով՝ երբ տեսնէ՝ ուրորուն զարդերովը կը փնտռէ: Քսան նմուշ ցոյց եմ տրւեր իրեն, ամէն մէկուն վրայ տխմար նկատողութիւն մը կ'ընէ չեղած ու՛ չըլլալիք զոյնք. րէն կը խօսի և չգտնուելիք բաները միայն կը հաւնի: Անիկա բան գնող յաճախորդ չէ:

25. Երկրորդ գիծ մը քսե՛ բոլոր գործողութեան ածականներուն ախը:

26. Առանձին արտագրե՛ բոլոր իրոպութեան ածականներ իրենց գոյականներուն հետ:

27. Հեռուիս երկու վարժութիւններուն մէջ մէկ գծով ընդգծե՛ քնական ածականներ, երկու գծով ընկերական ածականներ:

Դիտելը առատ ձիւներ էր. հիմա փափուկ ձիւնը նստեր է տերեւ

ւաթափ ճիւղերու վրայ. ճեփ-ճերմակ բամպակի նման: Մարդկային աչքը նայելէն չէր կշտանար:

Դիւղական ցածիկ կտուրներուն վրայ գլխաւորապէս հաւասարասէր ձմեռը փռեր էր իր հաստ վերմակը պաշտպանելու համար: Իսկ զետիւնը թաւ գորգ մըն էր խշրտուն. կոխած տեղդ կը մնար կօշիկներունդ թարմ հետքը:

Դպրոցական երեխաները ոմանք կտրմիր, կանաչ գլխանոցներով, միւսները պաշտօնական վերնոցներով կը գայթէին. կը գլտորուէին անտառին եղերքի թեք էջքին վրայ. գլխաւոր փողոցին աջ կողմը: Ի՞նչ կենդանի աղմուկ էր, ի՞նչ զըւարթ բացականչութիւններ:

ՁԹ. Իսկ աւելի հասակաւոր տղաքը մտեր էին անտառի նուրբ ու լացիկ եղեւնիներուն մէջն ու հտեւը. և փխրուն ձիւնի մեծ ու փոքրը գնդակները անդադար կը սլանային մաքուր օդին մէջ ամեն ուղղութեամբ:

Մառերը պատերազմական ամրոցներ էին դարձեր, որոնց ետեւը ամեն մէկը կը պաշտպանուէր իր վրայ տեղացող գնդակներէն: Բայց ինչքան ալ վարպետ կերպով պաշտպանուէին՝ ամենուն ալ ծեծուած օւսերն ու կռնակները, ինչպէս և ճմուռած գլխարկները կը կրէին իրենց վրայ ձիւնէ գնդակներուն թողած զըւարթ հետքերը:

ՁԹ. Տո՛ւր հետեւեալ զոյգերուն մեջ եղած իմաստի տարբերութիւնը՝

Ողբային կապեր, ազգական կապեր:

Դիւղական կեանք, գիւղային կեանք:

Լեռնային բնութիւն, լեռնական բնութիւն:

Դպրոցական շէնք մը, գործարանի շէնք մը:

Բնական կեցուածք, բնային կեցուածք:

Քաղաքական հարց, քաղաքային հարց:

Դասական կրթութիւն, դասային կրթութիւն:

Պալատական կարգեր, պալատային կարգեր:

ՁԹ. Ձեւակերպե՛ր՝ ական ու ային մասնիկներու ներքին ներքինը:

ՅԵ. Դերբայ անկանգներ դարձուր բայարմատ անկանգ կամ գոնե՛ ազատուե՛ իր դերբայէն:

Բացուած դռները բաց ալ ձգէ ետեւէդ. գոցուած դռները անցանելէդ ետքը նորէն գոցէ՛ անպատճառ:

Բնականէն զատուած հարցերը իզուր տեղը մի՛ խառնիր իրար. ընդհակառակը խառնակուած հարցերը աշխատէ՛, որ զատեա իրարմէ. որ աւելի խորը տեսնել կարողանաս:

Ձուլուած ձայնաւորի մը մէջ մտած ձայնաւոր հնչիւնը կը փոխէ իրեն յատուկ եղող ձայնը: Բուն ձայնաւորները միշտ ալ կը պահեն իրենց սեփական եղող արտասանութիւնը:

Շատ զսպելած բնաւորութեան տէր է այս փոքրիկը և շատ ալ կրթւած չարմուսներ ունի:

իր սոյսպէս շտապելով ձգել-հեռանալը բնական կերպով իր կատարած աշխատանքը պիտի դարձընէր կիսատուած :

Ծռած հոգիներէն շտկըած գործեր մի՛ սպասեր :

32. Ընդգծե՛ք միայն գործողութեան անականները . դերբայականներ մեկ գծով, դերբայ չեղողներ՝ երկու գծով :

— Տո՛ւր իրեն ուտելու հաց ու հագնելիք հագուստ , սիրելի՛ բարեկամս , այդ խեղճ տղան ստայժմ ուրիշ բանի պէտք չունի : — Ո՛չ , ես կու տամ իրեն ծախու ապրանք . թող երթայ , աշխատի ու ինքը հանէ իր ուտելիք հացն ու հագնելու հագուստը :

Այո՛ , շատ սիրուած ու սիրելի հեղինակ է , կարգացած գրքերու մէջ մտնէն գրաւիչ պատմըւածքները իր հետաքրքիր հատորներն են եղած : Իսկ քու ըսած հեղինակդ , այն միւսը , ինչպէ՞ս էր իր տարօրինակ անուէնը , իր անունին պէս ոլորուն ոճ մը ունի . և անվերջանալի , չընդհատուող հատորներով պիտի կարգաս , պիտի կարգաս , որ կերպով մը իր անսպասելի ու անհաւանական վերջին հասնիս :

Անգլերէն լեզուն գիւրուսոյց եղանակով մը իւրացընելու նոր գիրք մըն եմ գտեր և շատ աժան գնով , կաշեկազմ հատոր մը , ոսկեւ զօծ եղբրքներով : Հիմա տեսնե՛ք ի՞նչ աստիճան իրաւ է ըլլալու նաև իր փառակազմ ու ոսկիեղբ ուսուցման եղանակը :

ՊԱՏԱՍԽԱՆԷ ԳՐԱՒՈՐ

33. Ո՞րն է նիւթական ու վերացական գոյականներուն մէջ եղած նոյնութիւնն ու տարբերութիւնը :

34. Ինչո՞վ կը տարբերի վերացական գոյականը երեւակայական գոյականէն :

35. Նիւթական ու շնչաւոր գոյականները նոյն բանը չեն :

36. Ո՞րն է անշուէչ ու վերացական գոյականներուն մէջ եղած զանազանութիւնը :

37. Վերացական գոյականի լիցի քան մը կրնա՞յ յանկարծ նիւթական գոյական դառնալ :

38. Իսկ նիւթական գոյական մը ի՞նչ պայմաններու տակ կրրնայ վերացական գոյական դառնալ :

39. Ի՞նչ տեսակի բառերն են , որ իրենց էութեամբ իսկ միեւնոյն ժամանակ և՛ նիւթական գոյական են և՛ վերացական :

40. Ո՞ր բառերուն կ'ըսենք զգայարանական :

41. Միտքը ի՞նչ ճամբով վերացական բառեր կը կերտէ :

42. Ո՞ր մասնիկներն են գլխաւորապէս , որ գործողութիւն մը կը գոյականացընեն :

43. Գործողութեան մը վերացական գոյականացումը առանց մասնիկի ինչպէ՞ս կը կատարուի:

44. Եթէ անցական բայի մը վրայէն վերջաւորութիւնը հեռացը-
նենք, մնացածը ի՞նչ ցոյց կու տայ:

45. Բան մը ըլլալը, բան մը դառնալը ցոյց տուող բայերուն
բունը ուրկէ՞ է առնուած:

46. Ո՞ր տեսակի բայերն են, որոնց բունը երբ առանձին մնայ
նոր վերացական անուն մը կը գոյանայ:

47. Ո՞ր մասնիկներն են զլիաւորապէս, որ բայաբունին վրայ
երբ աւելցընենք՝ կ'ըստանանք նոր վերացական գոյականներ:

48. Ք մասնիկի յաւելումը ի՞նչ կ'աւելցընէ բառերու իմաստին:

49. Ո՞րն է «գոյական» բառին արմատը: Ի՞նչ է իմաստը «ածա-
կան» բառի արմատին:

50. Ո՞րն է նիւթական գոյականի մը և ածականի մը մէջ եղած
տարբերութիւնը:

51. Ո՞րն է վերացական գոյականի մը և ածականի մը մէջ եղած
տարբերութիւնը:

52. Վիճակային ածականները ի՞նչ սկզբունքի հիման վրայ կը
բաժնենք երկու մասի:

53. Վիճակային ածականները իսկապէս անունի մը ի՞նչը ցոյց
կու տան:

54. Ո՞րն է բոլոր տեսակի իրողութեան ածականներուն ընդհա-
նուր նդող յատկութիւնը:

55. Ինչո՞ւ համար վերաբերական ածականները միւս բոլոր ածա-
կաններէն աւելի զուտ ածականի տպաւորութիւն կ'ընեն:

56. Գործողութենէ առաջացած բոլոր ածականները, ըլլան պարզ
բառ, ըլլան ածանցուած բառ, ըլլան բարդ բառ, անխտիր բոլորն ալ
իրենց արտայայտած իմաստով ինչի՞ կը հաւասարին:

57. Զառէ՛ր ընկերական ածականները բնական ածականներէն:

Պայծառ, խոնարհ, ուշիմ, հաւատարիմ, ծոյլ, անպարկեշտ, ժլատ,
կոշտ, նուրբ, բարի, չիտակ, արդար, կայտառ, ուժեղ, չռայլ, աղ-
քատ, խելացի, կեղծաւոր, զեղխ, վայելուչ, անկիրթ, անփոյթ, մե-
ղաւոր, ընտիր, ժուժկալ, առաքինի, աղնիւ, տգէտ, տհաս, գեղեցիկ,
բարեկեցիկ:



Երկրորդ հաստատ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՏԵՂՆ ՈՒ ՀԵՀՏԸ

Ա. ԵՐԵՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԴԻՐՔԸ

Ա. Նախագասութեան մը մէջ իր զանազան անդամները ի՞նչ կարգով կը յաջորդեն իրարու. զասաւորութեան որոշ կարգ մը կա՞յ: Քարացում չունի հայ լեզուի նախագասութիւնը. այսինքն նախագասութեան անդամներուն բռնած զիրքն ու յաջորդականութիւնը անխախտ ու անփոփոխ բան մը չէ, որ նոյն կերպով կրկնուի ամեն անգամ: Ընդհակառակը, իր անդամներուն զասաւորութիւնը նախագասութենէ նախագասութիւն շատ տարբեր է և այլաձև. և ատիկա մեծ ճկունութիւն ու կենդանութիւն կու տայ արտայայտութեան:

Բայց յօրինման այդ բազմազանութիւնն ու ազատութիւնը արդիւնք չէ ո՛չ կամայականութեան ո՛չ ալ պատահականութեան. այլ ենթարկուած է ինքը արտայայտութեան ներքին բնական օրէնք-ներու:

Այդ ներքին օրէնքները սւելի ցայտուն դարձնելու համար՝ պէտք է առանձնացրնենք նախագասութեան երեք անհրաժեշտօրէն ներկայ եղող անդամները՝ նախագասութեան միւս յաւելեալ կերպով մէջ եկող, վերագիր անդամներէն:

Վերագիր անդամներ են մակրայները, մակդիրները, շղկապներն ու ձայնարկները, որոնց զասաւորութեան մասին կը խօսինք առանձին:

Հիմա աչքի առաջ ունենանք միայն նախագասութեան գրեթէ միշտ ներկայ եղող երեք անհրաժեշտ անդամները, որ է, նախագասութեան ստորոգիչը, իր ենթական և իր պահանջած խնդիրը կամ խնդիրները:

Այս երեքը միշտ սերտօրէն կապուած են իրարու, իրարմով կը ջրանան և մարդկային արտայայտութեան մշտական մասը կը կազմեն նախագասութեան մէջ:

Ք. Արդ ո՞րն է յաջորդականութեան օրէնքը այդ երեք անդամներուն համար. կա՞յ օրէնք մը:

1. Առնենք երկու նախադասութիւն կազմուած միայն այդ երեք բառերով.

Մարդը տունը ծախեց.

Զօրավարը քաղաք մտաւ:

Ասիկա բան մը ըսելու ամենէն պարզ, ամենէն հանգիստ, ամենէն գիտական ու լուրջ ձևն է, ուր խօսողը իրողութիւն մը կը հաղորդէ և միայն կը հաղորդէ առանց որևէ անձնական մասնակցութեան ու միջամտութեան:

Եւ արտայայտութեան այս ամենէն հանգիստ ու անտարբեր ձևին մէջ անդամներուն դասաւորութիւնն է նախ ևնթական, ետքը խնդիրը և ամենէն վերջը ստորոգիչը՝ իր տարազն է՝ Ե—Խ—Ս:

Եթէ ստորոգիչը մէկէն աւելի խնդիրներ ունի՝ աւելի երկրորդական համարուող խնդիրը կրնայ դրուիլ ստորոգիչէն ետքը՝ գլխաւոր խնդիրը միշտ պահելով ստորոգիչէն առաջ: Օրինակ՝

«Եղբայրս հիւրը սննեակ հրաւիրեց» կրնանք ըսել նաև առանց արտայայտութեան խորքին դպած ըլլալու՝ «Եղբայրս հիւրը հրաւիրեց սննեակ»: Այդպէս ալ՝ «Ես հիւրը պարտէզ տարի» կամ «Ես հիւրը տարի պարտէզ»:

Այսինքն՝ ամենէն հանգիստ, գիտական-պատմական ոճի մէջ, երբ պատմողը կատարեալ չեղողութիւն կը պահէ և իր ըսածին մէջ իր հոգին չի խառնել՝ ստորոգիչը կը դրուի ենթակայէն ու խնդիրներէն ետքը. այսինքն բայ եղող անդամը անունը եղող անդամներէն ետքը: Միայն խնդիրներէն աւելի նըւազ կարեւորութիւն ունեցող երբեմն կրնայ անցնիլ ստորոգիչին հտեւը, տեսակ մը յաւելեալ կամ ուշացած լրացումով, և որ արդէն թեթեւակի չեղում մըն է բացարձակ չեղողութենէ:

Այդ չեղումը շատ աւելի աչքի կ'իյնայ. եթէ նըւազ կարեւոր համարուած խնդրի փոխարէն, ընդհանրապէս աւելի կարեւոր համարուած խնդիրը կ'անցնի ստորոգիչին ետեւը:

«Մարդը տունը Գեւորգին ծախեց»

«Մարդը տունը ծախեց Գեւորգին».

«Մարդը Գեւորգին ծախեց տունը»:

Այդպէս ալ՝ «Ես պարտէզ տարի հիւրը»:

2. Վերի բոլոր օրինակներուն մէջ տիրողը Ե—Խ—Ս տարազն է սակայն, երբ ստորոգիչը ենթակայէն ու խնդիրէն ետքը կու գայ բոլորովին:

Ըսուած խօսքը իր գիտական հանգիստէն և անձնակոտն անմասնակցութենէն զգալի կերպով դուրս կու գայ, երբ ստորոգիչը իր եր-

բորդ գիրքէն կը սահի գէպի ձախ, կը գրաւէ երկրորդ գիրքը՝ խըն-
դիրն ու խնդիրները նետելով իր ետեւը, Ե—Ս—Խ տարազով:

«Զօրավարը մտաւ քաղաք»

«Մարդը ծախեց տունը»

«Մարդը ծախեց տունը Գեւորգին»

«Եղբայրս հրաւիրեց հիւրը սինհակ»

«Ես առաջնորդեցի մարդը պարտէզ»:

Ամենքս իսկոյն կ'ըզգանք, որ խօսողը իր նախորդ վեհափառ
հանգիստը կորսնցուցած է, որ խօսողը անտարբեր զիտող մը ու
նկարագրող մը չէ միայն. այս կամ այն չափով գոհունակութիւն մը
կամ դժգոհութիւն մը ունի իր արտայայտութեան մէջ. բան մը դը-
պած է իր շահին, հաշիւին, սպասումին:

Այս անձնական միջամտութիւնը շատ աւելի կը շեշտուի, եթէ
նախադասութեան անունն անդամներէն խնդրի կամ խնդիրներու փո-
խարէն ենթական ըլլայ ստորագիշին ետեւը անցնողը.

«Քաղաք մտաւ զօրավարը»

«Տունը ծախեց մարդը»

«Տունը ծախեց մարդը Յակոբին»

«Յակոբին ծախեց մարդը տունը»

«Սինհակ հրաւիրեց եղբայրս հիւրը»

«Պարտէզ առաջնորդեցի ես մարդը»

«Մարդը առաջնորդեցի ես պարտէզ»:

Քիչ մը աւելի կամ քիչ մը նըւազ, բայց այս երկու տարադիւ-
րուն մէջ՝ ըլլայ Ե—Ս—Խ թէ Խ—Ս—Ե, երբ ստորագիշը երրորդ գիր-
քէն սահած է երկրորդ գիրքը, նախադասութիւնը կորուսած է այլ
ևս նախորդ չեղոք ու անմասնակից չունի. խօսողը հետաքրքրուած
է անձնապէս իր ըսածով. կա'մ իր ուզածն է կա'մ իր ուզածը չէ.
Քայց իր ցանկութիւնը զեռ շատ է զուսպ, արտայայտութեան հոսք
խօսողի հոգին կը խլրտի. հոգեկան շարժում մըն է, այո՛, բայց զեռ
միայն խլրտում մը, ո՛չ աւելի:

3. Իսկ երբ ստորագիշը երկրորդ գիրքէն ալ նորէն գէպի ձախ կը
սահի, կու գայ ու կը գրաւէ նախադասութեան առաջին գիրքը՝ խո-
սողի այդ հոգեկան մասնակցութիւնը շատ աւելի շեշտուած ու բացա-
յայտ կերպով կը ներկայանայ մեղի:

Երբ խօսողը կ'ըսէ՝ «Ծախեց մարդը տունը Գեւորգին» կա'մ
ներքին գոհունակութիւն մը ունի այդ իրողութենէն կա'մ շեշտուած
անբաւականութիւն մը, զարմանք մը, յուսախաբութիւն մը կամ ու-
րիշ որեւէ խայթըւած կամ գրգռուած զգացում մը:

Այս պատճառով ալ Ս—Ե—Խ կամ Ս—Խ—Ե տարազը կը գործա-
ծենք, ուր ստորագիշը բոլոր անունն եղող անդամները կը նետէ իր

ետեւը և ինքը կ'անցնի նախադասութեան զլուխը, երբ այս կամ այն աստիճանի հաճելի կամ տհաճ յուզում մը ունինք, որ մեզի կը խօսեցընէ, երբ կ'ըսպառնանք, կը հրամայենք, երբ կը խնդրենք կամ տարակոյս ունինք կամ վախ, երբ կը հեղնենք, կը յանդիմաննք, կ'անիծենք, կ'օրհնենք, սիրտ տալ կ'ուզենք:

«Սատկի՛ թող նզովից արմատը իր բանտին խորքը»:
«Երթա՛նք պիտի մենք ալ ամենուն գացած ճամբովը»:
«Մտածէ՛ր պիտի խօսք սալէդ առաջ»:
«Պատժե՛մ ես քոք փոքրիկը. երբե՛ք»:
«Սիրե՛մ քեզի. ղաւա՛կս, քու այդ ազնիւ գոացումիդ համար»:
«Ըսի՞ր դուն հօրդ տըւած պատասխանս»:
«Եկա՛ն, եկա՛ն մերինները գիւղէն. կառքը ճանչցայ»:
«Կը վախնա՛ս դուն ջուրէն. խոստովանէ՛»:
«Կը գրե՛մ քեզի այս նամակը տարակոյսով»:
«Դառնա՛ս պիտի դուն ալ իր ծառան»:
«Վասցա՛նք քու սպառնալիքէդ. ինչպէ՞ս չէ»:
«Ապրի՛ս իմ քաջս»:
«Կեցցէ՛ Հայաստան»:

Գ. Այսպէսով կը տեսնենք, որ երեք անհրաժեշտ անդամներու դասաւորութեան հարցը կապուած է խօսողի հոգեկան մասնակցութեան չափին հետ: Եւ այդ մասնակցութեան չափը ցոյց տւող սլաքը ստորոգիւնն է:

Երբ անուն անդամները իրմէն առաջ կը ձգէ և ինքը կը մնայ ամենէն ետքը՝ կը նշանակէ խօսողը անձնական մասնակցութիւն չունի իր ըսածին. ինքը պատմող մըն է, բացատրող մը, իրողութիւնը հասկընալ կ'ուզէ կամ հասկըցնել:

Երբ անուն անդամներէն միայն մէկը իրմէն առաջ կը ձգէ և ինքը քայլ մը առաջ գալով կը գրաւէ երկրորդ դիրքը, կը նշանակէ խօսողը բոլորովին անտարբեր չէ իր ըսածին, որոշ մասնակցութիւն մը, զրգում մը ունի ներքին, որ կը խօսի. բայց և այնպէս դեռ շատ մեղմ է ներքին յուզումը:

Իսկ երբ կու գայ խօսքին սկիզբը՝ յաջորդող բառերուն կարգը բոլորովին տակնուվրայ ընելով՝ ակնհերե կը դառնայ իր ներքին մասնակցութիւնը և գրգռուած զգացումներուն ներկայութիւնը:

Ասոր համար ալ երեք անհրաժեշտ անդամներու դասաւորութեան առաջին ձևը կ'անուանենք հանգիստ դասաւորութիւն, արտայայտութեան գիտական-պատմական եղանակը:

Անդամներու դասաւորութեան երկրորդ ձևը կ'անուանենք խլրտսոյն դասաւորութիւն, այսինքն արտայայտութեան մէջ զուսպ և սքողուած կերպով կայ հոգեկան միջամտութիւն:

Իսկ անդամներու դասաւորութեան երրորդ ձեւը կ'անուանենք յուզուած արտայայտութիւն, խօսողի բացայայտ զգացական մասնակցութեամբ:

58. Հետեւեալ Գալսաղասութիւններուն մէջ ընդգծե՛ք միայն անհրաժեշտ երեք անդամները:

Մեր թաղին ոստիկանները երէկ գիշեր վերի փողոցին անկիւնը հասկածելի օտարական մը ձերբակալեցին:

Մեր ոստիկանապետը կարեւոր դող մը կը նկատէ ձերբակալուածը: Հաւանորէն այդ մարդը վերջին ամիսներու երեք խոշոր գողութիւններուն հեղինակը պիտի ըլլայ:

Վարի յարկի կօշկակարը բռնուած գողը ոստիկաններով շրջապատուած ինքը անձամբ տեսեր է:

Անշուշտ ոստիկանները իրենց բռնած այդ նոր որսը չիտակ կեդրոնական բանտը տարին:

59. Նախորդ վարժութեան Գալսաղասութիւններուն միայն երեք անհրաժեշտ անդամները արտագրե՛ք ցոյցէն. եւ ամեն մէկ Գալսաղասութիւնը երեք անգամ՝ հանգիստ, խլիւղեմ եւ յուզուած ձեւով:

60. Դի՛ր յաջորդ Գալսաղասութիւններուն հետեւն ամեն մէկուն իր տարազը. առանց որեւէ կարեւորութիւն տալու վերադիր անդամներուն. իբրեւ թէ անոնք գոյութիւն չունենային:

Տո՛ւր ինքդ անձամբ իմ սրտագին բարեկեցութեան յարգելի ծնողներուդ:

Վերջին անգամ քեզի՛ն անդլիական ծխախոտ գնեցի. կը խնդրեմ՝ նոյն տեսակէն քսան տուփ ղրկէ՛ մեր տունը: Չմոռնա՛ս սակայն, ղըրկէ՛ իսկոյն:

Սմբատեանները իրենց տան առջեւ պարտէզի դրան աջ կողմը շատ գեղեցիկ հղիւնի մըն են տնկել տրեւր:

Կեցցե՛ն մեր աղնիւ տղաք. ներկաները ամենքն ալ շատ գոհ մնացին մերիններու համարձակ վարմունքէն:

Ես առ՞ւն դառնամ, թէ սպասեմ ձեզի հոս:

Սեդանիս վրայէն ո՞վ է վերուցեր իմ նոր գնած կարմիր երեսով տետրակը:

Ո՞ր շոգեհաւով մեզնիս կը ցանկայ յարգելի պարոնը:

Եթէ այս իրիկուն գիւղ բարձրանալու դիտաւորութիւնդ դուն գետ չես փոխած՝ կրնանք քեզի հետ երկուքով օթոյով մը միասին բարձրանալ:

61. Դարձո՛ւր հետեւեալ Գալսաղասութիւնները անդորր արտայայտութեան:

Սկսաւ անձրեւը կաթկթիլ խոշոր-խոշոր կաթիլներով: Արագ

վերցուցին սեղանը մերձենալով պատշգամբին ու սարին ներս խառնափնթոր իմ ննջարանս: Եւ հաղիւ կրցան գոցել պատուհաններուն փեղկերը, տեղաց անձրեւը անագին թափով և ողորեց հեղեղի պէս պարտէզն ու շուրջը:

Բայց մեղմացան յանկարծ իր դարկերը, աւարտեց կարծես իր ընելիքը: Չանցաւ քանի մը վայրկեան, դադրեցաւ ըողորովին և դուրս նայեցաւ ամպերուն ետեւէն ժպտուն արեւը. կը խնդար կարծես իր բրած այդ յորդ ու առատ կատակին վրայ:

Լըւացեր էր տուններն ու ծառերը, մաքրեր էր մուրն ու փոշին: Թարմացաւ ամբողջ բնութիւնը, ստացաւ ամեն ինչ նոր փայլ ու հագաւ պայծառ գոյնի մեր դիմացի մարգագետինը:

62. Աւելցո՛ւր հեճեւեալ նախադասութիւններուն յուզականութիւնը անդամներու այլ դասաւորութեամբ:

Քրիստափոր Քոլումպոս նոր ցամաք մը որք դրաւ Այդ ցամաքը Հնդկաստանի մօտերը կղզի մը կ'երեւակայէր: Բոյրոովին պատահական կերպով այդ նոր գտնուած աշխարհը ճամբորդի մը անունով Ամերիկա կոչուեցաւ: Այդ ճամբորդին անունը Ամերիկոս էր. Եւրոպա վերադարձին ան իր տեսած նոր երկիրները գրքի մը մէջ նկարագրեց, և չափերը անոր այդ գրուածքովը նոր աշխարհը ճանչցան:

63. Զարածիճի մանչուկը պարտէզի դրան վրայ երկար ականջներով էշ մը նկարեց: Եւ դեռ ուրիշ շատ մը աղուոր բաներ ալ պիտի նկարէր. բայց զգալիորէն իրան տէրը վրան հասաւ, նկարչի ապականութեամբ մը բռնեց, կաւիճին կտորը անոր ձեռքէն առաւ և չափազանցեալ լաւ կերպով իր անունը տուաւ զոմար մը պիտիկը տուն ճամբու դրաւ: Բայց դրան վրայ բարեբաղդաբար երկար ականջներով իշուկը մնաց, և մինչև այսօր ալ դեռ կը մնայ:



Բ. ՎԵՐԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԴԻՐՔԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Նախադասութեան միւս երկու լրացուցիչ անդամները՝ մակբայներն ու մակդիրները՝ արդէն իրենց անուան վրայի մակ մասնիկն ալ ցոյց կու տայ, աւելի յաւելեալ, աւելի վերադիր, կարծես աւելի երկրորդական լրացումներն են: Իսկ նախադասութեան երկրորդական անդամները՝ չաղկապներն ու ձայնարկները՝ շատ աւելի չեչուեալ կերպով երկրորդական կարեւորութիւն ունին: Եւ այդ պատճառով

այդ չորս անդամները աւելի անկախ ու աւելի ինքնուրոյն վիճակ մը օւնին նաև դասաւորութեան տեսակէտէն:

Ա. Մակբայը երբ նախադասութեան սկիզբը կը դրուի՝ կ'ըստանայ մասնաւոր ընդգծում մը. շտապ մը, շեշտուած մտահոգութիւն մը, այսինքն յուզական տարրեր:

«Դժբաղդաբար մարդ չկար ներսը»

«Անմիջապէս բժիշկը հասաւ օգնութեան»

«Կատաղօրէն վրայ տըւաւ թշնամին»:

Մակբայը երբ նախադասութեան մէջը կը դրուի, կը բռնէ սովորաբար երկրորդ տեղը՝ չհաշուած շաղկապ կամ ձայնարկ եղող բառերը: Ասիկա մակբայի ամենէն հանգիստ դիրքն է, և կը կորսնցնէ նախորդ ընդգծումը:

«Բոյրս այս վայրկեանիս ուր որ է կու գայ»:

«Մեկնիմ գուցէ ես ալ իրեն հետ»:

«Դիւղացին ձիով կ'ըշտապէր արտը»:

Դրէ՛ք մակբայները սկիզբը իսկոյն կ'ըզգացուի և՛ ընդգծումը և՛ անհանգստութիւնը:

Մակբայը նախադասութեան մէջ, երբ իր սովորական հանգիստ դիրքին մէջը չէ, գաղտնի կ'ըլլայ ստորոգիչին անմիջապէս առջեւը վամ ետեւը աւելի կարեւորութիւն ու շեշտ առնելով իր վրայ:

Նախադասութեան վերջը ինկած մակբայը իր իմաստին տեսակ մը տեւականութիւն կու տայ, իր ետեւէն քաշող արձագանգ մը, քաղմակէտի պէս բան մը:

«Մարդը նստելու էր աւազանին եզերքը տխուր»:

«Խանութպանը դանդաղ չամիչ կ'ուտէր հստիկ-հատիկ»:

«Անդին նետոց գլխարկը խոր մտքերու մէջ թաղուած»:

«Կ'երթար մարդը դաշտին մէջէն ծանր-ծանր քալելով»:

«Պատուհանէն բարեւս առաւ ուրախութեամբ»:

Բ. Մակդիրներուն քնական ու սովորական տեղը մակդիրուած քառին առջեւն է:

Եթէ քանի մը մակդիրներ կան նոյն բառին վրայ՝ որոշ ու հաստատ դասաւորութիւն մը ունին անոնք իրենց մէջ:

Մակդիրուածին անմիջապէս առջեւ կը դրուին ընդհանրապէս որակական մակդիրները, որակականներէն առաջ թըւական մակդիրները, թըւականներէն ալ առաջ ցուցական և ստացական մակդիրները:

«Բու այդ երկու յիմար առաջարկներդ ոչ-ոք ընդունիլ չի կըրնար» կամ «Այդ քու յիմար երկու առաջարկներդ»:

Դերբայական մակդիրները, մանաւանդ եթէ իրենց յատուկ խընդիրներն ու մակբայներն ունին, առաջ կ'անցնին որակական ու թըւական նոյնիսկ դերանուանական մակդիրներէն: Եւ անմիջապէս

իրենց կից իրենց առջևը կը պահեն իրենց մասնաւոր խնդիրներն աւայլ բառերը:

«Անցած շաբթու քեզմէ ստացած երկու երկար ու համով նամակները քանի մը տնգամ կարդացի մեծ հաճոյքով».

«Կոպիտ սխալներով լեցուն այս երկու տգեղ զրութիւնները անա՛նքներկայացուց ինծի»:

«Ամենուն առջևը քծնող քու այդ կեղծաւոր երկու երեսանի բարեկամդ առանց այլեւայլութեան ետ զրկեցի»:

Ուրեմն բոլոր մակդիրները մակդիրուած բառէն առաջ. աս է իրենց հանգիստ ու բնականոն դասաւորութիւնը: Անհանգստութիւն և յուզականութիւն կ'ըստանան, երբ կ'անցնին մակդիրուածին ետևը: Օրինակ՝ «Եղբա՛յր սիրելի», «Կեցած էր անշարժ պարտականութեան զինուորն անվեհեր», «Ծանր-ծանր կարգաւ սկսաւ մեր օրրորդը նազանի», «Հեծաւ իր ձին սպիտակ ու աշտանակեց»:

Շատ անգամ ստորոգիչը կը մտնէ ետ նետուած մակդիրին ու իր մակդիրուածին մէջտեղը՝ աւելի ևս շեշտելով անսովոր դասաւորութիւնը և իր յուզականութիւնը.

«Արջ մը տեսայ ձիւնի պէս սպիտակ»:

«Անգամ մը բացին թագաւորի արժանի»:

«Ինի թրաւ փարչ մը լեցուն»:

«Հագուստ մըն էր հագած թղիկ-թղիկ»:

«Ուրիշ տեսակի ալ կան թոյսեր»:

Երբ մակդիր մը ունեցող բառը յատկապէս ընդգծելու համար կը բերենք նախադասութեան սկիզբը՝ իր մակդիրը ո՛չ թէ անմիջապէս իր ետևը կ'անցնի, այլ ամբողջ նախադասութեան ետևը թէ՛ մակդիրի և թէ՛ մակդիրուածի ուժը աւելցընելով.

«Զմե՛ռ մըն էր այն տարին սաստիկ ցուրտ».

«Լուրե՛ր կու գան մեր սիրելի հայրենիքէն շատ սրտապնդիչ».

«Վա՛րդ մը իրեն նըւէր տարի կաս-կարմիր»:

«Դէ՛պք մը յանկարծ պատմեց մեզի վաղեմի»:

Եւ Շաղկապներու բնական ու սովորական տեղն ալ նախադասութեան սկիզբն է բոլոր անհրաժեշտ անդամներէն առաջ. բայց երկրորդ տեղն ալ կրնան զրաւել մակբայներու հետեւողութեամբ.

«Լուրերը սակայն քիչ մը ետքը հերքեցեցան».

«Քեզմէ միայն թէ՛ ճշդապահութիւն կ'ըսպասեն ամռնք».

«Դրամը քանի որ դեռ չէ վճարած՝ կրնաս յարմարեցնել».

«Ի՛նքզ օրովհետեւ ներկայ չէիր՝ տեղեակ չես»:

Ոճի քմայնոտ աղատութեամբ մը և անշուշտ յաւելեալ յուզական արամադրութեամբ՝ շաղկապներէն մէկ-քանի հաար կրնանք նետել և նախադասութեան վերջը.

«Դու ալ երևած տեղն իրենդ սխալ եղաւ բայց».

«Առաջարկս ժողովի կողմէն մերժուեցաւ սակայն».

«Պիտեցի, այո՞. իրաւունքը իմա էր որովհետեւ»:

Դ. Իսկ ձայնարկները, ըլլան բացական չութիւն թէ դիմառնու-
թիւն, կը դրուին սովորաբար նախադասութեան սկիզբը, մանաւանդ
ծրա ստորագիծն ալ սկիզբն է:

Երբ նախադասութիւնը անուն բառով մը սկսի՝ անբնական չէ,
որ ձայնարկը գրաւէ երկրորդ տեղը:

Շաղկապները արդէն միշտ ձայնարկներէն առաջ կը դրուին:

Ձայնարկները նախադասութեան մէջ ուրիշ տեղեր ալ կրնան
դրուիլ, բայց միշտ ալ աւելի կամ նշագ աղարուստականութեամբ:

Ե. Բառերու յաջորդականութեան հետ կապուած այս անհան-
գըստութեան կամ յուզականութեան հոգեբանական խորքը այն իրո-
շութիւնն է, որ բան մը ըսելու ասին մեր մտքին համար ամենէն
աւելի կեդրոնը եղող հաղափարը կամ պատկերը ամենէն աւելի կեն-
դանի ու գրգռուած կ'ըլլայ մեր ուղեղին մէջ և բնական կերպով
անոր բառը կու գայ մեր շրթունքին աւելի շուտ:

Ասկէ զատ մեծ դեր կը խաղայ նաև արտայայտութիւնը սովորա-
կան եղանակէն դուրս բերելու իրողութիւնը: Ամեն բան, որ
ընթացիկէն ու առօրեայէն կը շեղի մեզի անակնկալի կը բերէ և
յաւելեալ ուշադրութիւն կը քաշէ իր վրայ, ցնցում կուտայ:

64. Փակագիծներուն մէջ դրուած մակբայները դի՛ր Գալսաղասու-
քեան մէջ ի՞ր իմաստին ամենէն աւելի յարմարող տեղը:

Մարդը վերցուց հեռախօսին լսակը (խակոյն), որ եղելութիւնը
չնկերոջ տեղեկացընէ (տեղն ու տեղը), բայց ընկերը արդէն մեկնած
էր գրասենեակէն (դժբաղդաբար):

Երկու աղջիկները կը քալէին (թևթևի) գետի եզերքն իվեր. և
մեզի քնաւ չնկատեցին ալ (տարուած իրենց խօսակցութեամբ):

Այդ նոր ու հետաքրքիր լուրը տեղեկացայ լրագիրներէն (այս
առտու), միայն թէ չէին յիշած եղելութեան ամսաթիւը (թերևս
դիտմամբ):

Վեր ցատկեց պաշտօնեան իր նստած տեղէն (յանկարծ) և սկսաւ
նրկար մտածել (ձեռքը ճակտին):

Պաշտօնեան վեր ցատկեց իր նստած տեղէն (զարմանքով) և նայ-
ուածքը դէմքիս գամեց (հարցական):

Մութը ակսեր էր թանձրանալ ծառերուն տակը (արդէն):

Ծառերուն տակը մութը թանձրանալ էր սկսած (սիչ-քիչ):

Սկսեր էր մութը թանձրանալ ծառերուն տակը (առանց նկատելի
ըլլալու):

65. Բացասե՛հ՝ երկու կարճ խօսքով, թե վերի իւրաքանչիւր պարագային ի՞նչու մակբայը այդ դիրքի վրայ դնել նախընտրեցիր:

66. Փակագծի մէջ եղող մակդիրները դի՛ր իրենց բնականոն տեղը: Բոլոր մանրամասնութիւնները հաղորդեցի իրեն (այս): Այս հատորդ ո՞րու յանձնեմ (քու), որ քեզի բերէ: Դնամ ձեռնոցներս հագնի՞մ (նոր), թէ՞ հին ձեռնոցներս (ծակ-ծրկուած):

Կի՛նը նստեր էր իր դրան սեմին (շօթաղդ, սևեր հագած):

Երկար ժապաւէնները կապեր էր թելին (երկու):

Կը խնդրեմ, որ երկու գիրքերը (իր, կազմած, այս) յանձնես եղբորդ:

Պատմութիւն մըն է ատիկա (զարմանալի, յուզիչ, սիրուն), որ ես լսեցի հերոսի շրթունքներէն (զըւարթ, իր իսկ):

67. Դի՛ր մակդիրները անսովոր դիրքերով, բայց իմաստալից:

Իրենց գիւղի մասին ուղղակի սարսափելի բաներ կը պատմէր: Անուշաբոյր թաւիչ վարդ մը դրեր էր բաց բատուհանը նուրբ, երկար ու ճաշակաւոր բաժակի մը մէջ:

Յանկարծ կի՛նը ուժգին ապտակ մը իջեցուց տղու դէմքին:

Լեռն վեցերորդ եղաւ մեր Կիլիկեան թագաւորութեան վերջին անբաղդ գահակալը:

Եւրոպական գիտունները շատոնց եկած են այդ միւսնոյն տարօրինակ եղրակացութեան:

Ներսէս Աշտարակեցի ժե՛ռ դարու հայ կարեւոր դէմք մըն է:

68. Կրճատե՛հ՝ շաղկապները որչափ կրճատ՝ առանց մտքի յսակաւութեանը վնասելու:

Քանի որ իմ առաջարկած պայմաններս ձեռնտու չեն ձեզի, ուրեմն մեր մէջ հարցը փակուած է, որովհետեւ ձեր դրած զինները ես ոչ մէկ կերպ ընդունիլ չեմ կրնար:

Սակայն խնդիրը կը փոխուի անշուշտ, եթէ ձեր նշանակած գիւնորուն վրայ կարեւոր գիշուժ մը յանձն առնէք: Եթէ ընել կարողանա՞ք այդ լուրջ գիշուժը, ես ալ իմ կողմէս կը ջանամ բան մը աւելցնեմ, բայց միայն շատ թեթեւ յաւելում մը: Հետեւաբար վերջին խօսքը ձերն է, յարգելի՛ պարոն:

69. Շագկապներ աւելցո՛ւր կրցածիդ չափ շա՛տ, բայց բոլորն ալ շա՛տ բնական ու իրենց տեղին:

Օթօն խրուեր էր ցիւր, տեղէն չէր կտրելի շարժել: Չորս հոգով լծուեր էինք, բոլոր ուսով կը հրէինք, կը քաշէինք, անօգուտ:

Մօտերը տուն չկար, մարդ չկար: Որոշեցինք մեզմէ մէկը զըրկենք ետ, քիչ մը առաջ մեր անցած գիւղը. նոր օթօ մը առնէ ու

զայ, կապենք մեր անչարժացած օթօին, հանենք չորը, ճամբանիս շարունակել կարողանանք:

Երկու մեր ընկերները մնացին օթօին քովը. եղբայրս ու ես ճամբայ ինկանք ոտքով ետ:

Գ. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՇԵՇՏԸ

Ա. Նախադասութեան մէջ քառերու դասաւորութեան յաջորդականութիւնը խօսողի յուզագոյացական աշխարհին է կապուած, աւելի կա՛մ նըւաղ չափով խօսողի զգացական մասնակցութիւնը ցոյց կու տայ:

Նախադասութեան շեշտը ընդհանրապէս սերտօրէն կապուած է խօսողի մտածողութեանն ու դատողութեանը:

Ամեն նախադասութեան մէջ կայ բաւ մը, որ արտայայտութեան ծանրութեան կեդրոնն է, որուն վրայ կը յենուի նախադասութիւնը և որ նախադասութեան միւս բաւերուն մէջ ամենէն աւելի կարեւորն է այդ վայրկեանին խօսողի տեսակէտէն, որուն համար ալ իսկապէս հիւստեւած է այդ ամբողջ նախադասութիւնը:

Ահա՛ այդ բացառիկ կեդրոնական կարեւորութիւն ունեցող բառն ալ բնականօրէն աւելի յստակ ու աւելի ուժեղ կ'արտասանուի, կ'ընդգրծուի, կը շեշտուի:

Նախադասութիւններու այդ շեշտը, որ խօսելու ատեն միշտ կը դնենք, գրելու ատեն ընդհանրապէս զանց կ'ընենք. կը դնենք յատկապէս այն պարագաներուն, երբ վախ ունինք, որ սխալ հասկըցուինք և կարդացողը մեր ուղածին պէս չարտասանէ:

Սովորութիւն է դարձած դնել շեշտը հրաման եղող ստորոգիչներուն վրայ, ինչպէս և կոչերուն ու դիմառնութիւններուն վրայ:

Բաւերու գիրքին ու յաջորդականութեան հետ ընդհանրապէս կապ չունի նախադասութեան շեշտը: Միայն յուզուած արտայայտութեան մէջ, երբ ստորոգիչը եկած է խօսքին սկիզբը, բնական կերպով նախադասութեան հիմնական իմաստը կրողը կը դառնայ ըստօրոգիչը. որով և նախադասութեան շեշտն ալ իր վրայ կ'իյնայ:

Իսկ հանգիստ կամ խլրտուն արտայայտութեան ժամանակ նախադասութեան մը բոլոր տեսակի անդամներն ալ, ինչ գիրքի մէջ ալ որ գտնուին, կրնան ստանալ իրենց վրայ նախադասութեան շեշտը, և տաք համեմատ ալ ամեն անգամ կը փոխուի նախադասութեան արտայայտած իմաստը:

Քարտուղարս երէկ գիշեր մեկնեցաւ Լոնտոն. ո՛չ ուրիշ մը ։
Քարտուղարս երէ՛կ գիշեր մեկնեցաւ Լոնտոն. ո՛չ ուրիշ օր ։
Քարտուղարս երէկ գիշեր մեկնեցաւ Լոնտոն. ո՛չ զերեկը ։
Քարտուղարս երէկ գիշեր մեկնեցա՛ւ Լոնտոն. չի մնաց ։
Քարտուղարս երէկ գիշեր մեկնեցաւ Լոնտոն՝. ո՛չ ուրիշ տեղ ։

Բ. Նախադասութեան շեշտի տեսակէտէն մասնաւոր կարեւորութիւն ունին մակդիրներն ու մակբայները նախադասութեան մէջ։ Եթէ նախադասութեան գլխաւոր շեշտը արդէն իրենց վրայ չէ՝ առնուք միշտ կ'ըստանան երկրորդական շեշտ մը։

Մակդիրը ըստւածը՝ խորքը նայած կձկըւած նախադասութիւն մըն է։ «Կարմիր թաշկինակ մը ունէր ձեռքը»։ Իսկապէս երկու միտք կը պարունակէ իրար հիւսուած. նախ որ ձեռքը թաշկինակ մը ունէր, և երկրորդ, որ այդ թաշկինակը կարմիր էր։ Երկու մտածում է, ուրեմն և երկու չեղտ, քիչ մը իրարմէ տարբեր ուժի։

Այդպէս ալ բոլոր մակբայները՝ մոմանակի, կտակածի և որակի՝ կծկըւած նախադասութեան պէս բան մըն են. նոյն դերը կը խաղան ստորոգիչի համար. ինչ որ մակդիրը անուանի մը համար: «Տղան ու-րախ-ուրախ մտաւ սենեակ»։ Նախ կը նշանակէ, որ տղան մտաւ սենեակ և երկրորդ որ չափ ուրախ էր։

Եթէ ինքնին կձկրւած նախադասութիւն մըն է նախադասութեան մէջ մակդիրի կամ մակրայի դեր խաղացողը՝ այս երեւոյթը բացայայտ կը դառնայ բոլորովին, քանի որ ատոնք արդէն գիտենք նախադասութիւններ են իրենց դիմաւոր բայէն զրկւած ու փակած ուրիշ նախադասութեան մը :

Հոսկէ կ'առաջանայ այն երեւոյթը, որ երբ նախադասութեան մը մէջ մակդիրներ կան ու մակրոյնիք, նախադասութեան մէջ կ'ու-
նենանք մէկէ աւելի ընդգծում. մէկը՝ բուն նախադասութեանը ա-
ւելի ուժեղ ('), միւսները աւելի տկար (''):

ՏՀԱԼԱՆՈՐԷ՛՛Ն ԵՂՐԱ՛ՅՐԱ ՄՂ ԱԽԻՄԻ ԴՄՅՈՒ

«Տղաքք ճամբա՛յ, ինկոն առտրւա՛ն գէմն:

«Մափոքր ուսերո՛՛ւն աղջիկները ձո՛րը իջան»:

ԱՎԵՐ դատկեց խնդր այդ երազէն սարսափոմ'ծ»:

«ԱՅ՝Լ ԿԵՄԵԼ ԵՐ ԿՐ ԱՂՈՒՆԵՐ ԱՂՈՒՄԻՆ ՎԻՐԱՅՈՒ

«Հանե՛ց գրպանէն իր տհաճի՛ն թաշկիռակը»:

«Պա՛ր հով մը կը փչէր պտուղահանէն նե՛րս» :

Ուրեմն մակդիրներն ու մակբայները նոր շարժում ու ելեւէջ կը մտցընեն նախադասութեան մէջ. միեւնոյն ժամանակ նախադասութեան իմաստն ալ կը հարստացընեն: Ասոր համար ալ՝ թէ՛ բունտստեղծները, թէ՛ հետադիմները և թէ՛ աղուոր խօսիլը սիրողները բոլորն ալ առատօրէն կը գործածեն մակդիրներն ու մակբայները:

Գ. Շեշտի տեսակէտէն իր յատուկ դերը ունի մեր լեզուին մէջ
էական բայը:

Եւ, ես, է, էի, էիր, էր և ասոնց յոգնակին, երբ բացասական
չեն, իրենց վրայ երբեք չենաւ չեն առնել: Ատոր փոխարէն կ'երթան
կը կցուին նախադասութեան ամենէն աւելի ուժեղ շեշտուած բառին
ետեւ, որով կը դառնան իրենք միջոց մը ընդդէմը զօրացնելու
և ցայտուն դարձնելու:

«Լոնտոնէն նոր նամակ ստացե՛ր ես, գիտե՛մ», «Լոնտոնէն նոր
նամակ ես ստացեր», «Լոնտոնէն նո՛ր ես նամակ ստացեր», «Լոնտո-
նէ՛ն ես նոր նամակ ստացեր»:

«Մեր մէջ մեծը քո՛յրս է», «Մեր մէջ մե՛ծն է քոյրս», «Մեր
մէ՛ջն է քոյրս մեծը»:

«Ամբողջովին համաձա՛յն էին առաջարկիս», «Ամբողջովին էին
համաձա՞ն առաջարկիս», «Ի՛մ առաջարկիս (կամ ի՛մ առաջարկի՛ս)
էին ամենքը համաձայն»:

Նոյն իսկ երբ էական բայի ներկան ու անկատարը կապուած է
դերբայի մը, իբրև դերբայական ժամանակ՝ նորէն էական բայը կ'եր-
թայ շեշտուած բառին ետեւը՝ առաջ անցնելով իր դերբայէն:

«Իր վերջին վէպը կարդացե՛ր եմ», «Իր վերջին վէ՛պն եմ կար-
դացեր», «Իր վէպերէն վերջի՛նն եմ կարդացեր»:

«Ապրանքի տիրո՛ջն եմ խօսելու ինքս անձամբ», «Ինքս անձա՛մբ
եմ խօսելու ապրանքի տիրոջ հետ», «Խօսելու՛ եմ ապրանքի տիրոջ
հետ անձամբ»:

Միայն մակդիրին ու մակդիրուածին մէջտեղը մտնել չի կրնար
էական բայը. կը բաւականանայ մակդիրուածին ետեւ գալով, երբ
մակդիրն է գլխաւոր շեշտուածը: «Բու նախո՞րդ նամակդ եմ ստա-
ցած», «Վարդերո՛ւ փունջ մըն էր ձեռքի՛նը», «Լեւո՛ն թագաւորն է
կիլիկեայի առաջին թագակիրը»:

ՅՕ. Մակդիրը վերածե՛ր զաճ նախադասութեան:

Իւզաններկ պատկեր մը կախեր էին դաշիճը:

Բու գեղագիր գրութիւնդ ուրախութեամբ թղթատեցի:

Դինիին մտերմութիւնը վայլած խումբ մը կէս գիշերին երգելով
Վանցնէր փողոցէն:

Օրիորդը ձեռքի ուրում թուղթը արտասովոր ժպիտով մը երկա-
ցեց ինծի:

Ի՛նչ զարմանալի աչքեր ունի դրան մէջ կեցած սա տղան:

Շատ թաւ ու թանկագին գորգերով ծածկուած էին յատակները:

Կողմնակի փոքրիկ դռնով հանրային պարտէզը մտան երկու հոգի:

21. Մակբայցները վերածե՛ք զայս նախադասութեան,
Փեշերնին հաւաքած, բոպիկ ոտքերով անցան գետակը:
Մեծ ոգեւորութեամբ արտասանեց մարդը իր երկար ճառը:
Վաղը նորէն կը հանդիպիմ քեզի:
Դժբաղդարար ինքը անձամբ ներկայ չէր մեր վերջին հանդի-
պումին:

Բացատրութիւնս լսելուն պէս շտապեց իրենց կեցած հիւրանոցը:
Անմիջապէս եկանք փոխադարձ համաձայնութեան:
Դուք է հանդէսը յետաձգած ըլլան, քանի որ դուռը գոց է և մէջ-
տեղ մարդ չկայ:

22. Արագբութեանդ վրայ դի՛ր նախադասութեան եօթները:
Մայրամուտի ցոլքերուն տակ ծառերը խօլական ստուերներ կը
նետէին:

Իմ հեռակայ բարեկամէս լուր մը առինք վերջապէս,
Յուզումէն դողացող ձեռքերով ձեռքս կը սեղմէր կարօտով:
Ստացայ այսօր այնքան սպասած հեռագիրս:
Ուժեղ կամքի տէր բնաւորութիւն մըն է սա տղան:
Իմ խօսքս խօսք է միշտ. բարեկամ:
Ձարմանալու կարծեմ ոչինչ չկայ ըսածիս մէջ:
Դողացող ձեռքով լամպը դրաւ սեղանին վրայ:

23. Էական բայը այնպէս դասաւորե՛ք, որ ուժ օայ եօթինն:
Եկողը էր նամակաբե՛րը:
Եկողն էր նամակաբե՛րը:
Ընկերնե՛րը պատմեր են եղելութիւնը
Ի՛ր յանցանքը միջամտելն էր:
Իր յանցանքն էր միջամտելը:
Իր յանցանքը միջամտելն էր:
Նոր էի ճաշը աւարտա՛ծ:
Ճա՛շը նոր էի աւարտած:
Նոր ճաշը աւարտա՛ծ էի:
Լուսնին լո՛յսը ինկեր էր դէմքին:
Լուսնին լոյսը ինկեր էր դէմքին:
Դէմքին ինկեր էր լուսնին լոյսը:

24. Որո՞նք են նախադասութեան անհրաժեշտ անդամները. և
ինչո՞վ են առոնք անհրաժեշտ:

25. Ո՞րն է ստորոգիչին ամենէն հանգիստ ու ամենէն անհան-
գիստ դիրքը նախադասութեան մէջ:

26. Ո՞րն է խնդրներու սովորական տեղը նախադասութեան
մէջ:

77. Ո՞րն է ենթակայի բնական տեղը. և ե՞րբ կը շարժի տն իր տեղէն:

78. Ե—Խ—Ս, Ե—Ս—Խ և Խ—Ս—Ե տարազներէն ո՞րն է ամենէն աւելի իր հանգիստէն դուրս եկած:

79. Որո՞նք են յուզուած նախադասութեան տարազները:

80. Նախադասութեան ո՞ր անդամներուն դիրքը համեմատաբար ամենէն աւելի կայուն է:

81. Ձեւակերպէ նախադասութեան յուզականացման օրէնքը:

82. Ինչո՞ւ համար յուզուած նախադասութեան մէջ ստորոգիչը սկիզբը կու գայ:

83. Ինչո՞ւ համար մակդիրը, երբ մակդիրուածին ետեւ կը նեւտենք՝ նախադասութիւնը յուզում կ'ըստանայ:

84. Ինչո՞ւ համար մակդիր ու մակբայ անդամները երկրորդ շեշտ մը կու տան նախադասութեան:

85. Ի՞նչ բան է նախադասութեան շեշտ ըսուածը:

86. Ըսուած խօսքին ի՞նչ նրբութիւն կ'աւելցընեն ճախադասութեան անդամներուն տեղադրութիւնները և ինչ նրբութիւն կ'աւելցընէ նախադասութեան շեշտը:



ԵՐՐՈՒՂ ԽԱՏՈՒՄԸ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՍԱՐԱԴԱՍ ԿԱՊԱԿՑՈՒՄԸ

Ա. Նախադասութիւն մը կրնայ յաջորդել նախորդին բոլորովին անկախ կերպով, միայն իմաստի ներքին կապակցութեամբ, առանց արտաքին լեզուական որեւէ կապի. այս կերպով իրարու յաջորդող նախադասութիւնները կ'անուանենք անջատ նախադասութիւններ: Իսկ երբ ներքին իմաստի կապը կ'ամրացուի նաեւ արտաքին լեզուական արտայայտութեամբ մը, որ երկու նախադասութիւնները իրարու կ'օղակէ, նախադասութիւնները կը դառնան զօդուած:

Անշատ նախադասութիւններով է կազմուած հետեւեալ պարբերութիւնը. «Արդէն կէս օր էր, վերադարձանք տուն. նետուեցանք բազմօցներուն վրայ, սաստիկ յոյնած էինք. կը ջանայի քնանամ, քունս կը փախէր. զուրսէն կը լսուէր սուր ճոխնչ մը. ականջս կը խայթէր»: Այդ միեւնոյնը կը դառնայ զօդուած յաջորդականութիւն, երբ զանազան շաղկապներով կամ շաղկապի դերը խաղացող օղակ բառերով նախադասութիւնները կապենք իրարու. «Արդէն կէս օր էր, երբ վերադարձանք տուն եւ իսկոյն նետուեցանք բազմօցներուն վրայ, որովհետեւ յոյնած էինք սաստիկ. որչափ կը ջանայի քնանամ, այնքան քունս կը փախէր, իսկ զուրսէն կը լսուէր սուր ճոխնչ մը. որ ականջս կը խայթէր»:

Նախադասութիւնները իրարու զօդող այդ դերը կը կատարեն գլխաւորապէս շաղկապները. այլ և քանի մը բաղդատական ու յարաբերական դերանուններ և մէկ երկու մակրայ տեսակ մը շաղկապանալով:

Երբ իրարու զօդուած նախադասութիւններէն ամեն մէկը միւսի հանդէպ իր անկախութիւնը կը պահէ՝ կապակցութիւնը կը կոչուի նաւաստագրաս:

Հաւասարադաս կապակցութիւնները կը բաժնենք երկու տեսակի՝ համընթաց և հակընթաց հաւասարադասութիւն:

Բ. Համընքաց կապակցում է, երբ նախադասութիւնը կ'աւելիայ նախորդին վրայ իբրեւ իմաստի յաւելում մը նոյն ուղղութեամբ, երբ գործողութիւնները կ'երթան իրարու զուգահեռ կամ իրարու ետեւէ:

1. Պարզ յաւելման չաղկապները կու տան պարզ համընթաց կապակցում. «Մարդը նստաւ և ծխամորճը հանեց»։ «Բազմութիւնը խուժեց ներս, մենք եւս բաղմութեան հետ»։ «Ներկայ էի, այլեւ մասնակից աշխատութեան»։ «Գրեցինք իրեն, նաեւ խնդրեցինք, որ ջուշացնէ: բացի այդ բացառիկ վճար մըն ալ խոստացանք»:

2. Ընդգծուած յաւելման չաղկապները կու տան ընդգծուած համընթաց կապակցում. «Ե՛ւ կը սիրեմ, ե՛ւ կը պատժեմ»։ «Թէ՛ վըշտացիր է, թէ՛ բարկացեր»։ «Ո՛չ քու օգնութիւնդ է ինծի պէտք, ո՛չ ալ օգնութիւնդ երեսին տալը»։ «Ո՛չ միայն դժգոհ էր, այլեւ բարկացած»:

3. Գերադաս յաւելման չաղկապները կու տան գերադաս համընթաց կապակցութիւն. «Ընդունեցի, մինչեւ անգամ խօսք տըւի, նոյնիսկ յանձն առայ, որ իր խնդիրը կը կարգադրեմ»։ «Ան ո՛չ իսկ ետեւս նայեցաւ և ո՛չ իսկ պատասխան մը տըւաւ»։ «Գոհ էր գտած ընդունելութիւնէն, մանաւանդ անոնց վերջին առաջարկէն»:

4. Եզրակացութեան չաղկապները կու տան եզրակացքնող համընթաց կապակցում. «Ուրիշ առարկութիւն չունիս, ուրեմն հարցը կրնանք փակուած նկատել. հետեւաբար քեզի հետ վաղը առտու կը մեկնինք, ուստի հիմակարնէ պէտք է պատրաստութիւններդ տեսնես»։ «Եւ կ'ըսէ՛ք ալ պէտք է տեղեկացնեմ»:

5. Բաղդատական գերանունները զոյգ գործածութեամբ՝ ամեն մէկը նախադասութեան մը սկիզբը՝ կու տան զուգահեռ համընթաց կապակցութիւն. «Ինչպէս կրթես, այնպէս կը մեծնայ»։ «Որչափ բանի մը հտեւէն իյնաս, այնքան կը ձախողի»։ «Քանի կը հանդիմանեմ, այնքան երեսը կը պատուի»:

Գ. Հակոնքաց կապակցում է, երբ իրարու գոյուած նախադասութիւններուն իմաստները կա՛մ ամբողջովին, կա՛մ մասամբ, կա՛մ կարծես թէ իրարու կը հակադրուին, իրարու հակառակ կը հոսին, իրարու հակառակ պիտի հոսէին:

1. Հակասութեան չաղկապներով իրարու գոյուած նախադասութիւնները կու տան հակասութեան կապակցում. «Գացինք պզտիկ պտոյտ մը ընելու, բայց ցուրտը ստիպեց, որ տուն վերադառնանք»։ «Գալը սիրով կու. գամ, սակայն ինչ պատասխան տամ հոսքը հօրս»։ «Ամենքը ելան ոտքի, իսկ ինքը միշտ նստած էր»։ «Տունը թողնելու միտք չունինք, հապա նորոգել պիտի տանք»:

2. Առարկութեան շաղկապներով իրարու զօգուած նախադասութիւնները կու տան առարկութեան կապակցում: Այստեղայ որ ներկայ կ'ըլլամ, թէեւ շիտակը գլուխս կը ցաւիս: Այէս ոսկի է տըւեր անպիտանը, թէպէտեւ քաղաքիս հարուստներէն կը համարուի: Անաղանք, միայն թէ այս կօշիկներով կարելի չէ: Աճատ կարելի է՝ այդ գրութեան այլեւս պէտք չունենանք, այսու ամենայնիւ դուն գրելիքդ պատրաստէ, ով գիտէս:

3. Քան շաղկապով կ'ըստանանք համեմատութեամբ հակադրութիւն մը: Ահա է վճարենք, քան թէ անհամ թղթակցութիւններու տեղի տանք: Այը նախընտրեմ նստիմ գործս աւարտեմ, քան թէ պարապ թափառիմ: Ան ալ ձեզի հետ գալ կ'ուզէի, քան միսմի-նակս տունը մնամ:

87. Հետեւեալ զօգուած նախադասութիւնները վերածէ՝ անջատ նախադասութիւններու:

Ե՛ւ պէտք է թշնամիին դիմադրէինք ե՛ւ պէտք է ժողովուրդին պաշար հասցընէինք, իսկ մեր մարդիկը շատ քիչ էին:

Ընդունեցինք իր առարկութիւնները, բացի այդ վտարիկ յաւելում մըն ալ խոստացանք, սակայն օգուտ չըրաւ. ան ո՛չ միայն մեր յաւելումը բանի տեղ չդրաւ, այլ և հեզնելու ձեւեր առաւ:

Երբ բակը մտանք, տերվիշը և ո՛չ իսկ տեղէն երեքաց, նոյն-իսկ գլուխը չդարձուց, թող թէ միեւնոյն ժամանակ բան մըն ալ կը ծամծմէր:

Որքան բանի մը վրայ սիրտ կը հատցընես, կարծես այնքան աւելի կը բարդանայ գործը և ինչքան վախճան անյաջողութենէն, այնչափ ձախ կ'երթայ:

Ձէ թէ իր բարկութենէն կը վախնայինք, այլ իր տարիքը կը յարգէինք, բայց ինքը իր պատիւը պահել չկրցաւ. ընդհակառակը, սկսաւ լիզուին եկածը խօսիլ և բոլոր ներկաներուն անախորժութիւն պատճառել:

Գնա՛, ներողութիւն խնդրէ՛, ապա թէ ոչ ծանր կ'ըլլան հետեւանքները: միայն թէ արագ շարժուէ՛, որովհետեւ կէս ժամէն պիտի մեկնի:

Քանի որ անկարող ենք մեր ուղածին պէս մեր կեանքը տնօրինելու, ուրեմն հարկադրուած ենք յարմարելու կեանքի ու բաղդի բերածին: հետեւաբար խորհուրդ կու տամ քեզի, որ չմերժես ոսքդ եկած պաշտօնը:

88. Անջառ նախադասութիւնները վերածե՛ք գողուած կապակցութեան :

Ներկայացայ, ինքս անձամբ թոյլտրուեթիւն խնդրեցի, մերժեց ժողովին ներկայ չէինք. ժողովին որոշումը յայտնի է մեզի. օրական չորս ժամ աշխատանքով այդ գործը չենք կրնար հասցընել. անկարելի է :

Ի՞նչո՞ր չորս ոտք ունեցող կենդանիները կ'անուանենք չորքոտանի. չու՛նն ալ չորս ոտք ունի. ան ալ չորքոտանի է :

Կը խօսէին ճպուռի պէս, կ'աշխատէին մրջինի պէս :

Կ'ընեմ ձեռքէս եկածը, կ'աշխատիմ գիշեր-ցերեկ. յոյս չունիմ՝ հասցընել կարողանամ :

Ինքդ եկո՛ւր, եղբայրդ դրկէ՛, գործը կերպ մը կարգադրէ՛ :

Կակուղ կը վարուիմ՝ երես կ'առնէ, խիստ կը վարուիմ՝ քէն կ'ընէ. լնչպէ՛ս վարուիմ իր հետը :

Հարցը փակեցինք. համոզեցինք՝ երթայ :

Նկարիչ չեմ. մեքենային մասերը հրաշալի կը նկարեմ. նկարիչ մը հետս չի կրնար մրցիլ :

Նսպաստակը արագավազ է. չու՛նը նըւազ արագավազ է :

Եկեր ես՝ եկո՛ւր աւարտենք սա գործը :

89. Հեռեւեալ րնդգծուած համընթաց կապակցութիւնները վերածե՛ք պարզ համընթաց կապակցութեան :

Ո՛չ ընդհանուր սովորութեան ենթարկըւիլ կ'ուզէ, ո՛չ ալ կը համարձակի բացարձակ կերպով հակառակելու :

Ե՛ւ կը քայլէին իրարու հտեւէ մայթին վրայէն, և՛ կ'երգէին ուսանողական ազատ երգ մը :

Ո՛չ միայն աւարտեր եմ այսօրուան դասս, այլ և վաղուան պարտաւորութիւններուս մէկ միծ մասը գրած եմ արդէն :

Թէ՛ գրասենեակ պիտի հանդըպին դեռ, թէ՛ պիտի հասնիմ վերջին գնացքին :

90. Պարզ համընթաց հեռեւեալ նախադասութիւնները դարձո՛ւր գեղադաս համընթացութեան :

Իր եղբայրն ալ ստիպուեցաւ բողոքելու. Եւ տող մը պատասխան չգրեց մեզի: — Նախագահն ալ անցաւ հակառակողներուն կողմը: — Ճշլ եւ իշխանը ժպտեցաւ բարեհաճ: — Եկած էին քոյրերը, հարսը, աղջիկները, նահւ մեծ մայրը: — Դրեր էին մէջտեղ ամեն տեսակի գիւղական բարիք, կաթնիղէն ու պտուղ, բացի այս մորթերէն ոչխար մը:

91. Դի՛ւր լարմաւ շաղկապ մը կհեծուցն սեղը եւ քովը նստակէ, քե ինչ սեսակի կապակցութիւն առաջացաւ:

Տաքութիւնէն մարմինները կը լայնան, . . . կաւը ընդհակառակը

կը սեղմրէի: — Դեռ փոքրիկ պտոյտ մը կրնանք ընել, ... ժամանակը արդէն բաւական ուշ է: — ... ինչո՞ւ է այսքան բաղձութիւն հաւաքուեր: — Այդ նեղ փողոցէն պէտք չէ անցնէիր, ... պէտք է երթայիր վարի հրապարակէն: — Հարկ է, որ ինքք երթաս, ... ես ժամանակ չունիմ: — ... այդքան կը ցանկաս ու կ'աշխատիս, պէտք է, որ յաջողիս: — Ձեր բոլոր եզրակացութիւնները կ'ընդունիմ, ... առարկութիւն մը չունիմ:

92. Այնպէս փոխեցե՛ք շաղկապը, որ հետեւեալ գողուած նախադասութիւններէն երկրորդը, փոխանակ ուռաջինի բացառութիւնը ըլլալու, դառնայ անկէ հաճած եզրակացութիւն մը: Մէկ շաղկապը գործածէ մէկ անգամ եւ ամեն անգամ բովը նշանակէ, քէ ինչ կապակցութիւն ստացուեցաւ:

Նամակդ ստացեր եմ նոյն օրը, որովհետեւ թղթատարը հիմա կարգին կը բանի: — Ներկայացման համար ուրիշ խումբ մը հրաւիրեցինք, քանի որ դուք կը մերժէք խաղալը: — Հսկի, որ գեշերով թիչի են կանչեր, ինչու որ տաքութիւնը չատ է բարձրացեր: — Մենք ալ մասնակից էինք ընդհանուր ուրախութեան, այսինքն մենք ալ կը ջատկէինք ու կը պարէինք: — Նաւամատոյցին վրայ յանկարծ մեծ իրարանցում ինկաւ, չէ որ բանտարկեալները նաւ պիտի փոխադրէին: — Երեք անգամ սայթաքեցայ, անոր համար որ չատ էի յագնած սեպ վերելքէն:

93. Գրե՛ք օտար հաս համընթաց կապակցութիւն ունեցող նախադասութիւններ, օտար հաս ալ հակընթաց կապակցութեամբ նախադասութիւններ:

94. Նախ կ'արտագրես իրենց մէջը զուգահեռ համադրութիւն ունեցող կապակցութիւնները. ետէն ալ առանձին հակադրական կապակցութիւնները՝ բովը նշանակելով ճեռակը:

Տղայ մը որքան յանդիմանեա, այնքան երեսը կը պատի, իսկ օրհասի մեղմ վարուիս իր հետ, այնչափ տեղի կու տայ: — Տղայը սածղ ինչպէս վարժեցընեա, այնպէս կը մեծնայ, բայց միշտ գերադասելի է բան մը իր կամքովը ընել տաս, քան հրամայեա ու սպառնաս: Ինչքան աշխատեցայ, որ համոզեմ քոյրդ ու բոլորս միասին այս գիշեր երթանք թատրոն. սակայն տնկարելի եղաւ, թէեւ ինքը կ'ըսէր, որ երկար ժամանակ է թատրոն չէ եղած. որչափ ուրախ պիտի ըլլայի, բայց ան հրաժարեցաւ. բոտա՛ւ աւելի կը գերադասեմ տունը մնամ այս գիշեր, քան դուրս ելլեմ:

Հոգիս հանեց այդ կտորեղէնի վաճառկանը. ինչպէ՛ս կը դովէ իր ապրանքը և ի՞նչ չղոցեորթ խօսքեր մեր հասցէին, թէեւ առաջին անգամն է. որ խանութը ոտք կը դնեմ. բայց իբրեւ թէ հայրիկս կը ճանչնայ եղեր. իր ուզած գիներն ալ սարսափելի, աւելի սուղ, քան

միւս սովորական խանութները կը ծախեն. քանի խոյս տալ փորձեցի, այնքան պնդեց. այնքան ըրաւ, որ վերջապէս ամըջցայ ու բան մը առիւ:

Տեղ մը որչափ շատ է խոնաւութիւնը, այնքան փարթամ կ'ըլլայ բուսականութիւնը: Գիտնա՞ս, որչափ կը սիրեմ առատ ու ճոխ բուսականութիւնը:

Թէպէտ այդ հարցի մասին բաւական բան հարգացեր եմ արդէն, բայց միայն հիմա կ'ըզգամ, թէ որքան խեղճ է դեռ իմ ունեցած դիտութիւնս:

Մարդը յուսահատ կը ջանայ կերպով մը կարգի բերէ իր տնտեսական վիճակը, միայն թէ ինչքան ճիշդ կը թափէ, այնքան գործը ձախ կ'երթայ: Գուցէ աւելի աղէկ կ'ըլլար, եթէ թողնէր այդ գործը, քան թէ այսքան իղուր չարչարուէր:



Չորրորդ հասնում

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍՏՈՐԱԴԱՍ ԿԱՊԱԿՑՈՒՄԸ

Ա. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ա. Երբ իրարու զօգուած նախադասութիւններէն մէկը միւսի լըրացունէն է միայն և դեր ու դոյութիւն կ'ըստանայ անոր հետ միացած վիճակի մէջ, կապակցութիւնը կը կոչուի ստորադասական:

Ստորադասական կապակցութեան մէջ նախադասութիւններէն մէկը գլխաւոր է, միւսը երկրորդական:

Եթէ ստորադաս կապակցութեան ժամանակ երկրորդական նախադասութիւնը կապուած չէ ուղղակի ստորոգիչին, այլ կապուած է միայն գլխաւոր նախադասութեան որեւէ մէկ անուն նադամին, այսինքն ենթակային, խնդրի մը, մակրայի մը կամ մակդիրի մը, և միայն այդ մասնաւոր անդամին յրացուցիչն է ու բացատրիչը, երկրորդական նախադասութիւնը կ'անուանենք յարաբերական նախադասութիւն և կապակցութիւնն այժմարբերական ստորադասութիւն: «Տունը, որ անցած տարի գնեցիք, կրկնակի արժէք ունի արդէն»։ «Մէջտեղն ալ տնկեցինք ծառ մը, որ շուտով իր ստուերին տակ պիտի աճէ ամբողջ այդ տարածութիւնը»։ «Աշտանակը առի իր ձեռքէն, որ կը դողար»։

Յարաբերական նախադասութիւնը միշտ կարելի է վերածել բարդ մակդիրի մը. «Աշտանակը առի իր զոդացող ձեռքէն»։ «Մեր անցած տարուան գնած տունը»։ «Ամբողջ տարածութիւնը իր ստուերին տակ առնող կամ առած ծառ մը»։

Յարաբերական ստորադասութեան մէջ երկրորդական նախադասութիւնը գլխաւորին զօգողը յարաբերական դերանուններն են՝ որ, ով, ինչ, ուր, երբ:

Բ. Յարաբերական նախադասութեան հիմնական կապը որ դերանունն է, որ կրնայ դրուիլ ամեն հոլովով, եղակի ու յոգնակի:

Իր թիւը կախուած է յարաբերուած անունէն: Երբ գլխաւոր

նախադասութեան մէջ իր յարաբերութեամբ անունը յոգնակի է, երկրորդական նախադասութեան աւ յարաբերականը կը գրուի յոգնակի, եթէ եղակի է՝ եղակի։ Վեր րիւր չիշը, որ վարը սեղանին վրան էր։ Վեր բեր չիշերը, որոնք վարը սեղանին վրայ էին։

Սակայն յաճախ յարաբերականը կը գրուի եղակի, երբ յարաբերութեամբ յոգնակի է։

Առաջին՝ երբ յարաբերութեամբ թէև յոգնակի է, բայց իրեւ մէկ ամբողջութիւն մը կը նկատուի։ այդ միութեան մը իմաստը տալուն կը նպաստեն բոլոր ու ամբողջ մակդիրները, այլև որոշիչ յօդը շատ անգամ։ Ռոյտր Գրքերը, որ աչքէ հմ անցուցներ։ Ռոյտր յօդադրութիւնները, որ եկեր է գլխուս, սրեր են կամքս։ Այն շարադրութիւնները, որ մինչև հիմա գրեր էի, տղայական բաներ էին։ Ամբողջ ըսածներն ու պատմածները, որ մէկը հաւաքելու ըլլար, հատոր մը կը գաղնար։

Երկրորդ՝ երբ ու յարաբերականը մէկէ աւելի եղակի անուններ կը յարաբերէ գլխաւոր նախադասութեան մէջ կրնայ եղակի ալ գրուիլ, յոգնակի ալ։ Հացն ու ջուրը, որ իր գլխաւոր սնունդն էր՝ կամ ճորտնք իր գլխաւոր սնունդն էին։ Թէ՛ ատելութիւնը և թէ՛ նախանձը, որ մարդուս վատթարագոյն խորհրդատուներն են՝ կամ ճորտնք մարդուս խորհրդատուներն են։

Երրորդ՝ ընդհանրապէս ու յարաբերականը կարելի է գրեթէ միշտ եղակի դնել երբ ուղղական հոլով է։ Մարդի՛կ, որ իրենց բանն ու գործն են չիներ ուրիշները բամբասելը։ Ձեռքերս, որ յուզումէն կը դողային։

Յարաբերականի հոլովը աւելի ևս անկաս է իր յարաբերութեան, կախումն ունի երկրորդական նախադասութեան ստորոգիչի պահանջէն։ Ստացայ նամակդ, որուն սահմանքը կ'ըսպասէիս։ Մտախեցի այն մարդուն, ուրկէ երբեք խեր տեսած չեմ։ Նայէ՛ այս ծաւէն-ծուէն դրօշակին, որով մենք յաղթեցինք։

Ու յարաբերականը կրնայ միայն որոշիչ յօդ ստանալ և միայն ճշգրիտի մէջ և միայն ուղղական ու տրական հոլովներուն վրայ՝ որը, որուն։ Յոգնակի յարաբերութեան մը յօդող ու-ը յօդ չառներ։ Գրքերը, որ բերեր եմ։ կարելի չէ ըսել՝ ճորտ բերեր եմ։

Յարաբերական նախադասութեան մէջ, երբ ու յարաբերականը ենթակայ է և գրուած է յոգնակի յարաբերութեան փոխարէն եղակի, ստորոգիչը կը դնենք եղակի, եթէ յարաբերութեամբ ամբողջութիւն մը կը նկատենք։ Կր դնենք յոգնակի, եթէ շատերէ կազմուած ըլլալէ աչքի առաջ ունենանք։ Գետակը, որ գահավէժներէ կը թափին։ Գիծարողութիւնները, որ եկեր է գլխուս։ Հացն ու ջուրը, որ իր գլխաւոր սնունդն էր՝ կամ ճոր իր գլխաւոր սնունդն էին։

Պ. Յարաբերական նախադասութիւնը կը զօգուի ուլ յարաբերական գերանուենով, երբ գլխաւոր նախադասութեան յարաբերուածը անձ մըն է, քայց անորոշ անձ մը, գերանուենաբար առնուած՝ «Այն անձը», «Այն մարդը», «Անիկա» իմաստով: «Կրնայ գնիլ աճին մէկը, ուլ կը փափաքի»։ «Այն մարդը, ուլ իր խօսքը յարգել չը՛ղիտեր»։ «Կը յաջողի ան, ուլ կ'աշխատի»։ «Դժբաղդ է այն էակը, ուլ կտրուած է իր ժողովուրդէն»։

Ունի ու կը գործածուի միայն ուղղական հոլով. միւս հոլովները փոխ կ'առնէ իր ընկեր յարաբերականներէն՝ ուր, ուրիկ, ուրով:

Այս անորոշ ու գերանուենաբար դրուող յարաբերուածները շատ յաճախ կը զեղջըւին. «Կրնայ ընել, ուլ կը փափաքի», «Կը յարգուի, ուլ իր խօսքը յարգել գիտէ»։ «Կը յաջողի, ուլ կամք ունի»։

Արտայայտութիւնը աւելի թափ կ'ըստանայ մանաւանդ, երբ յարաբերական նախադասութիւնը գլխաւորին առջեւ կ'անցնի. «Ուլ կամք ունի» կը յաջողի»։ Յիւլ շտապեց'ներս մտաւ»։

Գ. Յարաբերական նախադասութիւնը կը զօգուի ինչ գերանուենով երբ յարաբերուածն է ընդհանուր կերպով աչքի առնուած իրեր, «Այն բաները», «Այն ամենը», «Այն բոլորը», որ և յաճախ չի գըրուիր, քայց միշտ հասկընալի կը մնայ իմաստով: «Այն բոլորը, ինչ (որ) բացարեւ իմ քեզի»։ «Հասկըցուցի իրեն այն ամենը, ինչ (որ) անհրաժեշտ էր»։ «Դժգոհ մնաց այն բոլորէն, ինչ (որ) տըւի»։ «Պահանջէ՛ք ամեն բան, ինչ որ սիրտդ ուզէ»։ «Յայտնի էր իրեն ամեն բան, ինչ որ ըսել կ'ուզէինք»։

Այս յարաբերական նախադասութիւններն ալ կ'անցնին յաճախ իրենց գլխաւոր նախադասութեան առջեւ. «Ինչ կ'ուզես՝ ըրէ՛ք»։ «Ինչ կ'ուտէ՛ք թող ուտէք»։ «Ինչով հարկ ըլլայ՝ կը փոխարինմ»։

Ե. Յարաբերական նախադասութիւնը կը զօգուի ուր գերանուենով, երբ յարաբերուածը տեղը ցոյց տըւող անուն մըն է. «Կ'երթամ քաղաք, ուր հանդէս կայ այսօր»։ «Դիւզն է միացեր, ուր կը խընամուի»։

Կը գործածուի միայն ուղղական ու քաղաական հոլովներով՝ ուր, ուրիկ. միւս երկու հոլովները փոխ կ'առնէ որ յարաբերականէն:

Երբ յարաբերուածը հոս, հոն, հոն և նման գերանուն մըն է, այսինքն արդէն ինքնին անորոշութիւն մը, սովորաբար կը կրճատուի. «Դնա՛ (հոն). ուր կ'ուզես»։ «Կ'ապրինք, ուր կրնանք»։ «Գողէ՛ գլուխդ, ուր քեզի հաւատցող գտնես»։

Այս յարաբերական նախադասութիւններն ալ շատ յաճախ կ'անցնին գլխաւորին առջեւ. «Ուր կ'ուզես՝ գնա՛»։ «Ուր հաց՝ հոն կաց»։ «Ուր հաճելի՝ հոն աճելի»։ «Ուր ապրիս՝ հոն տեղի գլխարկը ծածկէ»։

Զ. Յարաբերական նախադասութիւնը կը կապուի երբ գերանու-

նով, եթէ գլխաւոր նախադասութեան մէջ յարաբերուածը ժամանակ ցոյց տըւող բառ մըն է. «Անիծուի՛» այն օրը, երբ ես ծնայ». «Այն ժամանակ, երբ մենք ներսը գրադուած էինք». «Այս ձմեռ. երբ քարեկենդանը մօտենայ». «Գալ տարի, երբ գարունը բացուի». «Գիշերները, երբ լռութիւնը կը տիրէ»:

Միայն ուղղակիւնը կը գործածուի. միւս հոլովները փոխ կ'առնէ որ յարաբերականէն աշտատ իրկուելը, որուն անհամբեր կ'ըսպաւէինք. «Այն ամառը, ուրկէ կ'ըսկսի իմ պատմութիւնս». «Այն անմոռանալի օրը, որով մենք հիմա կը հպարտանանք»:

95. Ընդգծե՛ յարաբերական դերանունը եւ ճշգրտե՛ փոխ, քէ ի՞նչ անդամ է յարաբերական նախադասութեան մէջ:

Լուրը սուտ ելաւ: որ ես հաղորդեի էի քեզի: Այն խօսքը, որ արտէ կողմ գայ, արտի կը խօսի: — Կը նայէի խրոխտ աղիքին. որ կու գար, կը փշրուէր ժայռին վրայ: — Ամենեւին յարմար չէ ինծի այն դերը, որ խաղալ կ'առաջարկեն: — Իր քոյրն ու փոքրիկ եղբայրը, որ նաւ պիտի նստին, հիմա նաւահանգիստ տարաւ: — Կատուն, որ միշտ գէշ-գէշ կը մլուէր պատին վրայ, հեռացուցեր են:

Կարգացածիդ այն էջը, որ ամենէն աւելի հաւնիս, նշանակէ: — Ջուրին արժէքը գիտէ ան, որ անապատ մը կ'անցնի: — Ահա՛ այն պարոնը, որ պիտի միանայ քեզի: — Աղուոր ծաղիկ մըն է սա, որ դեռ պիտի աճի: — Աղուոր ծաղիկ մըն է ասիկա, որ անպատճառ պիտի աճեցընեմ:

Այլիկը, որուն ձեռքէն բռնած կը տանէի, իմ քրոջս գաւակն է: — Եւ հողը, ուրկէ իր հացը կը հանէ, սուրբ է գիւղացիին համար: Խմէ՛ կենացս և փշրէ՛ գաւաթը, որով խմեցիր կենացս: — Արտը, որ նոր էր հնձած, խուզած գլխու կը նմանէր: — Մովը, որ կապոյտ էր, կը տարածուէր մինչեւ հորիզոնը: — Ա՛ն իմ մատիտս, որ կարմիր է: — Կը ճանչնամ իր քոյրը. որ իրմէն փոքր է:

96. Վերի յարաբերական կապակցութիւններուն յարաբերումները յոգնակի դարձնելու եւ ստոր համեմատ կազմե՛ յարաբերական նախադասութիւնը, ուր կ'ընդգծես կապը եւ ստորգիշը:

97. Հետեւեալ յարաբերական կապակցութիւններուն մէջ յարաբերական որը փոխադրե՛ ուր, երբ, ինչ, ո՞վ յարաբերականներով, ուր որ հնար է:

Ըրի ամեն բան, որ ձեռքէս կու գար: — Թող խօսի ան, որ քիչ-միչ վարժութիւն ունի խօսելու: — Իրիկուան դէմ, որ մարդը գայ, զրկեցէք մեզի: — Չմեռները, որ կատաղի հովերը կը փչեն, անակը ցրտահար կը դողար: — Կը յաջողի այն մարդը, որ վատահ է:

ան, որ անվտան է, դժուար կը յաջողի — Այս տղան արդէն ուսած է այն ամենը, որ այդ կարգին մէջ կ'աւանդուի — Անոթի մարդը կ'ուսէ ամեն բան, որ կը գտնէ. կուշտն է միայն, որ ուտել կ'ուզէ այն բաները, որ իր սիրտը կ'ուզէ — Վերցո՛ւր կեանքէն այն ամենը, որ կրնաս. կ'ըսէ տրական սկզբունքի տէր մարդը:

98. Յարմար յարաբերական կապ մը դի՛ր կեսեռուն հողը:

Վերցուց շինն ու բաժակը, ... դրած էին ափսէին մէջ: — Կ'ատէր մուկն ու մորեխը, ... իր արտերուն զլխաւոր թշնամիներն էին: — Տեղեկութիւնները, ... հաւաքեր եմ իր մասին, շատ նպաստաւոր չեն: — Փորձեցէ՛ք անգամ մը այս հագուստները, ... պիտի ծպտի՞ք պարահանդէսին: — Ստացայ գրքերը այն պարոնէն, ... խօսած եմ ձեզի: — Ստացեր էր մէկը այն եղջերուներէն, ... լեցուն է մեր վերի անտառը: — Բազմութիւն շատ կար. ... շատերը սաւ կայն եկած էին բոլորովին պատահաբար: Բերել տըւի վերջին զոյգերն ալ, ... դեռ մնացեր էին պահեստը: — Այս տարի ցորենն ու գարի ցանեցինք, ... յուսամ առատ բերք են տալու: — Այս տարի ցորենն ու գարի ցանեցի, ... յուսամ առատ բերք ենք ստանալու: — Անկիւնը դիզեց ձմերուկները, ... յատկացուած էին ծախուելու: — Անկիւնը դիզեց ձմերուկները, ... հասունութիւնը դեռ կասկածելի էր: — Սկսաւ քաղել այն ծաղիկները, ... արդէն բոլորովին բացուեր էին: — Սկսաւ քաղել ծաղիկներ, ... գեռ լաւ չէին բացուած:

99. Յարմար յարաբերական նախադասութիւն մը կցէ հետեւալ իւրաքանչիւր նախադասութեան:

Դեռիս ծախեց իր կալուածքը: — Զինուորը դանդաղ սկսաւ բարձրանալ սանդուղներէն: — Դրագիրները գլուխնին կախած լուռ կ'աշխատէին: — Մեր պահեստներուն մէջ ա՛լ ապրանք չմնաց: — Եւ առաջնորդին հետ մտան զինագործին աշխատանոցը: — Դրքոյկիս ապագրութիւնը գալ շարժու կ'աւարտի: — Այս տարի նըւէր բերաւ ինծի պատի սիրուն օրացոյց մը: — Վաղուան համար դեռ հինգ թըւարանական խնդիր ունիմ լուծելու: — Այդ լսւորը մեծ զարմանք պատճառեց բոլորիս: — Արծիւը թռի մէկ հարուածով բարձրացաւ մինչև ժայռին գագաթը:

100. Բաղադիր կամ բարդ մակդիրները վերածե՛ յարաբերական նախադասութեան, առանց իմաստի փոփոխութեան:

Չեմ մոռնալու հրեք վերջին ճամբորդութեան իմ վրաս թողած ապաւորութիւնը: — Մտադիր եմ ծախելու գետին միւս կողմը զըտնըւող մեր այգին: — Մարդը սկսաւ շուրջը դիտել ամենուրեք ուշադրութիւնը գրաւող անհանգստութեամբ մը: — Ներս մտաւ ձեռքը ահագին փունջ մը բռնած փոքրիկ աղջիկ մը: Դոնէ վերադարձո՛ւր

արդէն կարգացած հատորներդ: — Սեղանիս տակէն ծայրը կրծած մատիտ մը գտայ: — Այդ կինը բարեգործութիւնը սիրող ողորմած հոգի մը ունի: — Տիկինը շատ բարեգործ անձ մըն է: — Պէտք է զընել տամ աւելի ուժեղ ելեքտրական լամպ մը: — Սրտաճմլիկ ձայներ կը լսուէին: — Դրուսիչ տեսք մը ունէր տղան: — Եւ շատ գեղեցիկ խօսուածք մը: — Երկարահասակ մարդ մըն էր, խոշոր գլխով գաւազան մը ունէր: — Կլոր շէնք մը: — Կարճ հագուստ:

101. Յարաբերական նախադասութիւնները վերածէ՛ բարդ կամ բազմադիր մակդիրի մը:

Հեռագիրը, որ ստացաւ, մեր առևտրական ներկայացուցիչէն էր: — Լսեցիր անշուշտ փորձանքը, որ եկաւ գլխուս: — Կը տեսնե՞ս սա դէմի տունը, որուն պատուհանները այդպէս լուսաւորուած են: — Կրակ կը թափէր արևէն, որ հասեր էր զենիթը: — Կատուներս, որ կորսուեր էր, գտնուեցաւ: — Այն տղերքը, որ դուն սրբագրեցիր, ես նորէն արտագրեցի: — Քուրիկդ ճաշակ մը ունի, որ շատ դժուարահամ է: — Բացատրութիւնները, որ ինքը տըւաւ ինծի, հարթեցին միջնորդէս: — Պիտի գումարէի այս թիւերը իրարու վրայ, որոնք անզոյգ էին: — Ընտրէ՛ միայն այն գնդիկները, որոնք կարմիր են:

102. Կրիսէ՛ աւելորդ յարաբերուած բառերը գլխաւոր նախադասութեան մեջին:

Նստեցաւ հոն, ուր քիչ մը առաջ ընկերն էր նստած: — Ապրէ՛ հոն, ուր քեզի կը սիրեն: — Եկայ հոս, ուր սիրտս կը քաշէր: — Չգնաց այն տեղերը, ուր կ'ըսպասուէր: — Պիտի յաջողի այն անձը, ով վճռականութիւն ունի: — Խօսեցաւ ամեն մարդ, որ շնորհք ունէր: խօսեցաւ և ան, ով շնորք չունէր: — Թո՛ղ առաջին քարը նետէ ան, ով չէ մեղանշած: — Կր հեռանայ այն մարդը, ով հակառակ է, կը մնայ ան, ով համաձայն է: — Հասկցո՛ւր վերջապէս ինծի ալ այն ամեն բաները, ինչ որ երկար-բարակ քեզի կը բացատրէր: — Դժգոհ մնաց այն բոլորէն, ինչ որ տըւինք իրեն: — Պատմեց այն ամեն բաներու մասին, ինչ որ տեսեր էր: — Ջանա՛, որ հետզհետէ վերցընես մէջսեղէն այն թուր բաները, ինչէն որ դժգոհ են ուսուցիչներդ: — Ընտրէ՛ այն ժամանակը, երբ քեզի յարմար է: — Այցեւելեցինք այն տոնները, երբ արդէն մուլթը կոխելու վրայ էր: — Նոգեկառքը շարժուեցաւ այն վայրկեանին, երբ ոտքերնիս դրինք սանդուղին:

103. Նախորդ վարժութիւնները նորէ՛ն արագգրէ՛ միայն յարաբերական նախադասութիւնները ղեկով գլխաւորէ՛ն առաջ եւ կրճատելով աւելորդ բառերը:

Բ. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ա. Յարաբերական նախադասութիւններէն զոտ՝ միւս բոլոր երկրորդական նախադասութիւնները կապուած կ'ըլլան գլխաւոր նախադասութեան ստորոգիչին, որ ըսել է կը վերաբերին ամբողջ գլխաւոր նախադասութեան և ո՛չ թէ անոր մէկ որեւէ բառին:

Երբ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան համար պայման մըն է, որուն համեմատ որ գլխաւոր նախադասութեան գործողութիւնը ընթացք կ'ըստանայ, երկրորդական նախադասութիւնը կ'անուանենք պայմանական և կապակցութիւնն ալ պայմանական ստորադասութիւն:

Պայմանական ստորադասութիւնը կ'ըլլայ երեք տեսակ. թէական պայմանով, կանխակալ պայմանով և ժամանակի պայմանով:

Բ. Թեական պայմանի շաղկապն է թե կամ եթե, ինչպէս և անոնց կրկնակները՝ թե ուր, եթե ուր: «Պատուէրները իսկոյն կ'ուղարկեմ, եթէ գնորուն համաձայն ես». «Ինթէ լաւ աշխատելու ըլլանք՝ այսօր կ'աւարտենք». «Մենք ալ հրեշտակ կը դառնայինք, թէ որ մեր ուսերուն զոյգ մը թեւեր ունենայինք»:

Թէական նախադասութիւնը տրամաբանօրէն միայն ապառնի կամ վաղապառնի ժամանակով կրնայ ըլլար, քանի որ գործողութիւնը դեռ սկսած չէ և սկսիլը այդ պայմանի գործադրութենէն է կախուած: Սակայն հայերէնի մէջ շատ յաճախ կատարեալ ժամանակով ալ կը գրուի թէական նախադասութիւնը, քոյց միշտ ապառնի իմաստով. «Ինթէ դիմացանք՝ կը յաղթենք», այսինքն «եթէ դիմանանք». «Եթէ համոզեցիր՝ յաջողած ես». «Կը շահի, եթէ ծախել կրցաւ»:

Թէական նախադասութեան թե կամ եթե շաղկապները գրեթէ միշտ կարելի է փոխարինել ուր դերանշնով, որ ալ ևս անթեք շաղկապի մը դերը կ'ըստաննէ. և այս պարագային պայմանական նախադասութիւնը սովորաբար առաջ կ'անցնի. «Որ համաձայնի՝ այսօր իսկ կ'ըստորագրենք պայմանագիրը». «Որ գտու ըլլաս՝ շատ պիտի ուրախանամ». «Որ գնացքը չփոխցընէ՝ իրիկունը կը հասնի»:

Գ. Կանխակալ պայմանի շաղկապն է քանի կամ քանի ուր, կը մատնանչէ կանխորոշ եղելութիւն մը, որուն համեմատ կը դատուի գլխաւոր նախադասութեան արտայայտած գործողութիւնը: «Քանի որ չէ ներկայացած՝ իր իրաւունքը կը կորսնցընէ». «Քանի որ պիտի մերժէիր, ինչո՞ւ դրիր թեկնածութիւնդ». «Քանի որ այդքան վարժ կը կարգաս՝ մէկ-երկու օրէն կ'աւարտես»:

«Բա՛նի որչա՛ի տեղ կրնանք զործածել քէ կամ եքէ շաղկապները . Եթէ նախադասութեան ստորագիշը վաղապառնի, յարակատար ու վաղակատար ժամանակով է դրուած . Եթէ պիտի մերժէ՝ դնելու չէր իր թեկնածութիւնը» . Եթէ ըսեր է՝ հիմա ինչո՞ւ կ'ուրանայ» . Եթէ խոստացեր էր՝ ինչո՞ւ չըսաւ մեզի» . Եթէ տըւած չեմ՝ պա՛հանջել ալ չեմ կրնար» :

Դ. Ժամանակի պայմանին շաղկապներն են երբ դերանունը և մինչեւ կցորդը, ինչպէս և իրենց կրկնակները՝ երբ որ, մինչեւ որ : Արեւելեան հայերէնէն սկսած է մուտք գործել մեր գրականութեան մէջ նաև հեճ կամ հեճ ու շաղկապը : Երբ Գալու ըլլա՞ս՝ կը վըճարեմ» . «Երբ որ պէտք ըլլայ՝ կը ներկայանամ» . «Երբ որ ներս մտնեն՝ ոտքի կ'ելլաք» . «Մինչև վերջացընես՝ կը վերադառնամ» . «Մինչև որ մեկնի՝ թող մնայ մեզի» . «Հենց որ երեսս նայեցաւ՝ խնդալս բռնեց» . «Հենց որ նամակս ստանաս՝ ամիշնպէս պատասխանէ» . այսինքն Երեսս նայեցաւ թէ չէ» , Երեսս նայելուն պէս :

104. Յաւաբերական ցախադասութիւններուն կապը ընդգծե՛ մեկ գծով, պայմանական ցախադասութիւններուն կապը ընդգծե՛ երկու գծով :

Ինծի բե՛ր ընկալագիրը, որ պիտի ստանաս — Ինծի բե՛ր ընկալագիրը, երբ որ ստանաս — Եթէ ընթերցումդ երկար պիտի տեւէ, լաւ է մեկնիմ — Եթէ ընթերցումդ, որ երկար կը տեւէ, դեռ պիտի շարունակուի՝ լաւ է մեկնիմ — Թէ որ ձեր դիտաւորութիւնը Գործակցին է, այդքան դժուարութիւններ մի՛ հանէք : Բարբառութիւնները կը խեղդեն մեր գործակցութիւնը, որ ձեր ալ դիտաւորութիւնն է :

Ըսաւ՝ մինչև տուն կ'ընկերանամ քեզի : Մինչև չընկերանայ ինծի՝ ես չեմ մեկնիր տուն : — Ընկերացաւ ինծի մինչև գետը, ուրկէ ճամբան երկուքի կը բաժնուի — Մինչև իրիկուն չըլլայ՝ թող չհեռանայ : — Մինչև իրիկուն կը պահես մեզի — կը պահես մեզի մինչև իրիկունը հասնի, որ մեր ազատ ժամանակն է :

Քանի որ լրացուցած ես յանձնառութիւնդ՝ ուրիշ պահանջ չունիք քեզէ : — Քանի որ աւարտած ես արդէն չէնքին յոտակագործը, որուն աշխատն կ'ըսպասէի, կը յայտնեմ քեզի շնորհակալութիւնըս : — Քանի աշխատութիւն որ աւարտեի ես, աշխատն քաղաքի օրեր ունիս կեանքիդ մէջ, — Ա՛յ, բաղդաւորութիւն մըն է աշխատանք մը լրացընիլը, որով փառքերու փունջ մը կը պսակուի, քանի որ երկ ու զործ փառք ըսել է :

105. Հետեւեալ իւրաքանչիւր պայմանական կապակցութեան ետեւը կը դնես իր իմաստին տարբերութիւնը:

Եթէ հասած են օգնական զօրքերը՝ յաղթանակը ապահով է:—
Քանի որ հասած են օգնական զօրքերը՝ յաղթանակը ապահով է:—
Որ հասած են օգնական զօրքերը՝ յաղթանակը ապահով է:

Երբ որ զրքերը ստանամ՝ կը յայտնեմ քեզի:— Թէ որ զրքերը ստանամ՝ կը յայտնեմ քեզի:— Մինչեւ որ զրքերը ստանամ, կը յայտնեմ քեզի:— Որ զրքերը ստանամ՝ կը յայտնեմ քեզի:

Քանի որ ստորագրութիւն էք տրւած՝ պէտք է յարգէք պայմանը:— Թէ որ ստորագրութիւն էք տրւած՝ պէտք է յարգէք պայմանը:— Երբ որ ստորագրութիւն էք տրւած՝ պէտք է յարգէք պայմանը:

Քանի որ հիւրերը դեռ չեն եկած՝ աւարտենք այս հարցը:—
Քանի դեռ հիւրերը չեն եկած՝ աւարտենք այս հարցը:— Մինչեւ որ հիւրերը գան, աւարտենք այս հարցը:— Երբ որ հիւրերը գան, աւարտենք այս հարցը:— Աւարտենք այս հարցը մինչեւ հիւրերը, որ պիտի գան:

Քանի որ ստանձնեմ էք՝ պէտք է կատարէք:— Թէ որ ստանձնած էք՝ պիտի կատարէք:— Երբ որ ստանձնես, պէտք է կատարես:— Որ ստանձնեմ ես՝ պէտք է կատարես:

106. Հետեւեալ իւրաքանչիւր նախադասութիւնը վերածե՛ք ստորագոյն կապակցութեան եւ փոխարինէ՛ք նո՛ր տեսակի ստորագոյնութիւնը:

Մեկնելու համար անհրաժեշտ եղող թղթերը կը խնդրեմ ձեզմէ:—
Վարպետը գալուսն պէս ինծի տեղեկացո՛ւր:— Թող երկու տող գրէ՛ ինծի համաձայն ըլլալու պարագային:— Առաջարկս ընդունուեցաւ:—
Ուղղողը կրնայ մասնակցիլ:— Սուտ խօսողին ով կը հաւատայ:— Անգամ մը առածնիդ ալ ետ տալ չէք կրնար:— Ձգո՛ւչ եղիր յարդի տակէն վազող ջուրէն:— Հազիւ քիչ մը կարգի բերինք իր խառնակութեամբ հաշիւները:— Հազիւ կարգի բերինք իր խառնակած հաշիւները:— Հաշիւները անգամ մը խառնըւելուն պէս ալ դժուար է կարգի բերելը:

107. Գրե՛ք ստորագոյն կապակցութիւններ ա) քեական պայմանով:—
բ) կոնխական պայմանով եւ գ) ժամանակի պայմանով:

108. Գրած կապակցութիւններուդ մէջ, ուր հնար է, թէ-ն փոխարինե՛ք որ-ով, քանի որ ներք՝ եթէ-ով եւ երբ-ը՝ որ-ով:



Գ. ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՏՈՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ա. Երբ երկրորդական նախադասութիւնը կապուած է գլխաւոր նախադասութեան ստորոգիչին և չի ներկայացնէր պայման մը գործողութեան կատարման, կ'ըլլայ անպատճառ անոր մէկ բացատրութիւնը, կը գտնայ բացատրական նախադասութիւն և կապակցութիւնն ալ բացատրական ստորադասութիւնն:

Բացատրական կապակցութեան զօղող օղակն է որ շարկապը և ունի երկու գործածութիւն: Մասնաւոր գործածութիւն մը՝ կախուած գլխաւոր նախադասութեան կազմէն. և աւելի բնորոշուող գործածութիւն մը պայմանաւորուած երկրորդական նախադասութեան կազմով:

Բ. Գլխաւոր նախադասութեան պահանջով որ բացատրական շարկապին աւելի մասնական գործածութիւններն են.

1. Երբ գլխաւոր նախադասութիւնը այսպէս ըսուած անենթակայ արտայայտութիւն մըն է, այսինքն երբ ենթակայն է «այն բանը», որ ո՛չ կ'ըսենք, ո՛չ կը գրենք. որ շարկապով զօղուած բացատրական նախադասութիւնը կը դառնայ ըստ իմաստի գլխաւոր նախադասութեան ենթակայն: «Անհրաժեշտ է, որ գաս» = «գալիք անհրաժեշտ է. Պէտք պիտի ըլլայ, որ ներկայ ըլլանք երկուքս ալ» = «երկուքիս ներկայութիւնը պէտք է. Հէարկ համարուեցաւ, որ անձամբ տանիմ նամակը» = «անձամբ տանիլս հարկ համարուեցաւ. Ալկինյայտնի եղաւ, որ մէջտեղը դրամ կը խողար» = «դրամ խաղալը ակնյայտնի եղաւ. Հիմա արդէն հասկըցուեր է, որ ամեն ինչ սուտ էր ու կծղծիք» = «սուտ ու կծղծիք ըլլալը հասկըցուած է:

2. Երբ գլխաւոր նախադասութեան ստորոգիչն է ըսել, պատմել, պատասխանել, բացատրել, յայտնել, ենթադրել, մտածել, վճռել, յուսալ, հաւատալ, կամենալ, խնդրել, խոստանալ, ուզել, զգալ, հետնել, և նման հոգեկան գործողութիւններ ցոյց տրուող ներգործական բայ մը, երկրորդական նախադասութիւնը կը դառնայ ըստ իմաստի գլխաւոր նախադասութեան սեռի խնդիրը: «Ենթադրեցի, որ չունի». «Ըսի, որ պիտի գամ». «Մտածեի էր, որ հիւանդ եմ ըլլալու». «Պատասխանեցի որ դալ չեմ կրնար». «Կը յուսամ, որ չմերժէ»:

Այս սեռի խնդիր բացատրական նախադասութեան որ շարկապը միշտ կարելի է փոխարինել քե շարկապով:

3. Երբ գլխաւոր նախադասութեան ստորոգիչը հոգեկան յուզական կամ զգացական վիճակ մը արտայայտող ոչ-ներգործական բայ մըն է, ինչպէս ցաւիլ, ուրախ ըլլալ, գոհ մնալ, զրաբքանալ, վաւերացիլ, վախճալ, դողալ, բաւականալ, զարմանալ և նման սերիչներ, ծրկրորդական նախադասութիւնը ցոյց կու տայ գլխաւոր նախադաս-

սուրբեան հոգեկան զգացական վիճակին պատճառը: «Կը վախնամ, որ երթաս» = վախիս պատճառը երթալդ է: «Ջարմացաւ, որ արդէն քեզի գրած էի»: «Կը դողար, որ յանկարծ կը ժխտեմ» - Սլաստիկ բարկացաւ, որ իր ըսածին պէս չէի ըրած»: «Կ'ամբընար, որ սխալս նկատած կ'ըլլան»: Այսինքն կը վախնամ երթալէդ, կը վարժանայ դրած ըլլալուս, կը դողայ ժխտելէս, կը բարկանայ ուղածին պէս չընելուս համար, կ'ամբընայ սխալիս նկատուելէն: Ըսել է բացատրական այս տեսակ կապակցութեան մէջ երկրորդական նախադասութիւնները բնութեան խնդիրներու դերը կը խաղան:

Ք. Նախորդ երեք մասնաւոր գործածութենէն դուրս ուր-ով զօդաւած բացատրական ստորադասութեան մէջ տիրող ընդհանուր կանոնը հետեւեալն է, ուր վարիչ դեր խաղացողը երկրորդական նախադասութեան կազմն է ու իմաստը:

1. Երբ բացատրական նախադասութեան ստորոգիչը մատչիլ եղանակով է եւ մերկ ձեւով, այսինքն ստորադասական ապառնի կամ ստորադասական վաղապառնի, երկրորդական նախադասութիւնը ցոյց կու տայ գլխաւոր նախադասութեան նպատակը: «Թանձնեցի տղուն, որ տանի»: «Կ'ըջսապեմ, որ մինչեւ իրիկուն հասցընեմ»: «Կը վազէր, որ չոգենաւը չփախցընէ»: «Պիտի վաստկիմ, որ ուտեմ»: «Կը կարէր, որ հագնի»:

Այս պարագային ուր շաղկապի փոխարէն, որ շատ մը դերեր ունենալուն պատճառովը կրնայ իմաստի երկմտութիւն առաջացընիլ, կրնանք գործածել որպէսզի շաղկապը, որ շատ աւելի որոշ ու յստակ է:

2. Երբ բացատրական նախադասութեան ստորոգիչը մատչիլ եղանակով է, բայց ո՛չ մերկ ձեւով. այսինքն երբ վրան կը ունի կամ պիտի կամ դերբայական ձեւ մըն է, երկրորդական նախադասութիւնը ցոյց կու տայ յոյս, սպասում, դիտելութիւն, հաւատք գլխաւոր նախադասութեան մէջ յիշուած գործողութեան: «Դրի սեղանին վրայ, որ տանի» = նպատակն է. «Դրի սեղանին վրայ, որ կը տանի» = այն յոյսով որ. «Կը վազէի, որ հասցընեմ» = նպատակն է. «Կը վազէի, որ պիտի հասցընիմ» = այն ջանքով, այն մտադրութեամբ. «Խնամեցի, որ հանգիստ մեծնայ» = նպատակ - ձխումեցի, որ հանգիստ կը մեծնայ = այն մտածումով որ. «Հաւը անդադար կը կերակրէին, որ գիրնայ» = նպատակ. «Հաւը անդադար կը կերակրէին, թէ պիտի գիրնայ» = ակնկալութիւն:

Հոս ալ ուր շաղկապը կարելի է փոխարինել թէ շաղկապով:

3. Երբ բացատրական նախադասութեան ստորոգիչը մտադիր եղանակով չէ, այլ աւարտ կամ անաւարտ եղանակներու որեւէ մէկ ծաւաճումով, բացատրական կապակցութիւնը ցոյց կու տայ պատճառը, բայց ո՛չ գլխաւոր նախադասութեան, այլ հակառակ կողմէն. գլխաւոր

նախադասութիւնը կը դառնայ երկրորդական նախադասութեան ստորագիշիկն պատճառը: Եւ այս շրջումը ընդգծելու համար գլխաւոր նախադասութիւնը իր վրայ մասնաւոր ուժեղ շեշտ մը կ'ունենայ: «Լա՛ւ կը ծամեմ, որ լաւ կը մարսեմ» = լաւ մարսելու պատճառը լաւ ծամելս է: «Շա՛տ կ'աշխատի, որ միշտ կը յաջողի»: «Ձեռքը մէջէ՛մէջ իւղե՛ր եմ, որ հիմա աչք կը գոցէ բրածիս»: «Կերա՛ր, որ այսպէս կուշտ ես»: «Կանչեցի՛, որ եկաւ»: «Եկա՛ն, որ ոռճիկդ ստացար»: «Եկա՛ր, որ հարցը կարգադրեցաւ»:

Դ. Իսկ եթէ գլխաւոր նախադասութեան մէջ կատարուած գործողութեան պատճառը տալ կ'ուզենք, երկրորդական նախադասութեան սկիզբը կը դնենք բացատրական ստորադասական շաղկապիւր՝ որով. հետեւ, այն պատճառով որ. անոր համար որ. ինչու որ. հարցական ձեւով նոյն դերը ունին չե՞ որ, չե՞ մի որ, ո՞չ ապաքէն: Որովհետեւ իմաստով կը գործածուի նաեւ քանի որ շաղկապը, իբրեւ բացատրութիւն, ո՞չ իբրեւ պայման: «Ժողովը տեղի չունեցաւ, որովհետեւ մարդ շատ քիչ էր եկած»: «Ի՛ր ուղածը մերժեցի, այն պատճառով որ չէի հաւատար իր նշանակած գնիւղ ճշգրտութեանը»: «Ձեռք հաւտար խօսքիդ, ինչու որ յաճախ սուտ կը խօսիս»: Այս բոլորը և նոյն իմաստով կարելի է ըսել և քանի որ շաղկապով:

100. Ընդգծե՛ ստորադասական նախադասութիւններուն շաղկապները. յարաբերականները մեկ գծով. պայմանականները երկու գծով, բացատրականները երեք գծով:

Նոր էի հագուեր, որ դուրս ելլեմ, երբ հիւրեր եկան — Այն տղան, որ երէկ զամբիւղները բերաւ, սխալմամբ փոքր զամբիւղն է թողեր մեզի, մինչդեռ մեծը թողներ պիտի, քանի որ մեծին արժէքն ամ վճարեր հօրը:

Ինչ որ գիտէի՝ պատմեցի իրենց, թէ եւ գիտցածս մեծ բան մը չէր: Եւ խնդրեցի, որ զիջող ըլլան. հասկըցուցի, թէ իրենց օգուտն ալ արդէն այդ կը պահանջէր, որ հաշտարար կերպով վէճը հարթուի — Եղրակացութեան մը գալու չյաջողեցանք, որովհետեւ միտքը դժբեր էր, թէ մեծ չահեր է ունենալու, եթէ ինքը միեակ ձեռնարկէ գործին:

Այնքան թեքուեր էր մակոյկը մէկ կողին վրայ, որ վախցանք. թէ կը շրջի. հորկադրուած եղանք առաջատաները իջեցընելու. և բոլոր ուժով սկսանք թիավարել, որպէսզի մուծը չկոխած ցամաք ելնէք. մուծին այդ ափերը վտանգաւոր են, քանի որ ծովը լեցուն է խութերով, որոնց մէջէն անցնիլը, մոռաւանդ այսպիսի հովի տակ գրեթէ անկարելի է:

Եթէ Սիմոնը գալու ըլլայ՝ ըսէ իրեն, որ իսկոյն վերադառնամ պիտի. եթէ գալու չըլլայ՝ մարդ կը դրկես ետեւէն, որ գայ. թող աչքի առաջ ունենայ, որ ես չգիտեմ այդ գորգալվաճառին տեղը. թող սպասէ, որ միասին հրթանք:

110. Հետեւեալ նախադասութիւններուն ենթակաները ստորագրասա-կան նախադասութիւն դարձնու:

Ներկայութիւնս անհրաժեշտ էր. — Գալդ անխուսափելի դար-ձաւ. — Անհաւանական է իր յաջողութիւնը. — Հարկ կը համարուի դատի դիմելու. — Պատշաճ դատուեցաւ նամակով հրաւիրել. — Ակըն-յայտնի եղաւ ստած ըլլալը. — Գողցած ըլլալը բացուեցաւ:

Պէտք է նստի իմ հոն գտնուիլս. — Պէտք է ներկայութիւննիս. — Պէտք է ներկայութիւնդ. — Պէտք է իր ներկայ ըլլալը. — Պէտք է իրենց ներկայ գտնուիլը. — Պէտք է մեզի ներկաներ:

111. Հետեւեալ նոգեկան գործողութիւն մը անուանող բայերով կազմէ՝ զխաւոր նախադասութիւն մը, որ ունենայ իրեն կից սեռի խնդիր եղող երկրորդական նախադասութիւն մը:

Կը խոստանամ. տեսաւ. ուզեցիր. պիտի ենթադրէ. խնդրեց. ըսաւ. կը պատմէր. հասկըցուցի. զուրցէ՛. կը մտածէի. կը յուսար. վճռեցինք. կ'աղաչէին. կը հաւտայինք. պատասխանեց:

112. Հետեւեալ նախադասութիւններուն երկրորդական նախադաս-ութիւն մը կցէ, որ իր յուզական վիճակին պատճառ բացատրէ:

Յարգելի բարեկամս շատ կը ցուիմ: Գիտեմ, տնօրէնն ալ շատ ուրախ պիտի ըլլար: Եւ ամենքն ալ անխտիր գոհ մնացին: Եթէ գիտնաս թէ մայրիկս ինչքա՛ն ուրախացաւ: Ես ալ բոլոր սրտովս կը վշտակցիմ ձեզի: Մարդը նորէն պիտի բարկանայ: Մեր տան տէրը սաստիկ գրգռուեր է: Բոլոր ունեւորներն սկսեր էին վախնալ: Փե-րեզակը շատ զարմացաւ: Պզտիկները կը դողային:

113. Հետեւեալ նախադասութիւններուն երկու անգամ երկրորդա-կան նախադասութիւն մը կցէ. անգամ մը մերկ մտադիր եղանակով, անգամ մըն ալ չաւելուկաւոր կամ դերբայական մտադիր եղանակով. բովը նշանակէ ստացուած իմաստը:

Կապոցը երէկ իրիկուն ղռնապանին յանձնեցի: Ձեր դռնապանին տըւի նամակը: Ծառան զրկեր էին գրասենեակ: Հաշուապահը շատ կ'ըշտապէր: Խեղճ տղան գիշեր-ցերեկ խառնեց իրար: Եւ այդ գէր մարդը բոլոր ուժովը կը վազէր: Այլիկը ձեռքի խնձորը աղուոր մը մաքրեց: Դերձակունէին մեքենային առջեւ ճինչեւ կէս գիշեր կը կարէր: Առտուն կանոնս ելեր եկեր էր ինծի: Պաղալվաճառը իր ձմե-րուկները շատ գովեց: Մարգիկը ահագին պատրաստութիւն էին տեսեր:

114. Վերի զխաւոր նախադասութիւններուն կցէ՝ աւարտ ու

ամաւառս եղակի ստորագիշներ ունեցող երկրորդական նախադասութիւններ. քովը՝ նշանակե՛ ստացուած խմաստը,

115. Գրե՛ք քանի մը ստորադասական կապակցութիւններ, ուր երկրորդական նախադասութիւնները գլխաւոր նախադասութեան մեջ ըստ լոճի պատճառը բացատրեն:

116. Հետեւեալ ստորադասութիւններէն իւրաքանչիւրին պէտք է նշանակէ, քի ի՞նչ տեսակի է եւ ի՞նչո՞ւ:

Իսկապէս հիւանդի եղաւ, որ չմերժեցիր:— Խելքի մօտիկ չէ, որ հայրս այս իրիկուն վերադառնալ կարողանայ:— Ուղղակի ապացուցիչ է, որ այսքան ոչինչ նպատակի մը համար այնքան բան կը զոհէք:

Կը դարձանամ, ինչու որ բնաւ չէի սպասեր քեզմէ այս տեսակ անվստիք վերաբերում:— Մերժեր եմ, այո՛, այն պատճառով որ զբաղուիմքս հիմա շատ են: Գիտէի, որ չէիք գալու, քանի որ տկար էք:

Պատասխանեցի, որ այդ կարգի հարցերուն պատասխանելու սոսիւրբութիւն չունիմ:— Մարդը ինքնիրենը մտածեր է, որ մեր շրածը խաղ է ըլլալու:— Մենք ամենքս ալ շատ կը փափաքէինք, որ դուք անձամբ հանդէսը բանայիք:

Շատ վշտացեր էր տիկինը. որ իրեն կտրուկ պատասխան մը չէիք տրուած:— Գոհ եղաք անշուշտ, որ ձեր պայմանները նոյնութեամբ ընդունած էինք:— Տղաքը սաստիկ կը վախնային, որ յանդիմանութիւն պիտի լսեն:

Սնունդը պակսեցուցին, որ վիճակը չբարձրանայ: Սնունդը պակսեցուցին, թէ վիճակը չի թեթեւնար: Ետքն ալ անունդը աւելցունել սկսեցին, որ կազդուրուի: Ետքն ալ անունդը աւելցուցին, թէ կը կազդուրուի:

Տղան բերին դէմս, որ հերեմ: Տղան բերին դէմս, որ կը ներեմ: Տղան բերին դէմս, որ չեմ ներեր: Տղան բերին դէմս, որ պիտի ներեմ: Տղան բերին դէմս, որ պիտի չներեմ:

117. Գրե՛ք քանի մը ստորադաս կապակցութիւններ, ուր երկրորդական նախադասութիւնները բլան (ա) ենթակայ, բ) սեռի խնդիր, գ) պատճառը ցոյց տուող բնութեան խնդիր, դ) նպատակը ցոյց տուող բնութեան խնդիր, ե) ակընկալութիւն կամ դիտարկութիւն եղող բնութեան խնդիր:



Հիփոթեքի հասունած

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶՈՒՂՈՒԹՐ

Ա. ԹԵՐԱՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ա. Անշատ նախադասութիւնները, երբ չաղկապներով կը կապուին իրարու, կ'ըստանանք զօդուած նախադասութիւններ, որոնք թէեւ այս կամ այն աստիճանի կախումն ունին իրարմէ, բայց և այնպէս չեն տուած իրենց գոյութիւնը, իբրեւ նախադասութիւն:

Սակայն յաճախ այս կապը աստիճան մը եւս առաջ կ'երթայ, երկու նախադասութիւններէն մէկը իր անկախութիւնը կը կորսնցընէ, այսինքն կը զրկուի իր գիմաւոր բայէն ու կ'երթայ, կը դառնայ միւս նախադասութեան փակած մաս մը: Կ'առաջանայ նախադասութիւններու ձուլում, իբրեւ երրորդ աստիճանը նախադասութիւններու կապակցութեան. կ'ունենանք անշատ յաջորդականութիւն, զօդուած կապակցութիւն և նախադասութիւններու ձուլում:

Նախադասութիւններու ձուլումը կը կատարուի երկու ճամբով. կամ հաւասարադաս նախադասութիւններէն մէկուն ստորոգիչը կը ջնջուի բոլորովին, որով կ'առաջանայ քերութեան նախադասութիւն մը փակած միւս նախադասութեան պոչին. կամ ստորադաս կապակցութեան երկրորդական նախադասութեան ստորոգիչը կը կորսնցընէ իր ղէմքն ու թիւը, կը վերածուի դերբայի, որով կ'առաջանայ կծկուած նախադասութիւն մը հիւսուած՝ գլխաւոր նախադասութեան մէջ:

Բ. Թերատ նախադասութիւն կը գոյանայ հետեւեալ պարագաներուն.

1. Եթէ իրար յաջորդող հաւասարադաս նախադասութիւններուն մէջ ենթական և ստորոգիչը նոյնն են, առաջին նախադասութեան մէջ կը յիշուին, իսկ յաջորդին մէջ սովորաբար կը կրճատուին. ասիկա տեղի կ'ունենայ, եթէ նախադասութիւնները հարցական են, զտրամացական, բացասական կամ շեշտուած: Ձեռքով կը խաբես, ինծի՞, թէ՞ քեզի՞: Ե՛ւ հացը խոստացան իրեն, և՛ բնակարան, և՛ օժանդակու-

թիւն»։ «Թէ՛ սենեակը նորոգել տըւաւ, թէ՛ խոհանոցը և թէ՛ պատըզամբը»։

Նոյն է օրէնքը, երբ խօսակցութեան միջոցին տարբեր խօսողներու խօսքերը իրարու կը հիւսուէին «— Դալո՞ւ է իրիկունը— Դուցէ՛»։ « Դի՞ւղ պիտի երթան— Ո՛չ, փարի՛զ»։ «—Ի՞նչ պատասխանեց— Եւ ո՛չ մի բան»։

2. Եթէ իրար յաջորդող հաւասարադաս նախադասութիւններուն մէջ նոյն ստորոգիչն է տարբեր ենթականերով, երկրորդ նախադասութեան ստորոգիչը չի կրկնուիր։ Իր տեղը բռնէ մը կը դրուի, եթէ նախադասութեան շեշտը կրճատումէն ետքը կու գայ. բութը յզբ-տւիր, եթէ նախադասութեան շեշտը կրճատումէն առաջ է։ «Ես համոզուեցայ իր խօսքին, ընկերս՝ ո՛չ»։ «Ոստիկանը վիրաւորուած էր ուսէն, իսկ իր օգնականը՝ ոտքէն»։ «Մենք ամենքս կ'երթայինք ոտքով, Ժիւան կանայք՝ ձիով»։ «Կա՛մ ես պիտի յանձն առնէի, կա՛մ դուն»։ «Ես գալ չեմ կրնար, գուցէ՛ եղբայրս»։ «Թէ՛ նոր վարձկաները զո՛հ մնացին այդ կարգադրութենէն և թէ՛ տան հին կեցողները»։ «Ե՛ս ալ բան մը դեղջեցի, այդ ժա՛տ անպիտանն ալ, և գործը անուշ չի կապեցինք»։

Նոյն է օրէնքը, երբ երկու խօսող իրենց խօսքերը իրարու կը հիւսեն և իրար յաջորդող նախադասութիւններ կ'առաջանան նոյն ստորոգիչով և տարբեր ենթականերով։ «Ո՞վ էր ներս եկողը— Եղբայրս»։ «Ընկերս Կարեկ չգիտէր։ — Բայց դո՞ւն։ — Ո՛չ ալ ես»։ «— Ո՞վ պիտի բողոքէր— Մի՛նք։ — Դո՞ւք, իրա՛ւն»։

3. Շատ աւելի յաճախ կը կրճատուի էական բայը և հետեւեալ պարագաներուն մէջ։

ա) Էական ստորոգիչը և հետն ալ ենթական կը կրճատուին պարզապէս աշխուժ ու արագութիւն տալու համար խօսքին։ «Դիչեր լուռ ու մութ. կը քալեմ ցեխոտ փողոցներէն. մինակ ու ձանձրոյթ»։ «Ծոցս փոքրիկ տեսրակ մը ունէի, բարեկամի մը նըւէրը»։

բ) Էական ստորոգիչի այս կրճատումը նորէն իր ենթակային հետ կը դառնայ գրիթէ պարտաւորիչ, երբ իրար յաջորդող նախադասութիւններուն մէջ նոյն են ստորոգիչն ու ենթական. բայն ու ենթական կը դրուին ռովորարար առաջին նախադասութեան մէջ։ «Ամենքն ալ հոն էին և բոլորովին պատրաստ»։ «Գրագիրը ներսն էր ու մինակ»։ «Քաջ տղայ ես, բայց ո՛չ համարձակ»։ «Փոքրիկ աղջիկ մըն էր զուռը բացողը, տոգոյն, մաղերը խճուճ»։

գ) Այս նոյն օրէնքի ազդեցութեան տակ, աւելորդ կրկնութենէ խուսափելու համար կը կրճատուին դերբայական ժամանակներուն էական բայերը, երբ բային նոյն ժամանակներն են իրար յաջորդող։ Սովորաբար կրճատումը յաջորդող նախադասութիւններուն մէջ կը

կատարուի, բայց երբեմն ալ ընդհակառակը առաջին նախադասութեան մէջ: Յետոյնա՞ծ էր ու կարմրած»: «Երթալու էի և ամեն ինչ բացատրելու, բայց ժամանակ չեղաւ»: «Երկար-բարակ եղելութիւնը պատմեր էի ես իրեն, պատճառները մատնանշեր և խորհուրդներս տըւեր, մնացածը ինքը գիտէ»: «Ելեր, գացեր է»: «Ի՞նչու ամբողջ գիշերը նստեր, բաներ էի. պէտքի չեկաւ»:

118. Ընդգծե՛ք քերտ ցախադասութիւնները:

Տուն եկայ ուշ և հաղիւ էի նստեր և երկու տող կարդացեր, մէջ մըն ալ տեսար՝ ներս մտաւ մօրեղբայրս և յայտնեց, որ իսկոյն պէտք է երթայ կայարան, ես ալ հետը: Հեռագիր էր ստացեր ու շատ կ'ըշտապէր, իսկ ես՝ բնաւ: Կառք մը կանչել տըւինք, ինքը նստաւ մէջը, ես ալ կառապանին քովը. տղայութենէս մնացած սովորութիւն մը:

Ձիւրը նոյն չափով կը քալէին, լուռ էի, կառապանը նոյնպէս, մօրեղբայրս ալ՝ գրեթէ: Կայարանին առջեւը թէ՛ մեծ բաղմոլթիւն կար և թէ՛ ահագին իրարանցում: Ելանք հարթակը. ի՞նչ շարժում. և այնպէ՛ս կը սիրեմ ես այդ աղմուկը. ե՛ւ աղմուկը ե՛ւ գնացքներուն երթեւեկը. շատ աղուոր բան է ճամբորդելը. ճամբորդե՛լ, ճամբորդե՛լ. նո՞ր, նոր ու հեռո՛ւ, հեռու աշխարհներ:

119. Արագգրե՛ք նոյն՝ քերտ ցախադասութիւնները լրացնելով:

120. Հեծելեալ ցախադասութիւններէն որքան հնար ե՛ ցատեր վերածե՛ք քերտ ցախադասութեան, առանց իմաստի յսակութեանը վրանասելու:

Ես այսօր տկար եմ քիչ մը, գալ չեմ կրնար ձեզի հետ, ո՛չ ալ ընդհանրապէս այդ գործով զբաղուիլ կրնամ հիմա:

Հեռագիրդ որ ստացանք՝ ես հանգստացայ բոլորովին. բայց մայրիկս չհանգստացաւ. ան ամբողջ օրը մտածկոտ էր ու տխուր:

Կիներ տըւած հոռետես զրեր էր թաղարի մը մէջ, վրան թարմ հող էր լեցուցեր, ջրեր էր ու գրեր էր պատուհանին առջեւը արեւին տակ:

Դուն գնա՛. ծառան ալ թո՛ղ երթայ, ես կու գամ գիշերը. քու-րիկս ալ կու գայ ինծի հետ:

Կ'անձրեւէր, սաստիկ հով էր. փողոցները լուռ էին. անցորդ մը հոս կ'երեւար վայրկեան մը, անցորդ մը հոն կ'երեւար վայրկեան մը. և նորէն կը տիրէր ամայութիւն:

Այդ քու ըսած անձը թէև շատ մեծամիտ է ու փառասէր, բայց գէշ մարդ չէ, տխուր ալ չէ:

Յնմրոխին մէկ մասը զինուած էր զանակներով, իսկ մնացածները զինուած էին քարերով ու փայտերով. կային շատեր ալ՝ բալորովին անզէն էին։

Կա՛մ հա պէտք է արտագրեմ այդ թագիթը. կա՛մ գուն պէտք է արտագրես. մէկը վերջապէս կատարելու է այդ գործը և յանձնելու է տիրոջը։

Շարունակ եղունգներդ կը կրծես. ի՞նչ դէշ սովորութիւն է առիկա։ Այդ կարգի գէշ սովորութիւններուն դէմ պէտք է կռուիլ ու պէտք է արմատախիլ ընել։

Մինչեւ հիմա մի՛նք մշակեր ենք, վարիւր ենք, ցաներ ենք այս հողերը և հիմա դո՞ւն կ'ուզես տէր կենաս։

1911. Գրե՛ք քանի մը ճախադասութիւններ, ուր գործածուին ա) կա՛մաւոր կերպով զեղջրած բայեր, բ) ըստ կանոնի զեղջրած բայեր, գ) դերբայական ժամանակներու մէջ զեղջրած բայեր եւ դ) չեզոք ու ցեղագործական զեղջրած բայեր։

Բ. ԿԾԿԸԻԱՍԾ ՈՒ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Թերատ նախադասութիւնէն աւելի սերտ է կծկըւած նախադասութեան ձուլումը գլխաւոր նախադասութեան հետ, որովհետեւ կծկըւած նախադասութիւնը, ո՛չ թէ յաւելուած կտորի մը պէս կը փակչի գլխաւոր նախադասութեան, այլ կը դառնայ ուղղակի անոր մէկ անդամը։

Եթէ երկրորդական նախադասութիւնը միայն ստորագիշ մըն է, անոր կծկումը կու տայ պարզ դերբայ մը, որ կը դառնայ գլխաւոր նախադասութեան մէկ պարզ անդամը, որով ձուլումի արդիւնքը եզոզ նախադասութիւնն ալ կ'ըլլայ սովորական պարզ նախադասութիւն մը։ Ճուն եկայ, որ գրեմ = տուն եկայ գրելու համար»։ «Հաւանական է, որ երթամ = երթալս հաւանական է»։ «Ներկայ չեղաւ, որովհետեւ տկար էր = տկար ըլլալուն համար ներկայ չեղաւ»։ «Յայտնեցի իրեն, որ ստացած եմ = ստացա՛լ ուլալս յայտնեցի իրեն»։

Բայց սովորաբար երկրորդական նախադասութիւնները ա՛յդ էս միայն ստորագիշէ մը կազմուած չեն ըլլար. այլ կ'ունենան իրենց յատուկ ինդիք մը կամ ինդիքներ, մակբայներ ու զանազան տեսա-

կի մակդիրներ, նոյնիսկ տարբեր ենթակայ մը։ Այս պարագային այդ բոլոր բառերը կծկըւած դերբային հետ կ'երթան կը միանան գլխաւոր նախադասութեան, առանց սակայն գլխաւոր նախադասութեան ստորագիծին հետ անմիջական կապ մը ունենալու։ Այդ բառերը կապուած են կծկըւած դերբային և դերբայն է միայն ստորագիծին հետ կապուողը։

Կծկըւած դերբայը գլխաւոր նախադասութեան համար անունի մը դերը կը խաղայ, հոլովուելով ըստ ստորագիծի պահանջին և դառնալով ենթակայ, խնդիր, մակբայ կամ մակդիր։ Իսկ իրեն հետը բերած բառերուն համար կծկըւած դերբայը միշտ կը պահէ իր ստորագիծի արժէքը. այսպիսով կ'առաջանայ նախադասութեան մէջ նախադասութիւն մը. այս մէջէմէջ վիճակն է, որ կ'անուանենք բարդ նախադասութիւն։

Բարդ նախադասութիւնը ուրեմն երկու մասերէ կազմուած ձուլում մըն է. մէկ մասը, որ հիմնականն է, գլխաւոր նախադասութիւնը կը ներկայացընէ. միւս մասը կծկըւած նախադասութիւնն է իր սեփական մէկ կամ աւելի բառերով. և այդ երկու մասերը իրար կապողը կծկըւած դերբայն է, որ երկու մասերուն ալ հաւասարապէս կը պատկանի «Երեկ իրիկուն պատահանէն ինծի հետ խօսողը մեր վարդութեան նոր անդամն էր»։ «Այֆերուդ միջը շիտակ չնայողէն զգո՛ւշ եղիր»։ «Քարոզիչը կը խօսէր ձեռքի գիրքը քրատելէն»։ «Ասոնք ունէին վերջին շոգնաւով ստացած ապրանքներս բոլորովին անպէտք դուրս եկան»։ «Առանց մեր ճաշուպանից հետ նախապէս ճեսկցելու չհեռանաս քաղաքէն»։ «Երկար վերաբերու մը ուսեցուն հետք» պաշտանն կ'իջնէր սանդուղներէն)։

Բագի բուն դերբայներէն, այսինքն անորոշ, անաւարտ և աւարտ դերբայներէն, կծկըւած նախադասութիւն կրնան կազմել, ուրեմն և բարդ նախադասութիւն առաջացընել. նաեւ բայարմատները դերբայի արժէքով։ «Ամէն միջոցներէ զուրկ (շրկըւած)՝ դժբաղդ կեանք մը կ'ուպրէր»։ «Մեր խոսումներէն յուսումնաւ (յուսահատած)՝ դիմեր է ուրիշներու օգնութեան»։ «Կոպիս նկատողութեանդ դժգոհ (դժգոհ մը. նալով)՝ մարդը հեռացաւ գրասենեակէն»։ «Կոյրը իր գաւազանից յնց (յենած)՝ մտաւ ժամուն բակը»։

Երբեմն ալ, երբ խօսքի իմաստէն արդէն ինքնին հասկընալի է, բարդ նախադասութեան մէջ կապ եղող դերբայը պարզապէս կը զեղջըւի, որով կծկըւած նախադասութիւնը կազմուած կը դառնայ, գոնէ արտաքուստ, միայն կծկըւածի մասնաւոր լրացուցիչ բառերէն։ «Կինը ելաւ պարտէզ երեսան գիրկը (բռնած)»։ «Հայեացքի դիմացի ձիւնափառ լեռներուն (շամած) մնացեր էր անշարժ»։ «Աղջիկը ծանր կը թիալարէր երկար գանգուրներ հովերուն (աղւած)»։

կծկումով կազմուած ամեն ձուլուած նախադասութիւն, ըլլալ պարզ թէ բարդ, բաւն դերբայով թէ բայարմատով, միեւնոյն է, միշտ կարելի է վերածել երկու տնջառ կամ զօգուած նախադասութիւններու՝ կծկուած նախադասութիւնը բանալով, այսինքն դերբայը վերածելով դիմաւոր բայի։ Այն մարդը, որ երէկ իրիկուն պատուհանէն ինծի հետ կը խօսէր, մեր վարչութեան նոր անդամն է»։ «Ձեռք հղիր այն անձէն, որ աչքերուդ մէջը շիտակ չի նայիր»։ «Քարոզիչը կը խօսէր ու կը թղթատէր ձեռքի գիրքը»։ «Պաշտօնեան վար իջաւ օտարացիներէն, երկար վերարկու մըն էր նետած ուսերուն»։ «Մարդը դժգոհ մնաց կոպիտ նկատողութենէդ ու հեռացաւ սենեակէն» կամ «Մարդը հեռացաւ սենեակէն, որովհետեւ դժգոհ մնաց նկատողութեանէդ»։ «Աղջիկը երկար մազերը տըւեր էր հովերուն ու ծանր կը թիաւ վարէր»։

122. Ընդգծէ՝ ամբողջ բառն ցախադասութիւնները։

Լսեցի, որ շատ դժի մնացեր իր անուան տարեդարձին օրը իրեն նըւիրած գրքէս։

Հանդիպեցանք իրեն, երբ գործիքները ուսը դրած դուրս կ'ելլէր պարտէզի մեծ դարպասէն։

Շատ չվարանեցաւ և նախընտրութիւնը տըւաւ երկար աշխատանքով և յառուկ իրեն համար պատրաստած նախագծիս։

Այդ առիթով ստորին լուրերը բերնէ բերան տարածողէն ուրիշ ի՞նչ լաւ բան կրնայիր սպասել. որ այդպէս զայրացեր ես։

Մարդկային ձայնը ընդօրինակել կարողացող թռչունները ընդհանրապէս շատ հազուագիւտ են և ընդհանրապէս թռթակի քանի մը տեսակներն են առօրին։

Առանց երկար ծամելու բան ուտելը շատ վնասակար սովորութիւն մըն է, թէն շատ ալ տարածուած։

Ուսուցիչը ոգեւորուած կը պատմէր իր ժամացոյցին ոսկի շղթայի մատին փաթթելով ու քակելով շարունակ։

Առաջ մտադիր էի այդ մարդու բոլոր անհեթեթ առարկութիւններուն հարկ եղած պատասխանը տալու, բայց տեսնելով քու այդ տարօրինակ յուզումդ՝ լռեցի։

Ամեն տեսակի բռնի միջոցով այդպէս ստորագրութիւններ հաւաքելը ի՞նչ օգուտ ունի, ո՞վ պիտի խաբես, մեզի՞ թէ՞ կառավարութիւնը։

Ամեն նստած տեղդ ինքզինքդ գովելը ո՛չ միայն ազնիւ բան մը չէ, այլ ուղղակի ծիծաղելի կը դառնայ մարդ։

123. Արագրէ՛ միայն վերի բարդ ցախադասութիւնները եւ ընդ-
գրծե՛ք միայն կծկրւած ցախադասութիւնները. ցեանախէ՛ք՝ քովը ի՞նչ ան-
դամի դեր խաղալը :

124. Արագրէ՛ ցորեն ցախադ գրածդ՝ բոլոր կծկրւած ցախադա-
սութիւնները բաց ցախադասութիւն դարձնելով :

125. Հեռեւեալ բարդ ցախադասութիւններուն մեջէն դերբայները
գեղջե՛ք :

Խոշոր մատիտ մը ձեռքը բռնած՝ չգիտեմ ի՞նչ կը նկարէր:—
Վայել չէ՛ երիտասարդ մարդուն՝ ձեռքերը ետեւը կապած պատիւը:—
Հաստ ու անշնորհք մատնի մը ցուցամատը անցուցած՝ ասդին, անդին
մատնաւորի չկ'ընէր խօսելու տեղն:— Բազմաթեան մէջ կեցեր էր իր
փառաւոր շքանշանը կախած կրծին վրայ: Գիւղացին մտաւ մարադ
յարդի հսկայ կողով մը շալակը զարկած:— Տեսայ այդ թեթեւօլի-
կը. բարակ գաւազանը թեւին տակ աւած, ձեռնոցները ձեռքը բռնած
և լայն եզերքով գլխարկ մը գլուխը անցուցած՝ մտաւ հիւրանոցի
դռնէն ներս: Խելքը գլուխը եղող մարդ մը պէտք է մեզի:— Իսկ
պալատին առջեւը կեցած էր ձեռքը սուրին դրած պահակ մը:—
Մօտեցաւ մեզի ականոցը խոշոր քթին անցուցած և ապակիներուն մէ-
ջէն ծուռ-ծուռ մեղի կը նայէր:— Կար ու չկար, գլուխը մութ ամ-
պերուն հասած հսկայ մը կտր, որ կը բնակէր մէջքը արեւուն տըւած
լեռան մը փորը:

126. Ընդգծե՛ք կծկրւած ցախադասութիւնները:

Տեսած համակրանքէն շատ դո՛ւ՝ նկարիչը ժպտուն հեռացաւ:
Իսկ իր մրցակիցը տեսածէն ու լսածէն բոլորովին հիասթափ նստած
էր լուռ:

Արդէն մանուկ օրերէն բարձր լեռներու սիրահար՝ հիացեր էր
այդ աննման տեսարանին դէմը:

Խեղճ կի՞նը տարիներէ իվիր վշտակո՞ծ՝ այլեւս ուժ չունէր բաղդի
նոր հարուածներուն տոկալու:

Աչուռնէն իվեր հիւանդ՝ պէտք ունէր քանի մը ամսըւան արձա-
կաւորի, որ և ստացեր է ահա՞:

Բու տըւած յոյսերէդ բոլորովին աներկմիտ՝ տղան ուրախ վազեց
իր դործին: Եւ ուսումը շարունակելու երազով լի՝ շտապեց եղելու-
թիւնը մօրը պատմելու:

Համար չունի անոնց թիւը, որոնք հայրենիքի սիրովը վառ
կեանքերնին նըւէր բերին այս հողին:

Է՛, ձգէ՛ այդ դժբաղդը. միտքը դո՞ւ, ձեռքը դո՞ւ կը քալէ անի-
կա իր տափակ աշխարհին մէջէն:

Մշուշոտ աչքերով կը նայէր մուրացկանը մեզի՝ զարմանքէն
բերանը բաց:

127. Իայարմասները վերի նախադասութիւններուն մէջ փոխարինեց դերբայով մը առանց իմաստն ու շնորհքը կորսնցրնելու :

128. Գրե՛ք բարդ նախադասութիւններ , ուր կ'ծկրւած նախադասութեան առանցքը ա) դերբայ մը ըլլայ , բ) զեղջըւած դերբայ մը ըլլայ եւ գ) բայարմաս մը ըլլայ :

129. Ինչո՞ւ համար ստորադաս կապակցութեան մէջ երկրորդական նախադասութիւնը յաճախ գլխաւորէն առաջ կ'անցնի :

130. Ի՞նչ տարբերութիւն ունի թերատ նախադասութիւնը կըծկրւած նախադասութենէն :

131. Ինչո՞վ կը տարբերի բարդ նախադասութիւնը երկուր նախադասութենէն և թերատ նախադասութիւնը կարճ նախադասութենէն :

132. Ի՞նչ տեսակի կապակցութեան մէջ կրնայ առաջանալ թերատ նախադասութիւն . և ի՞նչ տեսակի կապակցութեան ծնունդ է կ'ծկրւած նախադասութիւնը :

133. Երկրորդական նախադասութիւնը գլխաւորի հանդէպ ի՞նչ աւ ի՞նչ անդամի դերք կը խաղայ . օրինակներով :

134. Բնաւ կը պատահի՞, որ գլխաւոր նախադասութիւնը դարձած ըլլայ երկրորդական նախադասութեան մէկ անդամը :

135. Ի՞նչ բան է պարբերութիւնը . ինչո՞վ , կը տարբերի զօդաւած կապակցութենէն :



Վեցերորդ հասուած

Կ Է Տ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. Խօսքի ու գրութեան մէջ նախագասութիւնները, ինչ տեսաւ
կի ալ կ'ուզեն ըլլան, երբ իրարու կը յաջորդեն միշտ որոշ խմբաւո-
րում մը ունին ըստ իմաստի. որոշ վիճակ մը կամ եղելութիւն մը կը
լուսաւորեն զանազան կողմերէն:

Աւելի կամ նըւազ երկուր խումբ մը իրար յաջորդող նախագա-
սութիւններու, որոնք իրարու իմաստ կը լրացնեն, իրար կը ման-
րամասնեն և իբրեւ իրարու հետ կապ ունեցող ամբողջութիւն մը
կ'ըզգացունին, կ'անուանենք սլարքեիսթիւն:

Գարբերութիւնը դատումի ու զգացումի հետ կապուած ըմբռ-
նում մը ըլլալով՝ քնականաբար հաստատ կազմութիւն մը չէ. նա-
խագասութեան և նախագասութիւններու զօդումին նման որոշ օ-
րէնքներ չունի. շարադրական միացում մըն է, ո'չ քերականական,
ո'չ լեզուական:

Երբ պարբերութիւնները կենդանի շրթունքներու վրայ բանաւոր
կերպով կը հիւսուին՝ մենք մեր ձայնին ելեւէջներովը, շեշտերովը,
ձայնին կախումովը, կարճ ու երկար ընդհատումներովը, հարցի, զար-
մանքի, արգելքի, հագնանքի ձայնական խաղերովը օգնութեան կու
գանք բառերու մեր ուզած ձեւովը ըմբռնընկելուն և մեր ուզած ձե-
ւովը իրարմէ զատուելուն:

Գրութեան և ընթերցման ժամանակ բառերը դուրկ կը մնան այս
բոլոր կենդանի ու անձնական տարրերէն, ինչպէս և դէմքի, աչքե-
րու ու ձեռքերու նուրբ ու կօպիտ օժանդակ աշխատակցութենէն. և
այդ պատճառով ալ միեւնոյն գրուածքը շատ ու շատ տարբեր կեր-
պերով կրնանք կարդալ, տարբեր իմաստներ առլ, շատ անգամ բո-
լորովին իրարու հակադիր ու հակասող:

Այս կարգի դիւր ու տարբեր ըմբռնումներէ հնար եղածին չափ
խուսափելու և ընթերցողը հեղինակի ցանկացած ուղիներով վարելու
համար՝ գրութիւնը կը դիմէ քանի մը պայմանական միջոցներու:
Այդ միջոցներն են՝ առողջանութեան նշանները, գլխադրի գործածու-
թիւնը և կէտերը:

Բ. Կէտերը կը գործածենք բառերն ու նախադասութիւնները ի իրարմէ վատելու, ձայնի կախումներուն և ընդհատումներուն տեղը և չափը ճշգրտու համար :

Հայերէնի մէջ գործածուող կէտերը վեց հատ են . վերջակէտ, միջակէտ, ստորակէտ, բուծ, բազմակէտ և տպադարձ :

1. Վերջակէտ (.) պարբերութիւնները իրարմէ զատող նշանն է : Պարբերութիւններուն մէջն ալ իրենք իրենցմով տմբողջութիւն մը կազմող նախադասութիւնները միւսներէն զատող նշանն է :

Վերջակէտը ամենէն երկար դադարն է ընթերցման միջոցին :

2. Միջակէտ (·) ինքն է իսկապէս պարբերութեան մէջ նշանը նախադասութիւնները մէկ երկու խումբի վերածող նշանը . և տարբեր համար ալ վերջակէտի հետ յաճախ պէճի մէջ է . ճաշակի ու ըմբռնունքի հարց է շատ անգամ մէկը կամ միւսը դնելը :

Ո՛չ վերջակէտի չափ երկար , բայց ձայնի հանգիստ դադար մըն է միջակէտը :

3. Ստորակէտ (,) գլխաւորապէս երեք գործածութիւն ունի .

ա) Կը գատէ իրարմէ նախադասութիւնները, որոնք զօդուած են իրարու շաղկապով մը միայն եւ շաղկապն է, որուն առջեւը ստորակէտը սովորաբար կը դեղջըւի :

բ) Կը գատէ միջանկեալ բառերը, բացականշուածութիւններն ու դիմառնութիւնները, որոնք մտած են նախադասութեան մը կամ երկու նախադասութեան միջեւ :

գ) Կը գատէ իրարմէ միեւնոյն նախադասութեան մէջ գտնուած մէկէ աւելի նման սինգամները . մէկէ աւելի ենթակաները, նոյն տեսակի խնդիրները, նոյն հոլովի մակբայները և նոյն տեսակի մակագիրները : Եթէ նոյն տեսակի եզոյղ անդամները երկուքէն աւելի են վերջին տարակէտին տեղը սովորաբար եւ կամ ու կը դրուի :

Ընթերցման տառն ստորակէտին վրայ ձայնը կախում կ'ըստանայ :

4. Բազմակէտ (···) կը դրուի նախ՝ երբ նախադասութիւնը կէս կը մնայ ու միտքը չի լրանար, կամ չլրացուած կը ձեւացուի . և երկրորդ՝ երբ ըսուած բանին խորհրդաւորութիւն մը, խորութիւն մը տալ կ'ուզուի :

5. Ապադաւորը (') կը դնենք բառին մէջ կրճատուած ձայնաւորին տեղը մատնանշելու համար :

Նախ՝ աւարտ եղանակի կը յաւելուկին մէջ, երբ վերջինս ձայնաւորի մը առջեւ կ'իյնայ . «կ'արթննար, կ'ողջունեմ, կ'երթար» :

Երկրորդ՝ մը անորոշ յօդին մէջ, երբ ձայնաւորով սկսող բառի մը առջեւ կ'իյնայ և երբ մըն ըսել չենք ուզեր «տղայ մ'է» . «տովորութիւն մ'անպիտան» . «կին մ'ալ» :

Երրորդ՝ մի՛ արգելականին մէջ, երբ ձայնաւորով սկսող բառի

մը առջեւի ինչ կը կրճատենք. «մի՛ առներ == մի՛ առներ». մի՛ ուս-
տեր == մի՛ ուստեր». «մի՛ իյնար ետեւէն == մի՛ իյնար»:

Գ. Քիչ մը աւելի բարդ է վեցերորդ կէտի գործածութիւնը. որ
բութ (') կ'անուանենք:

1. Բացայայտիչ մակդիրները բութով կը զատուին իրենց մակ-
դիրութենէն, եթէ բացատրական շաղկապ մը չունին իրենց սկիզբը.
եթէ բացատրական շաղկապ մը ունին՝ այսինքն կամ օրինակ, ստորա-
կէտ կ'ըստանան և աւելի թերտ նախադասութեան մը տպաւորու-
թիւնը կ'ընեն: Անբա մտաւ պարոն Յակոբեանը՝ մեր ուսուցիչը.
անբա մտաւ պարոն Յակոբեանը, այսինքն մեր ուսուցիչը. «Թող
ներս գայ ուսուցիչ մը, օրինակ պարոն Յակոբեանը»:

2. Բութով կը զատուի այն բառը, որուն ետեւէն կու գայ իր
մասերուն թըռումը: «Մակրայները երկու տեսակ են՝ որակական ու
ժամանակի»:

3. Բութով կը զատուին իրարմէ զօգուած նախադասութիւննե-
րը, եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւորին առջեւն է ան-
ցած. «Եթէ կ'ուզէ՝ թող գայ». «Քանի որ իր ուժերէն վեր էր՝ պէտք
չէ յանձն առներ». «Որ պիտի երթաս՝ ինչո՞ւ չեմ ու չում կ'ընես»:

4. Բութով մը կը զատուին իրարմէ զօգուած ու կոնկրետ
դասաւորուած նախադասութիւնները, երբ իրենց միացընող շաղկապը
գեղջըրի. «Տեսայ, որ ոչինչ չէ օգնելու» = «Տեսայ՝ ոչինչ չէ օգնե-
լու». «Ըսի, թէ տկար է դեռ» = «Ըսի՝ տկար է դեռ». «Քեզի չգրե-
ցի, որովհետեւ անձամբ գոյի պիտի» = «Քեզի չգրեցի՝ անձամբ գո-
յի պիտի»:

5. Բարդ նախադասութեան մէջ կծկըւած մասը, եթէ մակրայ
է, բութով մը կը զատուի գլխաւոր մասէն. «Այդ բոլոր նըւէրները
թեւին տակ դրած՝ ուրախ-ուրախ դուրս եկաւ վաճառատունէն»:

6. Ամեն մակրայ, որ անունի մը առջեւը իյնալով կրնայ անոր
մակդիրը նկատուիլ, մաքի չփոթութիւն չպատճառելու համար իր վը-
րայ բութ մը կ'առնէ. «Եւ ուրախ՝ մարդը վազեց պատշգամէն ներս»:
Այսպէս ալ երբ մակդիր մը նախորդ թէ յաջորդ բառին պատկա-
նիլը խնդրի նիւթ կրնայ դառնալ, բութով մը կը լուծենք երկմտու-
թիւնը. «Անգիտի կերպարանք մը սեւ ձիուն վրայ նստած (սեւ ձի)».
«Անգիտի կերպարանք մը սեւ՝ ձիուն վրայ նստած (սեւ կերպարանք)»:

7. Թերտ նախադասութիւններու մէջ կը ճատուած ստորոգիչին
տեղը բութ մը կը պնենք, եթէ նախադասութեան շնչաբ իրմէ ետքը
կը մնայ. «Տղաք իջան պարտէզ, իսկ աղջիկները՝ բա՛կը». «Շատ
կը սիրեմ անոր տղաքը, իսկ աղջիկը՝ ընա՛ւ». «Անոնք հեծան իրենց
ձիերը, մենք ալ՝ մեր էշերը»:

136. Արագրե՛ հեճեւեալ հասուածը զնելով հարկ ելած կէտերը, առողջանութեան նշանները, գլխագրերը. դի՛ր վերնագիր եւ պէ՛տ եղած ձեղերը անցի՛ր նոր տող:

Կոյրերը ջերմ սիրահար են երաժշտութեան երաժշտութիւնը. ա- նոնց բերկրանքն է կեանքն է մինչեւ անգամ փոքրիկ երեխաները ժամերով պատրաստ են ոտքի վրայ մնալու որ երաժշտութիւն լսեն նրաաքելը դիւրին կը սորվին կը նրաաքեն եռանդով եթէ ուսուցիչը մէկուն ըսէ թէ նրաաքելու շնորհ չունի սաստիկ կը տխրի բայց և այնպէս կը շարունակէ սորվիլ մեծ ջանքով մարդ պէտք է տեսնէ կոյրի նրաաքելը դաշնակ կամ ջութակ զարնելը զլուխը բարձր բռ- նած ժպտը շրթունքին երեսը վառ խեղճը յուզումէն կը դադայ հիա- ցած ականջ կը դնէ իր հանած ձայներուն որոնք կը փռուին շրջա- պատող խաւարին մէջ մարդ պէտք է տեսնէ հասկընալու համար թէ ինչ սքանչելի աստուածային սփոփանք է երաժշտութիւնը կոյրը եր- ջանիկ է կը ցնծայ կը բերկրի հրճուանքէն երբ վարժապետը ըսէ ա- նոր դուն արուեստագէտ ես ով երաժշտութեան մէջ առաջինն է ա- ռաջին ջութակահարը առաջին դաշնակահարը թագաւոր է անոնց մէջ որուն առջեւ կը խոնարհին ամենքը կը պատկառին կը պաշտեն թիւ յիմացութիւն մը պատահի թէ չէ անոր խորհուրդին կը դիմեն ընկերները իրարու մէջ երբ սրտողին ան է հաշտարար հանդիսացողը անիկա հայր մը կը դառնայ փոքրիկներուն որոնց երաժշտութեան դաս կու տայ ամեն իրիկուն պառկելէն առաջ կ'երթան անոր քովը գիշեր բարի ըսելու կոյրերու խօսակցութեան սիրելի առօրեայ նիւթը երաժշտութիւնն է գիշերները անկողնի մէջ պառկած դասերէն ու օր- ուան աշխատանքէն բոլորովին յոգնած անոնք դարձեալ մեղմ կը զրուցեն իրարու հետ երաժշտագէտներու օփերաներու նրաազարանե- րու ու նրաախաւարներու մասին անոնց համար ամենէն մեծ պա- տիժը երաժշտութեան դասէն զրկուելն է այն աստիճան ծանր գրկանք մը որ այդ պատիժը բնաւ չեն ալ տար կոյրին համար երաժշտու- թիւնը նոյնն է ինչ որ լոյսը մեզի համար:

137. Դի՛ր կէտերը, նշանները, գլխագիր, նոր-տող ու վերնագիր:

Պզտիկ էի հազիւ տասներեք տարեկան բայց լաւ կը յիշեմ որ այն իրիկունը հայրս զայրացած տուն վերադարձաւ այգիէն քաշելով իր հոտէն փոքրիկ հորթի պարանէն և կանաչ թարմ խոտի կոյտ մը թեւին տակը ան մտաւ բակը խորհրդաւոր լռութեամբ և խոտը դրաւ վար մօտեցաւ սրահի թումբին ու նստեցաւ փայտն ու գլխարկը դը- նելով քովը մայրս կովկիթը կը լրւար սպասելով կովերուն որ թէ իսկ ես աչքս չէի հեռացներ հորմէս անհանգիստ էր ան քանի մը ան- գամ ճակատը չփեց դարձաւ մեծ քրոջս աղջի թորոսը այս առտու կո- վերը որ կողմէն դաշտ տարաւ այգիի կողմէն թէ նախրի ճամբով

չգիտեմ հայրիկ առտուն երբ քաղհանի կերթոյինք ան մեզմէ տառջ քշեց գիւղէն դուրս ելաւ չհասանք անոր ան միշտ այգիի կողմէն կը տանի րացականչեցի ես այնպէս առանց մտածելու թէ իմ ըսածս կըրնայ ըսնի մը ծառայել նգովից արմատը ան է միշտ ան է ուրիշ ով պիտի ըլլայ մրմռաց հայրս ու լոեց թորոսը իմ խորթ եղբայրս էր հարս առաջին ամուսնութենէն մնացած միակ տղան ես ու քոյրերս մեր ամենաթարմ հասակէն տեսեր էինք անիկա միշտ լուսկեաց մը-ռայլ մտածկոտ ու յամառ ինքը չէր սիրած մեզի մենք ալ ինքը չէինք սիրած ան հիմա արդէն տասնըեօթը տարեկան էր բայց դարձեալ թախծոտ ու լուսկեաց դարձեալ անմասն ընտանեկան կեանքին դարձեալ առանց սիրոյ ու մենաուր ինչու չէինք սիրեր չգիտեմ մեզի երբեք գէշ բան մը չէր ըրած գուցէ ճիշդ այդ պատճառով որ միշտ լուռ էր ու իր այդ լուռութեան տակ կարծես խորհին արհամարանք մը կար դէպի մեզի հայրս ան չէր սիրեր որովհետեւ յամառ էր միշտ մուռլ և երբեք մարդու երեսին շիտակ չէր նայեր գլուխը կախ տղայ է մանկուց այդպէս է կըսէր ան տեսակ մը ցաւով և կաւեցնէր որ զլուսը կախ մարդիկը միշտ կասկածելի են:

188. Դի'ր կեսերը, առողափութեան հեանքերը, զլիսագրերը, նոր օուրեր եւ վերնագիր:

Վերջապէս մեր իշուկը կը հասնի տուն բոլորովին ուժասպառ որքան բեռը կիջեցնեն այնքան չունչ կը քաշէ քիչ մը դարման կը նետեն առջեւը որ ուտէ հողիւ մէկ երկու բերան կը հախտէ կերէն որ ետ կը քաշաւ սրտեղած երեխայի նման որովհետեւ դարմանը կամ խոնաւ է կամ փոշոտ խոտն ալ փուշերով լեցուն որ ուտելու ատեն կը տաշէ բերանը մէկ երկու ժամէն ջուր կու տան անոր որու վրայ կը նետուի միշտ նոյն ագահութեամբ և կը լեցընէ դարման փորը հիմա ակորժակը աւելի կը բացուի բայց միշտ նոյն կերն է առջեւը որ աւել չուզէ պիտի ուտէ հենց որ փորի հոգը կը վերջանայ կրակսին անհանգիստ ընել մէկ կողմէն իշտանճերը իսկ միւս կողմէն ականջներուն մէջ հաւաքուած միջատները ինչպէս և փորին ու ատքերուն փակած ցեխի փրթուքը և մանաւանդ փայտին հարած տեղերը այսինքն անոր ամբողջ մարմինն է որ կը քերուի ինչ ընէ խեղճ կենդանին որ ազատուի լեզու չունի թէ իր վիճակը մարդոց հասկըցնէ ձեռքեր չունի որ ինքը քերէ շատ-շատ կը յաջողի միայն ակունքովը առջեւի ոտքերն ու գաւակը գրիելու ուր որ դուռը կը հասնի այլ և պոչը չարժեղով ճանճերը փախցընելու իսկ ինչ ընէ մնացած մասերը հապա փորը ոտքը եթէ զուայ կանչէ ականջ դնող չկայ տէրը չի գար որ մաքրէ այնպէս որ ճարահատած կը չօքի թըրմը կ'իյնայ կոշիկին վրայ ու թաւալ կու տայ սակայն վայ իրեն եթէ տէրը այդպիսի դրութեան մէջ վրայ հասնելու ըլլայ ինչու որ դարձեալ անիրաւ դա-

Գանահը կիջնէ գլխուն ըստ չափ հեղ ալ կը պատահի որ մեր մոխ-
րաթաւալը երբ կուզէ ռաքի ելլէ այ քեզի բան վաւանը կը շրջի որ
կիյնայ փորին տակը ամբողջ ժամերով խեղճը ստիպուած է այդպէս
անշարժ մնալու մինչեւ որ տէրը օգնութեան հասնի թէեւ հոտ ալ
գործը առանց մէկ երկու հարուած ռաւելու չի վերջանար

139. Ընդգծե՛ 136րդ բլուի կոյրերու պատմութեան մեջ բոլոր զոդ-
ուած հաւասարադաս կապակցութիւնները:

140. Երկրորդ գիծ մը բաւէ հակադրական նախադասութիւններուն
օակ. մէկ գիծով պիտի մնան միայն համադրական նախադասութիւն-
ները:

141. Կոյրերուն պատմութիւնը ամբողջապէս վերածե՛ անջատ յա-
ջորդականութեամբ նախադասութիւններու:

142. Ընդգծե՛ 137րդ բլուի Թորոսի պատմութեան մեջ բոլոր զոդ-
ուած հաւասարադաս կապակցութիւնները:

143. Երկրորդ գիծ մը բաւէ՛ հակադիր զօդումներուն օակը:

144. Կոյրերու եւ Թորոսի պատմութիւններուն մեջե՛ն առանձին առ-
ճագրե՛ բոլոր ստորադաս կապակցութիւնները, ամեն մէկը նոր օպէ:

145. Նախորդի վրայ մէկ գծով կ'ընդգծես յարաբերական նախա-
դասութիւնները, երկու գծով պայմանականները:

146. Վերի արագրութեանդ վրայ բացատրական նախադասու-
թիւններուն ետեւը կը նշանակես ամեն մէկուն ո՞ր տեսակը ըլլալը:

147. Թորոսի պատմութիւնը ամբողջովին վերածե՛ անջատ նախա-
դասութիւններու յաջորդականութեան:

148. Առանձին արձագրե՛ 138րդ բլուի իշուկի պատմութեան բոլոր
հաւասարադաս կապակցութիւնները ամեն անգամ նոր օպէ եւ վերջը
հովը կը նշանակես ո՞ր խմբին պատկանիլը:

149. Նոյն պատմութեան առանձին կը խմբես բոլոր ստորադաս
կապակցութիւնները ամեն մէկը նոր օպէ եւ հովը կը նշանակես տե-
սական ու խումբը:

150. Իշուկի պատմութիւնը վերածե՛ ամբողջովին անջատ նախա-
դասութիւններու:

151. Երեք պատմութիւններէն առանձին կը ժողովես բոլոր բերաս
նախադասութիւնները իր կապակից նախադասութեան հետ եւ հովը փա-
կազծի մեջ կը լրացնես:

152. Երեք պատմութիւններէն առանձին կ'արձագրես բոլոր բարդ
նախադասութիւնները:

153. Կ'ընդգծես նախորդ արձագրութեանդ վրայ բոլոր կծկրած
նախադասութիւնները եւ փակագծի մեջ կ'առնես դերբայը, եքէ կարե-
քի ե գեղջիլ:



ՉՈՐՍ ՊՐԱԿՆԵՐՈՒՆ

ՐՆԴԷԱՆՈՒՐ ՅԱՆԿԸ

ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ

ԲԱՌԵՐՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՔՈՒՄԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ — ԲԱՌԵՐՈՒՆ ԿԱԶՄՆ ՈՒ ԹԵՔՈՒՄԸ

- Ա. Հնչիւն ու տառ (3-5)
- Բ. Վանկ (7-9)
- Գ. Արմատ ու մասնիկ (10-11)
- Դ. Անուն ու բայ (12-15)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԿԱՆՈՆԱԻՐ ՀՈՆՈՎՈՒՄ

- Ա. Եղակի ու յոգնակի (19-20)
- Բ. Չորս հորով (22-23)
- Գ. Սղում ու հնչալում (24-27)
- Դ. Անորոշ ու որոշիչ յոգերը (29-31)
- Ե. Դիմորոշ յոգ (32-34)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԲԱՅԵՐՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԻԵՐԸ

- Ա. Բայերուն բունն ու վերջաւորութիւնը (37-39)
- Բ. Դերբայներուն հորովումը (40-41)
- Գ. Բայական ձեւերուն թիւն ու դէմքը (43-44)
- Դ. Արտայայտութիւնն չորս եղանակ (45-46)
- Ե. Բայերուն ժամանակները (48-50)

ՅՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

- Ա. Ապառնի ժամանակ (54-55)
- Բ. Վաղապառնի ժամանակ (57-59)
- Գ. Ներկայ և անկատար ժամանակներ (61-62)
- Դ. Կատարեալ ժամանակ (63-64)
- Ե. Յարակատար ու վաղակատար (66-68)
- Ձ. Բուն հրաման, չեղ հրաման (69-70)
- Ե. Համադրում (71-73)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

- Ա. Նախադասութիւն (76-78)
- Բ. Ստորոգիչ ու ենթակայ (80-81)
- Գ. Ստորոգիչի ու ենթակայի համաձայնութիւնը (83-85)

ՇԵՂՈՒՄՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵԳՈՒՄԷՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ — ՀՈԼՈՎԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

- Ա. Միայն եղակի տրականի մէջ (3-4)
- Բ. Տրականի ու բացառականի մէջ (4)
- Գ. Երեք հոլովներու մէջ (5)
- Դ. Յոգնակի հոլովման մէջ (5-6)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ

- Ա. Դերանուն (8-9)
- Բ. Անձնական ու ցուցական դերանուններ (11-13)
- Գ. Ստացական դերանուն (15-19)
- Դ. Բաղդատական ու տեղական դերանուններ (21-22)

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԽՈՆԱՐՄԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

- Ա. Մասնակի շեղում (24-25)
- Բ. Ուժեղ խոնարհում (25-26)
- Գ. Երկրուն խոնարհում (26)
- Դ. Պակասաւոր բայեր (26)
- Ե. Կը-ի շեղումները (27)

ՋՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԲԱՑԱՍԱԿԱՆ ԽՈՆԱՐՄՈՒՄ

- Կանոնները (30-34)
- Բացասական բայի մը լրիւ խոնարհումը (37)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՄԻՋՆԱԴԻՐ ԲԱՅԵՐ

- Ա. Անցողակերպ (38-39)
- Բ. Կրաւորակերպ (40-42)
- Գ. Կրկնակերպ (43-44)

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԲԱՅԵՐՈՒՆ ՍԵՌԸ

- Ա. Հինգ սուռ (46-48)
- Բ. Զեղոք, ներգործական, կրաւորական (50-52)
- Գ. Ներգործական ու անցողական (53-57)

ԵԾՅՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԽՆԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՆԱԽԱՄԱՍՈՒԹԵԱՆ

- Ա. Սեռի խնդիր (59-61)
- Բ. Ուղղական հոլով բնութեան խնդիր (63-64)
- Գ. Տրական հոլով բնութեան խնդիր (66-68)
- Դ. Բացառական ու գործիական բնութեան խնդիր (71-73)

ՈՒԹՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԳՐՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ

- Ա. Յատուկ անուն (78-79)
- Բ. Գլխագիր (81-82)
- Գ. Առողջանութեան նշաններ (82-84)

ԵՐՐՈՐԴ ՊՐԱԿ

ԼՐԱՑՈՒՄԸ ԲԱՌԱԹԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ — ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԿՑՈՐԴՆԵՐԸ

- Ա. Կցորդ (3-5)
- Բ. Տրական հոլովին կցորդները (8-11)
- Գ. Միւս հոլովներուն կցորդները (13-14)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԴԻՄԱԶՈՒՐԿ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ա. ձախարհական ու խոխարհարձ զերանուններ (17-19)

Բ. Անթառոյ ու հաւաքող զերանուններ (20-23)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԱՍՈՅԹԱՅԻՆ ԲԱՅԵՐ

Ա. Բունական ասոյթներ (25-27)

Բ. Անունական ասոյթներ (28-30)

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԲԱՂԱԴԻՐ ԲԱՅԵՐ

Ա. Անորոշ զերբայով (32-35)

Բ. Աւարտ ու անաւարտ զերբայով (36-38)

Դ. Կրկնարաւագիր բայեր (39-40)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՅ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ա. Որական մակրայ (42-44)

Բ. Ժամանակի մակրայ (47-48)

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԱԿԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ա. Որական մակրի (51-53)

Բ. Բանական մակրի (56-58)

Դ. Յատկական մակրի (59-61)

Դ. Պատկանիչ յօդ (64-66)

ԵՅԹՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ա. Շաղկապներ (68-70)

Բ. Զայնարկներ (72-74)

Նախադասութեան անդամներուն համադիր պատկերը (76-77)

ԶՈՐՐՈՐԴ ՊՐԱՅԻ

ԼՐԱՅՈՒՄԸ ԲԱՌԱՆԻՍՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ — ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Ա. Նիւթական գոյականներ (8-6)

Բ. Վերագական գոյականներ (8-11)

Դ. Գործողութեան գոյականներ (13-17)

Դ. Ածական անուն (20-23)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՏԵՂՆ ՈՒ ՇԵՏԸ

Ա. Երեք անհրաժեշտ անդամներուն զիրքը (27-31)

Բ. Վերագիր անդամներուն զիրքը (32-35)

Դ. Նախադասութեան շէշը (37-39)

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՍԱՐԱԴԻՍ ԿԱՊԱՅՈՒՄԸ
Կանոնները (42-44)

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԱԴԱՍ ԿԱՊԱՅՈՒՄԸ

Ա. Յարարիական ստորադասութիւն (48-51)

Բ. Պայմանական ստորադասութիւն (54-55)

Դ. Բացարարական ստորադասութիւն (57-59)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԶՈՒԼՈՒՄԸ


Ա. Թերաւ նախադասութիւն (62-64)

Բ. Կծկրած ու բարդ նախադասութիւն (65-67)

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ — ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Կանոնները (70-72)








ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0069360



A III
3871